



Զիաց Մեր Հանապազորդ

ՀՈՒՆՎԱՐ • ՓԵՏՐՎԱՐ • ՄԱՐՏ 2019



Խորհուրդը խոր ջուր է մարդու սրբում, բխող
գեպ է – կյանքի աղբյուր: Առակներ 18.4

Հարգելի բարեկամ

Սույն գրքույկում Աստվածաշունչ գրքի Հին Կտակարանի բաժնի մեջբերումներն արվել են Աստվածաշնչի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած արևելահայերեն թարգմանությունից (2007), իսկ Նոր Կտակարանի մեջբերումները՝ Հայաստանի Ավետարանական եկեղեցիների միության և Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած Նոր Կտակարանից (2003):

Շապիկի առաջին էջին՝ Տիրանավոր Աբ. Աստվածածին եկեղեցի Տիրանավոր Աբ. Աստվածածին եկեղեցին հիմնադրվել է 7-րդ դարում, գտնվում է Շիրակի մարզի Մայիսյան գյուղում: Եկեղեցին պատմամշակութային մեծ արժեք ունի:

Մայիսյան գյուղը գտնվում է Գյումրիից 6 կմ հեռավորության վրա: Գյուղը նախկինում կոչվել է Շարաթիլ՝ ի պատիվ Շարա իշխանի, որը հիմնել է գյուղը 7-րդ դարում:

Հետագայում թուրքերի կողմից այն վերանվանվել է Օրթ աքիլիսա, որը նշանակում է՝ եկեղեցին գյուղի կենտրոնում:

Մայիսյան ապստամբության ղեկավարները թաքնվել են գյուղի եկեղեցում, այդ պատճառով գյուղը վերանվանվել է

Մայիսյան:

Թուրքական ջարդերի ժամանակ եկեղեցին ավերվել է: Վերանորոգումները սկսվել են 1983-ին և տևել շուրջ երեք տարի: Այժմ եկեղեցին գործում է:

(www.shirak.agro.am)

Լուսանկարը՝ Լարա Գայսերեան
Փենսիլվանիա, Միացեալ Նահանգներ
Lara Kaiserian, PA, USA



Ջիաց մեր հանապազորդ

ՀՈՒՆՎԱՐ, ՓԵՏՐՎԱՐ, ՄԱՐՏ 2019

Աստվածաշնչի ամենօրյա անձնական և ընտանեկան
ընթերցումներ և հոգևոր խորհրդածություններ

Լ ՏԱՐԻ

Ա. ԵՌԱՄՍԾԱԿ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible
Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread
գրքույկից թարգմանել ենք հաջորդ էջերի
խորհրդածությունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am

Նոր տարի, նոր նախապատվություններ

Միշտ ցանկություն եմ ունեցել թավջութակ նվագել, սակայն երբեք ժամանակ չեմ ունեցել դասընթացի հետևելու: Կամ ավելի ճիշտ պիտի լինի ասել, թե ժամանակ չեմ գտել այդ ցանկությունն իրագործելու: Մտածում եմ, թե երկնքում լավ թավջութակ նվագող պիտի կարողանամ լինել: Մինչ այդ ցանկացել եմ կենտրոնանալ ու ժամանակս գործածել այլ հատուկ ձևերով և Աստծո տված կոչի համաձայն՝ Իրեն ծառայել:

Կյանքը կարճ է, ու մենք հաճախ երկրի վրա մեր ունեցած ժամանակի մեջ մեր լավագույնն անելու ճնշումն ենք զգում, նախքան այն կորցնելը: Սակայն ի՞նչ է նշանակում այդ բանը:

Սողոմոն թագավորը կյանքի իմաստին երկու հանձնարարականներ է տալիս: Առաջին՝ մեր կյանքը իմաստալից կերպով պիտի ապրենք, որ պարունակում է մեր կյանքի մեջ Աստծո տված բարի բաների հաճույքը վայելել՝ ուտել ու խմել (Ժող. 9.7), հագուստ և հոտավետ յուղ գործածել (Հմ. 8), ամուսնություն (Հմ. 9) ու Աստծո տված բոլոր բարիքները, որը կարող է պարունակել թավջութակ նվագելը: Նրա երկրորդ հանձնարարականը փութաձյան աշխատանքն է (Հմ. 10): Կյանքը զանազան առիթներով է լեցուն, ու միշտ հնարավորություն կա ավելին անելու: Աստծո տված պատեհությունները պիտի օգտագործենք՝ Իր իմաստությունը խնդրելով, թե ինչպես կարելի է մեր գործերի նախապատվության հերթը ճշտել և մեր տաղանդները գործածել Իրեն ծառայելու համար: Կյանքը հոյակապ պարգև է Տիրոջից: Մենք Նրան պատվում ենք, երբ հաճույք ենք ստանում թե՛ Իր օրհնությունների, թե՛ մեր իմաստալից ծառայությունների համար:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ կյանքիս համար: Օգնիր, որ այս նոր տարին ապրեմ Քեզ համար, Քո տված օրհնություններով ցնծամ և Քո նպատակներն իրագործեմ: Ամեն:

Մենք կարող ենք թե՛ Աստծո տված օրհնությունների հաճույքը ունենալ և թե՛ ուրիշներին օրհնություն լինել:

Կարդա՛ ժողովող 9.4-12

Այն ամենը, ինչ քո ձեռքից կգա անելու, արա՛ քո կարողության չափով: Ժող. 9.10

Լա՛վ է հարց տալը

Նախանձելի էր հորս կողմնորոշվելու զգացողությունը: Նա չատ լավ գիտեր, թե որտեղ էին հյուսիսը, հարավը, արևելքն ու արևմուտքը: Թվում էր՝ այդ զգացողությամբ էր ծնվել: Նա միշտ էլ ճիշտ էր, մինչև այն օրը, երբ սխալվեց ու կորավ: Նա ու մայրս անձանոթ մի քաղաքում մի միջոցառման ավարտին՝ մթնելուց հետո, երբ ճանապարհ էին ընկել, հայրս համոզված էր, որ նորից մայրուղի ելնելու ճամփան գիտեր, սակայն իրականում չգիտեր: Շփոթված ու պատրանքով նրանք ետ են դառնում: Վստահություն ներշնչելու համար մայրս ասում է. «Հոգ է՛: Գիտեմ, որ դժվար է, սակայն բջջային հեռախոսով կողմնորոշվիր»:

Կարդա՛
Սաղմոս 142.4-11

...ցո՛ւյց տուր ինձ
ճանապարհն այն,
որով պիտի գնամ:
Սաղմ.142.8

Առաջին անգամ կյանքում յոթանասունվեց տարեկան հայրս բջջային հեռախոսից էր ուղղություն խնդրում:

Սաղմոսերգուն կյանքի փորձառությունով հարուստ էր, սակայն Սաղմոսները հայտնում են այն պահերը, երբ թվում է, թե Դավիթն էլ հոգեպես և զգացականորեն կորած լինելու վիճակ ուներ: 142-րդ Սաղմոսը նկարագրում է այդ պահերից մեկը: Մեծ թագավորի սիրտը սոսկումի (Հմ. 4) ու տազնապի մեջ էր (Հմ. 11): Ուստի նա մի պահ կանգ է առնում ու աղոթում՝ ասելով. «Ցո՛ւյց տուր ինձ ճանապարհն այն, որով պիտի գնամ» (Հմ. 8): Ու բջջային հեռախոսին վստահելու փոխարեն Սաղմոսերգուն աղաղակում է Տիրոջը՝ ասելով. «Քանզի, Տե՛ր, հույսս քեզ վրա դրի» (Հմ. 8):

Եթե Տիրոջ «սրտին հաճելի մարդը» (Ա. Թագ. 13.14) ժամանակ առ ժամանակ կորած զգաց, մենք էլ Աստծուն պիտի դառնանք՝ Իրենից ուղղություն ստանալու:

Աղոթք - Հա՛յր, երբ շփոթվեմ ու պատրանքի մեջ լինեմ, օգնիր ինձ, որ Քեզ մոտ գամ ու օգնություն խնդրեմ, որ ինձ ուղղորդես: Ամեն:

Աստծուց ուղղություն խնդրելը լավագույն բանն է:

Աչքերը ամուր փակած

Տա շատ լավ գիտեր, որ այդ բանը չէր անելու: Ես հստակ տեսնում էի, թե նա գիտեր, որ սխալվել էր. դեմքին էր գրված: Երբ նստեցի կողքին՝ խոսելու իր գործած սխալների մասին, եղբորորդիս աչքերը սեղմ փակեց: Նա նստեց երեք տարեկան մանուկի հոգեբանությունը՝ խորհելով, թե եթե աչքերը փակի, իրեն չպիտի կարողանամ տեսնել: Ու եթե ինքն ինձ համար անտեսանելի է, պիտի կարողանա խուսա տալ խոսակցությունից ու դրա հետևանքներից: Շատ ուրախ եմ, որ այդ պահին կարող էի նրան տեսնել: Եթե անգամ չէի կարող ներել իր արածները, հարկավոր էր իր հետ խոսել. չէի ուզում, որ որևէ բան մեր հարաբերությունը խաթարեր: Ցանկանում էի, որ նա ինձ նայեր՝ տեսնելու, թե որքան էի նրան սիրում և անձկագին ներել ուզում: Այդ պահին ես նշմարեցի, թե Աստված ինչ զգաց, երբ Ադամը և Եվան Նրա վստահությունը խաթարեցին Եդեմի պարտեզում: Գիտակցելով իրենց գործած հանցանքը՝ նրանք փորձեցին Աստծուց թաքնվել (Ծննդ. 3.10), որ կարող էր հստակ տեսնել նրանց, ինչպես ես էի տեսնում եղբորորդուս:

Կարդա՛
ԾՆՆՂՈՅ 3.1-10

Ադամն ու իր կինը Տեր Աստծուց թաքնվեցին դրախտի ծառերի մեջ: ԾՆՆՂ. 3.8

Երբ անդրադառնում ենք, թե սխալ ենք արել, հաճախ փորձում ենք անտեսել դրա հետևանքները: Նրանցից փախուստ ենք տալիս, ծածկում դրանք և կամ էլ մեր աչքերը փակում ճշմարտության առջև: Երբ Աստված մեզ հաշվետու է նկատում իր արդարության չափանիշով, մեզ տեսնում է ու փնտրում, որովհետև սիրում է մեզ ու ներում շնորհում Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ ինձ տեսնում ես ու սիրում, նույնիսկ երբ սխալ եմ անում: Ամեն:

Աստված իր սիրով մեզ տեսնում է:

Լույսի մեջ քայլել

Երբ լուսինը անհետանում է, խավարն է պատում մեր անտառային գյուղը: Երկինքը փայլատակում է, որոտները գոռում են, ինչին հետևում է տեղատարափ անձրև: Վախով արթնանում եմ այնպես, ինչպես մանուկն է երևակայում, թե գորշ ճիվաղներ պիտի խոյանան իր վրա: Սակայն առավոտյան ձայները լուռում են, արևը ծագում է, ու խաղաղություն է տիրում, և թռչունները արևի շողերի տակ գեղգեղում են: Մեծ է գիշերվա վախազրու խավարի ու ցերեկվա ցնծություն հակասությունը:

Երբայցիս գրքի հեղինակը հիշում է այն ժամանակը, երբ Իսրայելի ժողովուրդը Սինա լեռան մոտ փորձառություն ունեցավ, երբ սաստիկ խավարից ու սոսկալի փոթորկից վախով հեռու թաքնվեց (Ել. 20.18-19): Նրանց համար Աստծո ներկայությունը, նույնիսկ Իր Սիրո Օրենքի հանձնումի ժամանակ, խավարի ու սոսկումի զգացում տվեց: Որպես մեղավոր ժողովուրդ՝ նրանք չկարողացան Աստծո չափանիշով ապրել: Նրանց մեղքը պատճառ եղավ, որ սոսկումի ու խավարի մեջ քայլեն (Եբ. 12.18-21): Սակայն Աստված լույս է, և Նրա մեջ բնավ խավար չկա (Ա. Հովհ. 1.5): Եբր. 12-ում նշված Սինա լեռը ներկայացնում է Աստծո սրբությունը ու մեր հին անհնազանդության կյանքը: Իսկ Սիոն լեռան գեղեցկությունը ցույց է տալիս Աստծո շնորհն ու հավատացյալների նոր կյանքը Հիսուսով, որն է «Նոր Կտակարանի միջնորդը» (Հմ. 22-24):

Նա, ով Հիսուսին է հետևում, բնավ «խավարի մեջ չի գնա, այլ կյանքի լույսը կրնդունի» (Հովհ. 8.12): Նրա միջոցով կարող ենք մեր հին կյանքի խավարը թողնել ու Իր թագավորության լույսի և գեղեցկության մեջ քայլել ու ուրախության ցնծությունը ունենալ:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ ինձ խավարից դուրս՝ Քո հիանալի լույսին ես տանում: Օգնիր, որ խավարը թողնեմ ու քայլեմ դեպի հավիտենականության լույսը: Ամեն:

**Նրա լույսի մեջ քայլելով է մեր կյանքը
ամբողջովին փոխվում:**

Կարդա՛
Եբր. 12.18-24

Կյանքը նրանով էր,
և կյանքը մարդկանց լույսն էր:
Հովհ. 1.4

Փոխակերպված և փոխակերպող

Նիգերիայում ծնված երկու բժիշկներ՝ Թանին և Մոդուփ Օմի-դեին, 1970-ականներին Անգլիա գնացին ուսանելու: Անձնապես Աստծո շնորհով փոխակերպված լինելով՝ բնավ չերևակայեցին, թե նրանք միջոց պիտի լինեն փոխակերպելու Անգլիայի Լիվերպուլ շրջանի ամենից անջատված ու զրկված Անֆիլդի դահլիճը: Մինչ նրանք հավատարմությամբ ու Աստծո օգնությամբ ծառայեցին ժողովրդին, Տերը շատերի հույսը վերանորոգեց: Ներկայումս նրանք ունեն եռանդուն եկեղեցի ու շարունակում են իրագործել համայնքային ծրագրեր, որոնք պատճառ են դարձել անհաշիվ կյանքերի փոխակերպման:

Մանասե թագավորն էլ իր ժողովրդին փոխակերպեց նախ դեպի չարը և ապա՝ բարին: Երբ տասներկու տարեկանում գահ բարձրացավ, ժողովուրդը չարության առաջնորդեց, ու նրանք մեծ չարություններ արեցին տարիներ չարունակ: Նրանք ականջալուր չեղան Աստծո տված ազդարարություններին, ուստի Նա արտոնեց, որ Մանասեն շղթաներով կապված Բաբելոն տարվի որպես բանտարկյալ: Իր տագնապի ու նեղության մեջ թագավորը խոնարհաբար Աստծուն պաղատեց: Տերը լսեց նրա աղաղակը ու թախանձագին ընդունեց նրա աղերսը ու նրան Երուսաղեմ՝ իր թագավորություն վերադարձրեց: Փոխակերպված Մանասե թագավորը քաղաքի դրսի պարիսպը կառուցեց և օտար աստվածներին ու կուռքերին Տիրոջ տնից հանեց: «Տիրոջ զոհասեղանը կառուցեց, ... ու Հուդային հրամայեց, որ Տիրոջը՝ Իսրայելի Աստծուն պաշտի»: Ու ժողովուրդը, տեսնելով Մանասեի այս հիմնական փոխակերպությունը, ինքն էլ փոխակերպվեց: Մինչ Տիրոջն ենք փնտրում, թող Նա մեր կյանքերը հիմնովին փոխակերպի:

Աղոթք - Երկնավոր Հայր, փոխակերպիր մեր կյանքերը, որպեսզի մեզ միջոց դարձնես ուրիշների կյանքերը փոխակերպելու: Ամեն:

Քո փոխակերպությունը Աստծով ուրիշների փոխակերպման պատճառ կդառնա:

Կարդա՛

Բ Մնաց. 33.9-17

Նորոգեց Տիրոջ զոհասեղանը... պատվիրեց Հուդայի երկրի բնակիչներին, որ պաշտեն Իսրայելի Տեր Աստծուն:

Բ Մնաց. 33.16

Խաղաղության իշխանը

Վրպասան Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» խորագրով վեպը Նապոլեոն Բոնապարտի հարձակման, ինչպես նաև Ռուսաստանի հասարակական կյանքի մասին է: Պատերազմը և խաղաղությունը իրար հակառակ են ու հարմար չեն:

Ծնունդին մենք տոնում ենք Խաղաղության Իշխանի հրաշափառ ծնունդը, ու մեր մանուկներից շատերը խաղալիք զենքեր կամ համակարգչային պատերազմական խաղեր են նվեր ստանում: Շատերն էլ հավաքվում են խնջուկքների համար, սակայն պատերազմի մեջ են ընտանիքի անդամների, աշխատակիցների, դրացիների և այլոց հետ: Պատերազմն ու խաղաղությունը ինչպե՞ս կարելի է կողք կողքի դնել: Սակայն Աստծո շնորհով մենք կարող ենք Քրիստոսի ծնունդը տոնել Իր և ուրիշների հետ խաղաղություն ունենալով: Սակայն հարկ է նախ հասկանալ, թե հրեշտակը ի՞նչ ցանկացավ հասկացնել Տեր Հիսուսի ծնունդով «աշխարհի վրա խաղաղություն» պիտի լինի ասելով: Նկատի ունենանք, որ Հիսուսի ծնունդից առաջ ու ծնունդից ի վեր պատերազմներ միշտ եղել են ու կլինեն: Հետևաբար, Ծնունդի Խաղաղությունը արտաքին երևույթների հետ կապված չէ: Հիսուսն ասաց. «Կարծում եք, թե ես աշխարհիս վրա խաղաղություն տալո՞ւ եմ եկել: Ո՛չ, ասում եմ ձեզ, այլ բաժանություն» (Ղուկ. 12:51): Հակառակ հրեշտակի հայտարարության՝ ինչպե՞ս է կլինի, որ «Խաղաղության Իշխանը» բաժանում բերի: Հիսուսը եկավ խաղաղություն բերելու նախ հավատացյալի ու Աստծո միջև և ապա մարդկանց միջև: Սակայն Նա բախում առաջ բերեց Իր և չարի հետևորդների միջև: Ծնունդը իսկական խաղաղություն է բերում ճշմարիտ Քրիստոնյաների կյանքի մեջ:

Կարդա՛ր Ղուկաս 2.8-20

«Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներուն, երկրի վրա՝ խաղաղություն ու մարդկանց մեջ՝ հաճություն»: Ղուկ. 2.14

Աղոթք - Հայր, խնդրում եմք օգնիր մեզ այս Ծնունդի օրերին, որ ունենանք խաղաղության իշխանին մեր կյանքերում: Ամեն:

Հիսուսի տված խաղաղությունը մնայուն է:

Սովորական մարդ

Ուիլյամ Քերին հիվանդոտ տղա էր, ծնված Անգլիայի Նորդ-Համբլթըն քաղաքում: Նրա ապագան շատ փայլուն չէր, սակայն Աստված հատուկ ծրագիր ուներ նրա համար: Նա Հնդկաստան փոխադրվեց, ուր հիանալի ընկերային բարեկարգություններ արեց ու Աստվածաշունչը թարգմանեց Հնդկական զանազան բարբառներով: Նա իր Աստծուն ու մարդկանց սիրեց և շատ բան կարողացավ անել Աստծո համար:

Հեսսեի կրտսեր որդին՝ Դավիթը, սովորական մի մարդ ու Բեթղեհեմի բլուրների վրա աննշան հովիվ էր (Աթագ. 16.11-12): Սակայն Աստված նրա սիրտը տեսավ ու ծրագրեր մշակեց նրա համար: Աստված մերժեց Սավուղին՝ իր անհնազանդություն համար, ու Սամուելը ողբաց իր արած սխալ ընտրությունների համար: Աստված ասաց Սամուելին, որ Հեսսեի որդուն՝ Դավիթին թագավոր օծի:

Երբ Սամուելը տեսավ բարձրահասակ ու պատվական Եղիաբին, բնականաբար խորհեց, «Իրոք, Տիրոջ օծյալն իր առջև է» (Հմ. 6): Սակայն թագավոր ընտրելու Աստծո ռազմավարությունը շատ տարբեր էր Սամուելինից: Աստված ո՛չ ասաց Հեսսեի բոլոր որդիներին՝ բացի ամենափոքրից: Վատահաբար Դավիթին թագավոր ընտրելը լավ ռազմավարություն չէր Աստծո կողմից, կամ առաջին հայացքից այդպես էր թվում: Պատանի հովիվը ի՞նչ կարող էր տալ իր ժողովրդին ու երկրին:

Որքա՛ն մխիթարական է գիտենալ, թե Աստված մեր սիրտը գիտի ու ծրագիր ունի մեզնից յուրաքանչյուրի համար:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ, որ Դու մեր սրտերը քննող Աստվածն ես ու չես նայում մեր արտաքին տեսքին, ունեցվածքին ու հաջողություններին: Ամեն:

Աստծո նախապատվությունը քո սիրտն է:

Կարդա՛
Աթագ. 16.1-7

Մարդիկ երեսին են
նայում, իսկ Աստված՝
սրտին:
Աթագ. 16.7

Մտահոգության տարրերակ

Օրինապահ ու անկեղծ մի մարդ հետևյալ հաղորդագրությունն է ստանում հեռախոսին. «Այսինչ ուստիկանն է ուստիկանություն զրասենյակից: Խնդրե՛մ, հեռաձայնել հետևյալ թվին»: Անմիջապես մարդը սկսում է մտահոգվել՝ վախենալով, թե մի տեղ սխալ բան է արել: Վախենում է հեռաձայնին պատասխանել և անքուն գլիչերներ է անցկացնում՝ տարբեր արարքների մասին մտածելով, մտահոգված, որ մեծ ղժվարություն է մատնվել: Ուստիկանը ետ չի հեռաձայնում, սակայն ինքը շաբաթներով մտահոգվում է: Տեր Հիսուսը հետաքրքրական հարց տվեց մտահոգության մասին. «Հիմա ձեզանից ո՞վ կարող է հոգ անելով իր հասակի վրա մի կանգուն ավելացնել» (Մատթ. 6.27): Թերևս սա կարող է մեզ օգնել՝ դարձյալ մտածելու մեր մտահոգությունների մասին, որովհետև թեղադրում է, թե մտահոգվելը բնավ չի օգնում: Երբ հորիզոնի վրա տեսնում ենք հարցեր, թերևս կարող ենք փորձել հետևյալ երկու քայլով մոտեցումը: Գործի անցնել ու Աստծուն վստահել: Եթե կարողանանք մի բան անել հարցը անտեսելու համար, այդ միջոցը գործածենք: Կարող ենք Աստծուն աղոթել, որպեսզի մեզ առաջնորդի մեր անելիք քայլի մեջ: Իսկ եթե բան չկա, որ կարողանանք անել, կարող ենք մխիթարվել, թե Աստված երբեք այդպիսի կացության մեջ չի կարող լինել: Նա միշտ կարող է մեր հանգամանքն իրեն ուղղել՝ վստահությունով ու հույսով: Երբ զգանք, թե մտահոգ ենք, ու շաղթություն դարձնենք Դավթի ներշնչող խոսքերին, որ դիմագրավեց իր մտահոգություններն ու ղժվարությունները, սակայն եզրակացրեց՝ ասելով. «Հոգսդ դի՛ր Տիրոջ վրա, ու նա քեզ կկերակրի» (Սաղմ. 54.23): Ի՞նչ մեծ տարրերակ մտահոգության:

Աղոթք - Հայր, Դու գիտես, թե ինչ եմ դիմագրավում այսօր: Իմ բոլոր հոգսերը Քեզ եմ բերում: Խնդրում եմ, զորացրու ինձ և օգնիր, որ Քեզ վստահեմ ամեն ժամանակ: Ամեն:

Ի՞նչ մտահոգություններ ես ուզում Աստծուն հանձնել այսօր:

Կարդա՛

Մատթեոս 6.25-34

Հիմա ձեզանից ո՞վ կարող է հոգ անելով իր հասակի վրա մի կանգուն ավելացնել: Մատթ. 6.27

Ի՞նչ տեսակի Փրկիչ է Նա

Անցյալ տարի բարեկամուհիների հետ աղոթեցինք երեք կանանց համար, որոնք քաղցկեղով էին տառապում: Գիտեինք, թե Աստված ունի զորութիւն բժշկելու, և ամեն օր խնդրեցինք, որ հրաշք կատարի: Մենք անցյալում տեսել էինք Նրա կատարած հրաշքները ու հավատացինք, որ դարձյալ կարող է անել: Եղան օրեր ու շաբաթներ, երբ ապրելու համար նրանց մղած պայքարում բժշկվելու նշույլ տեսանք և ուրախացանք: Սակայն երեքն էլ մահացան այդ նույն տարվա աշնանը: Ոմանք ասացին, թե սա «գերազույն բժշկութիւնն էր», և կարծես այդպես էր: Նրանց կորուստը մեզ դեռ խորը ցավ է պատճառում: Մենք Նրա բժշկութիւնը ցանկացանք՝ այստեղ և հիմա: Սակայն որոշ պատճառներով, որ մենք չենք կարող հասկանալ, հրաշք չպատահեց:

Կարդա՛ր
Հովհ. 6.41-51, 60-67

Դրանից հետո նրա աշակերտներից շատերը հետ գնացին ու նրա հետ այլևս ման չէին գալիս: Հովհ. 6.66

Մի շարք մարդիկ Հիսուսին հետևեցին Նրա կատարած հրաշքների ու իրենց ունեցած կարիքների հոգածութիւյան համար (Հովհ. 6.2,26): Ոմանք պարզապես Նրան տեսան որպես հյուանի որդի (Մատթ. 13.55-58), և ուրիշներն էլ ակնկալեցին, որ Նա իրենց քաղաքական առաջնորդը լինի (Ղուկ. 19.37-38): Ուրիշներն էլ Նրան նկատեցին որպես մեծ վարդապետ (Մատթ. 7.28-29), մինչ այլք հրաժարվեցին Նրա ետևից գնալ, որովհետև Իր տված վարդապետութիւնը դժվար էր հասկանալ (Հովհ. 6.67): Հիսուսը միշտ մեր ակնկալած բաները չի անում: Սակայն Նա մեր կարծածից շատ ավելին է: Նա հավիտենական կյանք պարգևոցն է (Հմ. 47-48): Նա բարի ու իմաստուն է ու սիրում է, ներում, մոռում է մեր մեջ ու մեզ մխիթարութիւն պարգևում: Թող որ Հիսուսի մոտ մեր հանգիստը գտնենք ու շարունակենք Իրեն հետևել:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ Դու մեզ հարկավոր Փրկիչն ես: Քո սիրով մեզ պատիր ու մեզ Քեզ վստահելու հանգստութիւնը պարգևիր: Ամեն:

Տե՛ր, Քեզ եմ վստահում ու ասում եմ. «Դո՛ւ ես Աստվածն իմ» (Սաղմ. 30.15):

Մեր հյուրընկալող Աստված

Մեր եկեղեցու պաշտամունքները տեղի են ունենում հին նախակրթարանի սրահում, որ 1958-ին իր դռները փակեց՝ փոխանակ Միացյալ Նահանգների դատական ատյանի՝ ճերմակամորթ աշակերտների դպրոցում աֆրոամերիկացի աշակերտներ ընդունելու վճռին հետևելու: Հաջորդ տարի դպրոցն իր դռները բացեց, և էլվան, որ այժմ մեր եկեղեցու անդամ է, սև ուսանողներից եղավ ճերմակ աշխարհի մեջ: Էլվան հիշում է. «Ինձ վերցրին իմ ապահով միջավայրից ու դրեցին վախազդու՝ մեկ սև աշակերտով դասարանի մեջ»: Էլվան տառապեց, որովհետև տարբեր էր, սակայն նա դարձավ քաջության, հավատքի ու ներումի կին:

Կարդա՛
Գործք Առ. 10.34-38

Ճշմարտապես հասկանում եմ, որ Աստված աչառու է... Գործք Առ. 10.34

Նրա վկայությունը խոր է ընկերություն անդամների կողմից իր կրած չարչարանքների պատճառով, որոնք ուրացան այն ճշմարտությունը, թե ամեն մարդ արարած է՝ անկախ իր գույնից ու մշակույթից, սիրված Աստծուց: Առաջին եկեղեցու անդամներից ոմանք պայքարեցին այս նույն ճշմարտությունը՝ հավատալով, որ որոշ մարդիկ ի ծնե սիրված են Աստծուց, մինչ ուրիշները մերժված են: Սակայն երկնային տեսիլք ունենալուց հետո Պետրոսը զարմացրեց բոլորին՝ իր այս ապշեցուցիչ հայտնությունով. «Ճշմարտապես հասկանում եմ, որ Աստված աչառու է, այլ ամեն ազգի մեջ, ով որ նրանից երկյուղում է ու արդարություն է գործում, նրա համար ընդունելի է» (Գործք. Առ. 10.34-35):

Աստված իր բազուկները լայն բացում է՝ ամենքին իր սերը հայտնելու: Թող մենք էլ նույնը անենք իր տված զորությունով:

Աղոթք - Տե՛ր, օգնիր ինձ, որ կարողանամ Քո սերը բաշխել բոլորին անխտիր, ինչպես Դու արեցիր մեզ հետ՝ առանց պայմանի: Ամեն:

Մենք փորձում ենք մարդկանց մեզնից հեռացնել, սակայն Աստծո բազուկները լայն բաց են:

ԱՆՈՒՆ ԶԱՓԵՐ

Հանդարտ՝ շունչս պահած, պառկեցի Մազնիսառեզոնանային Հերտագրության մեքենայի սեղանին, մինչ գործիքը սկսեց աշխատել: Գիտեի, որ շատերն են նույն զննումին ենթարկվել, սակայն ինձ նման փակ տարածությունից վախ ունեցող հիվանդների համար դա փորձառություն էր պահանջում, կենտրոնացում՝ շատ ավելի մեծ բանի կամ մեկի վրա: Մեքենայի բազմաբանի հետ Աստվածաշնչից մի խոսք մտքիս մեջ սկսեց անդադար պտտվել. «...Ի՛նչ են լայնությունը և երկարությունը, բարձրությունը և խորությունը» (Եփես.3.18): Եփեսոսի եկեղեցու համար իր մատուցած աղոթքում Պողոսը նկարագրում է Աստծո սիրո չորս չափանիշները, որպեսզի կարողանա շեշտել Աստծո սիրո անհուն ու անսահման լինելը: ՄՌՏ-ի սեղանի վրա իմ փորձառությունը ըմբռնումներիս նոր տեսական տվեց: Լայն թևերիս երկու կողմը վեց մատնաչափ հեռավորությունը մեքենայի խողովակի մեջ: Երկար - գլխիցս ու ոտքերիցս այն կողմ գտնվող գլանի երկու բաժվածքների հեռավորությունը: Բարձր - քթիցս վեց մատնաչափ վեր՝ խողովակի «առաստաղը»: Խորը - խողովակին հենակ եղող ոտքը, որը հենված էր գետնին՝ ինձ վեր պահելու համար: Ինձ շրջապատող ու ՄՌՏ-ի խողովակի մեջ ինձ պահող չորս չափերը, որոնք հստակ լուսաբանում են Աստծո ներկայությունը կյանքի բոլոր պարագաներում: Աստծո սերը մեր շուրջն է: Լայն - Նա իր բազուկները տարածում է՝ ամեն տեղ մարդկանց հասնելու համար: Երկար - Նրա սերը երբեք չի սպառվում: Բարձր - մեզ վեր է բարձրացնում: Խորը - Նա ցած է իջնում՝ մեզ բռնելու համար ցանկացած պարագայում: Ոչինչ մեզ չի կարող Նրանից բաժանել (Հռոմ. 8.38-39): **Աղոթք** - Սիրելի՛ Աստված, օգնիր, որ կարողանանք մի պահ կանգնել ու մտածել մեր հանդեպ Քո ունեցած բազմաչափ սիրո մասին: Ամեն:

Կարդա՛ Եփես. 3.16-21

Որպեսզի բոլոր սրբերի հետ իմանաք, թե ի՛նչ են լայնությունը և երկարությունը, բարձրությունը և խորությունը...
Եփես. 3.17-18

**Հարցականի տակ մի դիր Աստծուն. պարզապես
Նրան վստահիր:**

Հիսուսը հենց քո ետևում է

Աղջիկս սովորականից մի քիչ ավելի շուտ էր պատրաստ դարձրոց զնալու, ուստի հարցրեց, թե կարո՞ղ ենք ճանապարհին մի պահ կանգնել սուրճ վերցնելու: Համաձայնեցի: Երբ մոտեցանք սուրճի խանութին, նրան ասացի.

- Ուզո՞ւմ ես մի քիչ ուրախություն բաշխել այս առավոտ:

- Անշո՛ւշտ,- ասաց նա:

Սուրճի պատվեր տվեցիք ու մոտեցանք պատուհանին, ուր աշխատողը մեզ ասաց, թե ինչքան պիտի վճարենք:

- Մեր ետևի կնոջ համար էլ ենք ուզում վճարել,- ասացի աշխատակցին:

Աղջիկս լայն ժպտաց:

Մի գավաթ սուրճը շատ մեծ բան չէ, սակայն կարող է մի ձև լինել Հիսուսի ցանկությունը իրագործելու՝ հոգատարություն ցուցաբերել նրանց հանդեպ, որոնց կոչեց «փոքրերից մեկը» (Մատթ. 25.44): Ահա մի խորհուրդ. ինչպե՞ս է լինում, որ մեր ետևի կամ հերթում կանգնած մի անձի պարզապես արժանի թեկնածու ենք նկատում: Գործ անելը կարող է մի գավաթ սուրճ լինել կամ ավելին: Սակայն երբ Հիսուսն ասում է «Քանի որ այս իմ եղբայրներից մեկին արեցիք, ինձ արեցիք» (Հմ. 40), մեզ ազատություն է տալիս իրեն ծառայելու՝ ուրիշներին ծառայելով:

Երբ մեքենան քշեցինք, տեսանք երիտասարդ մի կնոջ ու սուրճ տվող աշխատողի դեմքերը: Երկուսի դեմքին էլ ժպիտ կար:

Աղոթք - Տե՛ր, օգնիր ինձ, որ ես էլ պատրաստ լինեմ ուրիշներին ծառայել: Շատ անգամ փոքր ու պարզ բաները կարող են շատ բան նշանակել ուրիշների համար: Նաև հիշեցրու, թե ինչ որ ուրիշներին անեմ, Քեզ համար արած կլինեմ: Ամեն:

Քրիստոսին կծառայենք, երբ ուրիշներին ծառայենք:

Կարդա՛

Մատթեոս 25.37-40

Քանի որ այս իմ եղբայրներից մեկին արեցիք, ինձ արեցիք: Մատթ. 25.40

ԽՆԵԳԵՏՈՒՆՆԵՐԻ ՎՈՒՄՆԱՆՈՒՄ

Երբ զարմիկս հրավիրեց ինձ դնալու խնեցեալին որսալու, խանդալու և փախուցի: Ժպտացի, երբ ինձ հանձնեց առանց կափարիչի պլաստիկ մի դուլլ: Որսալու եղեգներն ու կերի համար հավի փոքր կտորների տոպրակը առնելով՝ ասաց. «Կափարիչի կարիք չունես»: Հետո, երբ դիտեցի խնեցեալիներին թափած ապարդյուն ջանքը՝ դուլլից դուրս գալու, հասկացա, թե ինչու կափարիչի կարիք չունեինք: Երբ մի խնեցեալին հասնում էր դուլլի բերանին, մյուս խնեցեալիները նրան ետ էին քաշում: Խնեցեալիների փախուստի այս ջանքը ինձ հիշեցրեց, թե որքան քանդիչ բան է անձնասեր լինելով միայն մեր շահը փնտրելը՝ բոլորին հակառակ: Պողոսը լավ հասկացավ իրար վեր բարձրացնելու և իրարից կախված լինելու անհրաժեշտությունը, երբ գրեց Թեսաղոնիկեի եկեղեցու հավատացյալներին և հորդորեց նրանց՝ ասելով. «Անկարգնելին խրատեցե՛ք, երկչոտներին քաջալերեցե՛ք, տկարներին օգնական եղե՛ք, բոլորի հանդեպ համբերատար եղե՛ք» (Ա. Թես. 5.14):

Հանձնարարելով նրանց հոգատար հավաքականություն լինել (Հմ. 11)՝ նա խրախուսեց նրանց ավելի սիրող ու խաղաղարար հարաբերություններ ստեղծելու (Հմ. 13-15): Ներողամտությամբ, ազնվությամբ և սիրո մթնոլորտ ստեղծելու ջանքը հարաբերությունը Աստծո և ուրիշների հետ զորացնում է (Հմ. 15, 23): Եկեղեցին կարող է աճել ու Քրիստոսի վկան լինել այս տեսակ սիրո միաբանությամբ: Երբ հավատացյալները Աստծուն պատվեն՝ խոսքով ու գործով հետամուտ լինելու ուրիշներին վեր բարձրացնելու ու ոչ թե ցած քաշելու, մենք ու մեր համայնքները կբարգավաճեն:

Աղոթք – Տե՛ր, երբ փորձության ենք ենթարկվում ուրիշներին ցած քաշել մեր խոսքերով ու արարքներով, խնդրում ենք օգնիր մեզ, որ նրանց վեր բարձրացնենք: Ամեն:

**Մեր շուրջ եղողներին վեր բարձրացնենք
Տեր Հիսուսի անունով:**

**Կարդա՛ր
Ա Թես. 5.11-18**

...Իրար հետ ու բոլորի հետ ամեն ժամանակ բարո՛ւն հետևեցե՛ք:
Ա Թես. 5.15

Հուլյսի հաստատ հիմքը

Հավատքի մասին դասերը մեզ կարող են գալ չափնկալված տեղերից, ինչպես ես սովորեցի Բիլըր անունով իմ մեծ ու սև որսաչնից: Բիլըրի մեծ մետաղյա ջրամանը դրված է խոհանոցի անկյունում: Երբ ամանը դատարկ լինի, Բիլըրը, փոխանակ հաջելու կամ թաթով խփելու, լուռ նրա կողքին պառկում է ու սպասում: Երբեմն նա երկար է սպասում, սակայն նա վստահ գիտի, թե ի վերջո ես խոհանոց պիտի մտնեմ, տեսնեմ իրեն ու տամ իր սպասածը: Նրա պարզ հավատը իմ հանդեպ հիշեցնում է Աստծուն ավելի վստահելու անհրաժեշտությունը:

Աստվածաշունչը մեզ ասում է, թե «Հավատն էլ հուսացված բաների հաստատումը ու չերևացող բաների ապացույցն է» (Եբ. 11.1): Այս վստահության հիմքը Աստված Ինքն է, որ «իրեն փնտրողներին վարձահատույց կլինի» (Հմ. 6): Աստված հավատարիմ է Իր խոստումները պահելու հարցում բոլոր նրանց համար, որոնք հավատում են ու իր մոտ գալիս Հիսուսի միջոցով:

Երբեմն «մեր չտեսածին» հավատալը դյուրին չէ: Սակայն կարող ենք Աստծո բարություն ու սիրո նկարագրին ապավինել՝ վստահ լինելով, թե նրա իմաստությունը կատարյալ է ամեն բանի մեջ, նույնիսկ երբ կարիք ունենանք սպասելու: Նա միշտ հավատարիմ կատարում է այն, ինչ ասում է՝ մեր անմահ հոգիները փրկելու ու մեր բոլոր կարիքները հոգալու համար, հիմա՝ և մի՛շտ:

Աղոթք - Ամենակարո՛ղ Հայր, շնորհակալ եմ հոգատար լինելու Քո հավատարմության համար: Օգնիր, որ Քեզ վստահեմ ու հանձնվեմ Քո կատարյալ սիրուն: Ամեն:

Վաղվա համար հոգ մի արա. Աստված արդեն այնտեղ է:

Կարդա՛ր Եբրայեցիներ 11.1-6

Եվ իմ Աստվածը թող իր հարստության չափով ձեր կարոտությունը լցնի՝ փառքով Քրիստոս Հիսուսի մեջ: Փիլիպ. 4.19

Մի երգ գիշերվա մեջ

Հորս կյանքը տենչանք էր: Նա ցանկանում էր առողջութիւն, երբ անգամ պարկիմնսոն հիվանդութիւնը աստիճանաբար սկսեց անդամալուծել իր միտքն ու մարմինը: Նա ցանկանում էր խաղաղութիւն, սակայն ընկճախտով էր տառապում: Նա փափագում էր սիրված ու փայփայված զգալ, սակայն հաճախ մենութիւն էր զգում:

Նա ավելի քիչ էր մենակութիւն զգում, երբ կարգում էր իր նախասիրած 42-րդ Սաղմոսը: Իր նման Սաղմոսերգուն էլ ունեւր բուռն տենչանք և չհագեցած բժշկութեան ծարավ (Հմ. 1-2): Իրեն նման Սաղմոսերգուն էլ իրենից չբաժանվող տխրութիւն ունեւր (Հմ. 3), պարզ ցնծութիւնը՝ սոսկ հեռու անցյալի հիշատակի (Հմ. 6): Հորս նման, մինչ քսոսն ու ցավի ալիքներն էին հարվածում (Հմ. 7), Սաղմոսերգուն, Աստուծոց լքված լինելու զգացումը ունենալով, հարցնում է. «Ինչո՞ւ» (Հմ. 9):

Մինչ Սաղմոսի բառերը վստահեցրեցին, թե ինքը միայնակ չէ, հայրս իր ցավի հետ սկսեց խաղաղութիւն զգալ: Նա լսեց իրեն շրջապատող քնքուշ մի ձայն, որ վստահեցնում է, թե նույնիսկ երբ ինքը պատասխաններ չունի, և ալիքները գոռում ու հարվածում են իրեն, նա դեռ սիրված է (Հմ. 8):

Այդ մեղմ սիրո երգը գիշերով լսելը բավարար էր հորս համար՝ լուութեամբ կառչելու հուշին, սիրո և ուրախութեան նշույններին: Ու բավարար է սպասել այն օրվան, երբ իր բոլոր բաղձանքները վերջապէս պիտի գոհացում ստանան (Հմ. 5, 11):

Այդ մեղմ սիրո երգը գիշերով լսելը բավարար էր հորս համար՝ լուութեամբ կառչելու հուշին, սիրո և ուրախութեան նշույններին: Ու բավարար է սպասել այն օրվան, երբ իր բոլոր բաղձանքները վերջապէս պիտի գոհացում ստանան (Հմ. 5, 11):

Աղոթք – Տէ՛ր, գիտենք, որ մեր բոլոր ցավերը կրեցիր ու մի օր հարութեան պիտի վերածես: Մինչ այդ օրվա մեջ ամբողջական բժշկութեան ենք սպասում, օգնիր, որ կարողանանք Քո սիրո երգի մեջ հանգչել: Ամեն:

Մինչ սպասում ենք այդ առավոտին, կարող ենք Աստուծո սիրո երգի մեջ հանգստանալ:

Կարդա՛ր
Սաղմոս 41.1-11

Սակայն եթէ ինչ որ չենք տեսնում, նրա՛ հույսն ունենք, ապա համբերութեամբ սպասում ենք: Հռոմ. 8.25

Սովորական բաները կիսելուց ավելի

-Բայց չեմ ուզում կիսել,- կոտրած սրտով ու ողբալով ազադակեց իմ փոքր տղան՝ չուզելով իր լեզույի բազմաթիվ կտորներից մեկից նույնիսկ հրաժարվել:

Աչքերս ոլորեցի նրա տհասությունից վրա, սակայն իրականում այս դիրքը միայն փոքրերին հատուկ է: Որքա՛ն կամակոր ընդդիմություն է երևում իմ ու շատերի միջև՝ առատաձեռնությամբ ու ազատորեն ուրիշներին տալու համար:

Որպես Հիսուսի հավատացյալներ՝ կոչում ունենք մեր կյանքերը կիսելու ուրիշների հետ: Հռութը ճիշտ դա արեց իր սկեսրոջ՝ Նոոմինի հետ: Որպես խեղճ ու աղքատ այրի՝ Նոոեմին ոչինչ չուներ Հռութին տալու: Սակայն Հռութը իր կյանքը կապեց իր սկեսուրի հետ՝ ուխտելով նրա հետ գնալ, ուր որ գնա. նույնիսկ մահը չպիտի կարողանար նրանց բաժանել: Հռութն ասաց Նոոմինին. «Քո ժողովուրդն իմ ժողովուրդն է, և քո Աստվածն իմ Աստվածն է» (Հռ. 1.16): Նա ազատորեն ու առատաձեռնությամբ ամեն ինչ տվեց նրան՝ սեր ու կարեկցություն ցուցաբերելով: Թեև այսպես մեր կյանքը ուրիշների հետ բաժանելը դժվար կարող է լինել, սակայն պետք է հիշենք նման առատաձեռնության պտուղի մասին: Հռութը կիսեց իր կյանքը Նոոմինի հետ, բայց հետո մի որդի ծնեց, որ եղավ Դավիթ Թագավորի պապը: Հիսուսն իր կյանքը մեզ հետ կիսեց, սակայն հետո փառավորվեց, ու հիմա Նա իր տեղն ունի երկնքում՝ Հոր աջ կողմում: Երբ մենք առատաձեռնությամբ իրար հետ կիսենք մեր ունեցածը, կարող ենք վստահ լինել, թե մենք դեռ ավելի մեծ կյանքի փորձառությունը պիտի ունենանք:

Աղոթք – Տե՛ր, երբ կիսում ենք մեր կյանքերը ուրիշների հետ, թող Քո սիրող սիրտը ցուցանենք: Ամեն:

Աստծո սերը կիսելը հավասար է ուրիշներին հոգատար լինելուն:

Կարդա՛ր
Հոութ 1.11-18
Քո ժողովուրդն իմ ժողովուրդն է, և քո Աստվածն իմ Աստվածն է:
Հոութ 1.16

ԻՆչի՞ց չես կարող հրաժարվել

Զայնասփյուռի հաղորդավարը հարցրեց. «Ինչի՞ց երբեք չես կարող հրաժարվել»: Ունկնդիրները հեռախոսով հետաքրքրական պատասխաններ տվեցին: Ոմանք հիշեցին իրենց ընտանիքի անդամներին, մի մարդ էլ՝ վախճանված կնոջը: Ուրիշներն ասացին, թե չեն կարող բաղձալի երազներից հրաժարվել. օրինակ՝ երաժշտության ճանապարհով ապրուստ ապահովել կամ մայր լինել: Բոլորս էլ ունենք մի բան՝ անձ կամ ունեցվածք, որին մեծապես գուրգուրում ենք ու չենք ուզում հրաժարվել:

Օսեեի գրքում Աստված մեզ ասում է, թե չպիտի հրաժարվի Իր ընտրյալ Իսրայելի ժողովրդից: Որպես Իր ժողովրդին սիրող ամուսին՝ Աստված նրա բոլոր կարիքները հոգաց՝ հողամաս, ուտելիք, ըմպելիք, հագուստ և ապահովություն տվեց: Անբարո կնոջ նման Իսրայելը մերժեց Աստծուն ու փորձեց իր ուրախությունն ու ապահովությունը ուրիշ բաների մեջ գտնել: Ինչքան Աստված փորձեց հետապնդել նրան, նա ավելի հեռացավ Աստծուց (Օս. 11.2): Թեպետ Իսրայելը խորապես ցավեցրեց Աստծուն, սակայն Նրա գուրգուրանքը երբեք չպակասեց: Աստված երբեք չմոռացավ նրան (Հմ. 8) ու շարունակեց կրթել և խրատել՝ նրան փրկելու համար, փափագելով վերահաստատել իր կապը նրա հետ (Հմ. 11): Այսօր Աստծո բոլոր գավակները կարող են նույն վստահությունը ունենալ, թե Նրա սերը այնպիսին է, որ բնավ մեզ չպիտի թողնի (Հռոմ. 8.37-39): Եթե Նրանից հեռանանք, նա մեզ հոգ կտանի, որ ետ դառնանք: Երբ Աստված մեզ խրատում է, վստահ պիտի լինենք, որ Իր խրատը Իր հետապնդումի նշանն է ու ոչ թե մերժումի: Մենք Իր գանձն ենք, ու Նա մեզնից երբեք չպիտի հրաժարվի:

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ Քո սիրո համար, որ երբեք չի լքում: Օգնիր, որ ամբողջ սրտով Քեզ սիրեմ: Ամեն:

Աստծո գավակը մի՛շտ էլ սիրով է տուն ընդունվում:

Կարդա՛ր
Օսեեի 11. 8-11

...Ուրիշ բան չի կարող մեզ բաժանել Աստծու սիրուց: Հռոմ. 8.39

Հարցերով պաշտել

Բնավ անսովոր չէ, երբ երկար կամ կարճ ճամփորդություն ընթացքում խմբում մեկը հարցնում է. «Հասա՞նք» կամ «Դեռ որքա՞ն ունենք»: Ո՞վ չի լսել այս արտահայտությունները մանուկների, ինչպես նաև չափահասների շուրթերից, որոնք ուզում են շուտով հասնել որոշված վայրը: Սակայն ամեն տարիքի մարդիկ նման հարցեր տալիս են, երբ հոգնում են՝ կյանքի տված մարտահրավերների պատճառով, որոնք երբեք չեն վերջանում: 12-րդ Սաղմոսում նույնն էր Դավթի պարագան: Երկու համարներում (Հմ. 1-2) չորս անգամ Դավիթը մոռացված, լքված ու պարտված լինելու զգացումներով ողբում է ու ասում. «Մինչև ե՞րբ»: Երկրորդ համարում նա հարցնում է. «Մինչև ե՞րբ խռովք ունենամ իմ հոգում»: Այն Սաղմոսները, որոնք այս Սաղմոսի նման պարունակում են ողբ, մեզ լուելյայն թույլ են տալիս, որ պաշտամունքի մթնոլորտում Տիրոջը մոտենանք մեր հարցերով: Ի վերջո, ո՞վ է լավագույն անձը, որին կարող ես մոտենալ ու խոսել ճնշման և պրկումի ժամանակ, եթե ոչ Աստված: Մենք կարող ենք ցավի, հիվանդության, սիրելիի մոլորության և հարաբերական դժվարությունների դեմ մեր պայքարները Աստծուն հանձնել:

Երբ հարցեր ունենանք, մեր աստվածապաշտությունը չի դադարի: Երկնքում ապրող ամենակարող Աստված մեզ ընդունում է, երբ մտահոգություններով լեցուն մեր հարցերը Իրեն ենք բերում: Ու թերևս Դավթի նման ժամանակի ընթացքում մեր հարցերը պիտի փոխվեն խնդրանքների, վստահության արտահայտությունների և Տիրոջ փառաբանության (Հմ.3-6):

Աղոթք – Տե՛ր, շնորհակալ եմ, որ Քեզ պաշտելուց չպիտի դադարեմ, երբ հարցեր ունենամ: Կարող եմ Քեզ պաշտել իմ խնդիրներով: Ամեն:

Քո հարցերն ու հարցադրումները Աստծուն բեր:

Կարդա՛ր Սաղմոս 12

Ես ողորմությանդ վրա հույս դրի, Տե՛ր, սիրտս հրճվեց քո փրկագործությամբ. կօրհներգեմ քեզ, Տե՛ր, բարերար՝դ իմ: Սաղմ. 12.6

Սիրո գեղեցկությունը

«Ջերեբ Տաբատինոն», որ նաև ծանոթ է իբրև մեքսիկական գլխարկի պար, տոնում ու հռչակում է սիրո վիպերգությունը: Պարի ժամանակ տղամարդը իր լայնեզր գլխարկը գետին է նետում: Պարի վերջում կինը վերցնում է գլխարկը, երկուսով նրա ետևում են թաքնվում ու համբույրով իրենց սիրո վիպերգությունն են հաստատում: Այս պարը ինձ հիշեցնում

է այր ու կնոջ ամուսնական հարաբերության մեջ հավատարմության կարևորությունը: Առակաց 5-ում շնության արդյունքում մեծ գին վճարելու մասին խոսքից հետո կարգում ենք, թե ամուսնությունը բացարձակ է: «Քո ջուրը խմի՛ր քո ամանից և ջրհորի աղբյուրից» (Հմ. 15): Նույնիսկ երբ տասը գույգ «Ջերեբ» պարի բեմում, յուրաքանչյուր անձ կենտրոնանում է իր ընկերոջ վրա: Մենք կարող ենք ուրախանալ մեր կողակցի հանդեպ մեր խորն ու անբաժան նվիրումով (Հմ. 18):

Մեր սիրո հարաբերությունն էլ է քննության ենթարկվում: Պարողները, մինչ իրենց ընկերների հետ պարելու հաճույքն են ունենում, գիտեն, թե մեկն իրենց է նայում: Նույն ձևով մենք կարգում ենք. «Քանզի տղամարդու ճանապարհները Աստծո աչքի առջև են, և Նա գիտե նրա բոլոր շավիղները» (Հմ. 21): Աստված ցանկանում է պաշտպանել մեր ամուսնությունները, ուստի Նա հարատև հսկում է մեզ վրա: Թող Նրան հաճի լինենք մեր՝ իրար հանդեպ ցուցաբերած հավատարմության մեջ: «Ջերեբի» նման չափավորություն կա կյանքի մեջ, որին պիտի հետևենք: Երբ մեր Արարչի ենթաշեշտը պահենք իրեն հավատարիմ լինելով, ամուսնացած կամ ոչ, օրհնություն և ուրախություն կգտնենք:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, Դու՛ գիտես իմ բոլոր ճամփաները: Օգնիր ինձ, որ Քեզ պատվեմ ուրիշների հետ իմ ունեցած հարաբերություններում: Ամեն:

Հավատարմությունը ցնծություն է բերում:

Կարդա՛ր Առակներ 5

Քո ջրի աղբյուրը
թող առանձին լինի:
Առ. 5.18

Ո՞ր ես գնում

Ինչն է ճշտում մեր ուղղությունը կյանքում: Մի օր զարմանալի մի տեղ լսեցի այս հարցին մի պատասխան՝ շարժակով հեծանիվի մարզման արշավի գնացքը: Բարեկամներիս հետ ցանկացանք շարժակով հեծանիվ վարել, ուստի դասընթացի հետևեցինք: Մեր դասերից մեկը նպատակակետ ունենալու մասին էր:

Մարզիչը մեզ ասաց. «Անակնկալ արգելքի պիտի հանդիպեք ճանապարհին: Եթե նրան նայեք, ուղիղ դեպի այնտեղ պիտի գնաք: Սակայն եթե վեր նայեք ու ուշադրություն դարձնեք ձեր նպատակակետին, կարող եք այդ արգելքից ապահով անցնել»: Ապա ավելացրեց. «Ո՞ր որ նայում եք, ձեր գնալիք ուղղությունն է»: Այս պարզ, սակայն հիմնական սկզբունքը նաև կարելի է օգտագործել մեր հոգևոր կյանքի մեջ: Երբ մեր նպատակակետը ճշտենք, բնականաբար մեր կյանքը դրա շուրջ է կսկսի ձևավորվել:

Աստվածաշունչը մեզ քաջալերում է, որ մեր հարցերից այն կողմ նայենք, Նրան, որ կարող է մեզ օգնել այդ դժվար պահերին: Սաղմոս 120.1-ի մեջ կարդում ենք. «Աչքերս դեպի լեռները բարձրացրի, որտեղից ինքն օգնություն պիտի գա»: Ապա Սաղմոսը պատասխանում է. «Ինձ օգնություն պիտի գա Տիրոջից, որ ստեղծեց երկինքն ու երկիրը: Տերը կհսկի քո մուտքն ու ելքը՝ այսուհետև մինչև հավիտյան» (Հմ. 2, 8):

Երբեմն մեր արգելքները անհաղթահարելի են թվում: Սակայն Աստված մեզ հրավիրում է, որ Իրեն նայենք, որպեսզի օգնի մեզ տեսնելու մեր դժվարություններից այն կողմ՝ փոխանակ արտոնելու, որ նրանք մեր ապագայի վրա իշխեն:

Աղոթք - Հայր, օգնիր, որ չկենտրոնանամ դժվարությունների վրա, այլ Քեզ նայեմ, երբ արգելքներ դիմագրավեմ ու աշխատեմ Քեզ հետևել կյանքի ճանապարհին: Ամեն:

Մեր օգնությունը երկինքն ու երկիրը ստեղծող Տիրոջ անունի մեջ է:

Կարդա՛

...որտեղից ինձ օգնություն պիտի գա: Ինձ օգնություն պիտի գա Տիրոջից: Սաղմ. 120.1-2

Ստեղծագործության երգը

Գործածելով լսողական աստղաբանությունը՝ գիտնականները կարող են դիտել ու լսել տիեզերքի ձայներն ու տրոփյունները: Նրանք ասում են, թե աստղերը լուսթյամբ պտույտ չեն գործում գիշերային խորհրդավոր երկնքում, այլ երաժշտություն են ստեղծում: Կետաձկան ձայնի նման աստղերի հնչեղությունը գոյություն ունի ձայնի այն ալիքների վրա, որ հնարավոր չէ լսել մարդկային ականջներով: Աստղերի, կետաձկների և այլ արարածների երաժշտությունը ստեղծում է համերգ, որ հայտարարում է Աստծո մեծությունը:

Սաղմոս 91.1-4-ն ասում է. «Բարի է գոհաբանել Տիրոջը, սաղմոս երգել քո անվանը, ո՛վ Բարձրյալ: Առավոտյան պատմել քո ողորմությունը, և գիշերը՝ քո ճշմարտությունը, տասնալար սամոսարանով, օրհնության ձայնով գովաբանել»:

Նոր Կտակարանում Պողոս առաքյալը հայտնում է, թե Հիսուսով «ամեն բան ստեղծվեց՝ ինչ որ երկնքում է ու ինչ որ երկրի վրա, երևացողները և աներևույթները...: Բոլոր բաները նրա միջոցով ու նրա համար ստեղծվեցին» (Կող. 1.16): Որպես պատասխան՝ բնական աշխարհի բարձունքներն ու խորունկ տեղերը երգում են նրա Արարչին: Թող մենք էլ միանանք ստեղծագործությանն ու երգենք Նրա մեծությունը, որ «իր ափով չափեց ջրերը ու թզով՝ երկինքը...» (Ես. 40.12):

Աղոթք - Ո՛վ Աստված, ի՛նչ մեծ ես Դու: Բա՛ց աչքերս, որպեսզի տեսնեմ Քո ստեղծագործության վիթխարիությունը, ու բա՛ց սիրտս, որպեսզի Քեզ արժանի փառքը մատուցեմ: Ամեն:

«Օրնեցե՛ք անուըն Տիրոջ, քանզի նա ասաց՝ եւ դրանք ստեղծվեցին, նա հրամայեց՝ եւ դրանք հաստատվեցին» (Սաղմ. 148.5):

Կարդա՛ր Սաղմոս 18.1-6

Երկինքը պատմում է Աստծու փառքը, և երկնքի հաստատությունը հայտնում է նրա ձեռքի գործերը: Սաղմ. 18.2

Միշտ Աստծո զավակ

Տնողներին հետ եկեղեցական մի պաշտամունքի ժամանակ ըստ մեր սովորության իրար ձեռք բռնեցինք Տերունական Աղոթքը ասելու: Մինչ մեկ ձեռքով մորս ձեռքն էի բռնել ու մյուս ձեռքով՝ հորս, մտածեցի, թե ես միշտ իրենց աղջնակը պիտի լինեմ: Թեև հիմա միջին տարիքում եմ, դեռ կոչվում եմ Լեոյի ու Ֆիլիսի աղջիկը: Նաև մտածեցի, որ ես միայն նրանց աղջիկը չեմ, այլ նաև Աստծո զավակը:

Պողոս առաքյալը ցանկացավ, որ Հռոմի եկեղեցու ժողովուրդը հասկանա, որ իր ինքնությունը հիմնված է Աստծո ընտանիքին որդեգրված անդամ լինելու խորհրդի վրա (Հռոմ. 8.15): Քանի որ նրանք Հոգուց էին ծնվել (Հմ. 14), այլևս կարիք չունեին գեղի լինելու կարևոր չեղող բաներին: Այլ Հոգու պարգևի միջոցով նրանք Աստծո ժառանգորդները և Քրիստոսի ժառանգորդներն են (Հմ. 17):

Ի՞նչ տարբերություն է բերում սա նրանց համար, որոնք Քրիստոսին են հետևում: Շատ պարզ. ամեն ինչ: Մեր ինքնությունը որպես Աստծո զավակներ մեր հիմքն է և ցույց է տալիս, թե ինչպես ենք տեսնում մենք մեզ ու աշխարհը: Օրինակ՝ գիտենալ, թե մենք Աստծո ընտանիքին մաս ենք կազմում, օգնում է, որ մեր հանգիստ օղակից դուրս գանք, մինչ իրեն ենք հետևում: Մենք նաև կարող ենք ազատ լինել ուրիշների վավերացումը խնդրելուց:

Ինչո՞ւ չմտածել այսօր, թե ինչ է նշանակում Աստծո զավակ լինելը:

Աղոթք - Տե՛ր, խնդրեմ օգնիր ինձ, որ ապրեմ որպես Քո զավակ: Արձակիր ինձ, որպեսզի Քո Հոգով ապրեմ ու Քո սերն ու հույսը ուրիշներին բաշխեմ: Ամեն:

**Նրանք, որոնք Աստծուն են հետևում,
Նրա զավակներն են:**

Կարդա՛

Հռոմ. 8. 9-17

Որովհետև ովքեր Աստծու Հոգով են առաջնորդվում, նրանք Աստծու որդիներ են: Հռոմ. 8.14

Փորձել տպավորել

Երբ քուեջի մի դասարան հողագործական դաշտապտույտի գնաց, ուսուցիչը գրեթե չնկատեց իր փայլուն աշակերտներից մեկին: Դասարանում նա հագնում էր վեց մատնաչափ կրունկ՝ պահված տաբատի տակ: Սակայն պտույտի ժամանակ հանգիստ քայլելու կոշիկներով նրա հասակը հինգ ոտքից էլ պակաս էր: Նա ժպտալով ասաց. «Բարձր կրունկներով այնպիսին եմ, ինչպիսին ուզում եմ լինել: Սակայն ցածր կրունկներով այնպիսին եմ, ինչպիսին կամ»:

Մեր արտաքինը չի կարող սահմանել մեր ո՛վ լինելը. կարևորը մեր սիրտն է: Հիսուսն ազդու խոսքեր ուներ երևույթների վարպետ՝ գերկրոնասեր «փարիսեցիներին և օրինականներին»: Նրանք հարցրին Հիսուսին, թե ինչու էր աշակերտները իրենց ձեռքերը չեն լվանում ուտելուց առաջ, ինչպես կրոնական սովորություններն են թելադրում (Մատթ. 15.1-2): Հիսուսը հարցրեց. «Հապա դուք ինչո՞ւ եք ձեր ավանդությունների համար Աստծո պատվիրաններն անտեսում» (Հմ. 3):

Ապա նա մատնանչեց, թե ինչպես էին նրանք ստեղծել փախուստի ճանապարհ՝ իրենց հարստությունը պահելու, փոխանակ իրենց ծնողներին հոգատար լինելու (Հմ. 4-6), դրանով անպատվելով նրանց ու դրժելով հինգերորդ պատվիրանը (Ել. 20.12):

Եթե հետամուտ լինենք արտաքինին՝ փախուստի ճամփա փնտրելով Աստծո հստակ պատվերներից, կդրժենք իր օրենքի հոգին: Հիսուսն ասաց, թե «սրտից դուրս են գալիս չար խորհուրդներ, սպանություններ, շուռթյուններ, պոռնիկություններ» և նման բաներ (Մատթ. 5.19): Միայն Աստված է իր արդար Որդու՝ Հիսուսի միջոցով կարող մեզ մաքուր սիրտ տալ:

Աղոթք - Տեր, մենք հակամետ ենք մեր ջանքերին վստահել՝ Քեզ և ուրիշներին տպավորելու համար: Օգնիր, որ ուղիղ լինենք մեր հարաբերությունների մեջ և ուրախ՝ Քո ներողամտության միջոցով: Ամեն:

Եթե մեր շարժառիթը ուրիշներին տպավորելն է, չենք տպավորի Աստծուն:

Կարդա՛ր

Մատթ. 15.1-11, 16-20

...սրտից դուրս են գալիս չար խորհուրդներ...Սրանք են մարդուն պղծողը: Մատթ. 15.19-20

Մեծ բան չէ՛

Ընտանիքի մի անդամ օգնություն կարիք ունեցավ դեկտեմբեր ամսվա տան վարձի համար: Այս խնդրանքը բեռ դիտվեց ընտանիքի համար՝ հատկապես տարվա վերջին անակնկալ ծախսերի պատճառով: Սակայն գործածեցին իրենց պահեստավորած գումարները՝ շնորհակալ լինելով Աստծուն իր բոլոր տվածների համար: Օգնություն ստացող անդամը քարտ հանձնեց՝ լեցուն շնորհակալության խոսքերով: «Ահա՛, դարձյալ բարիք արեցիք՝ հավանաբար կարծելով, թե մեծ բան չէ՛»:

Ուրիշներին օգնելը մեծ բան է, սակայն ոչ Աստծո համար: Եսայի մարգարեն այդ կետը հստակեցրեց Իսրայելի ժողովրդի համար: Ժողովուրդը ծոմապահություն էր անում, սակայն միաժամանակ վիճում էր ու կռվում: Մարգարեն ասում է՝ փոխանակ վիճելու «քանդի՛ր անիրավության հանգույցը: ...Քաղցածներին՝ բաժանիր քո հացը և անօթևան աղքատներին՝ տար քո տունը. եթե մերկ մարդ տեսնես՝ հագցրո՛ւ նրան, բայց քո ընտանիքի զավակին մի՛ անտեսիր» (Ես. 58.6-7):

Եսային ասում է, թե նման զոհողությունը Աստծո լույսն է տարածում և միաժամանակ մեր անհարթությունները բժշկում (Հմ. 8): Օգնելով իր ազգականին՝ ընտանիքը լավ քննեց իր նյութական վիճակը ու գտավ միջոցները՝ հաջորդ տարի ավելի լավ տնօրինելու ունեցածը: Աստված առատաձեռունին խոստանում է՝ ասելով. «Քո առջևից պիտի ընթանա քո արդարությունը, և Աստծու փառքը պիտի պահպանի քեզ» (Հմ. 8): Հարազատին օգնելը ավելի օրհնություն եղավ, ու նրանք վստահ եղան, թե Աստված արդեն սիրով տվել է ամեն բան:

Աղոթք - Տե՛ր, առատաձեռնության ուղի՛ն լուսավորիր և օգնիր, որ Քեզ նման մենք էլ տանք: Ամեն:

Աստված իր ամեն ինչը տվեց: Եկեք Իրեն հետևենք:

**Կարդա՛ր
Եսայի 58.6-9**

Քանդի՛ր անիրավության հանգույցը... արձակի՛ր նեղյալներին և պատռի՛ր բոլոր անիրավ մուրհակները:
Ես. 58.6

Լայն Եկարահանումը

Ամերիկայի Միացյալ Նահանգների առաջին աֆրո-ամերիկացի Նախագահի պաշտոնակալության հեռարձակման ժամանակ նկարահանող մեքենան լայն ու ընդարձակ տեսարանով ցույց տվեց շուրջ երկու միլիոն հաշվվող մեծ բազմության սքանչելի պատկերը, որ եկել էր ականատես լինելու այդ պատմական դեպքին: CBS-ի լրատվական թղթակից Բոր Շեյֆրերը ակնարկեց՝ «ասելով»: «Այս ցուցադրության աստղը լայն նկարահանումն է»: Ոչ մի ուրիշ բան չէր կարող ցույց տալ այդ լայն հրապարակի վրա հավաքված հոծ բազմությունը:

Աստվածաշունչը մեզ օրինակ է տալիս ավելի մեծ բազմության, որ միացել են Հիսուս Քրիստոսի հանդեպ իրենց ունեցած հավատքով: «Բայց դուք ընտիր սերունդ եք, թագավորական քահանայություն... որպեսզի նրա՛ առաքիլությունները քարոզեք, ով ձեզ խավարից դեպի իր զարմանալի լույսը կանչեց» (Ա Պետ.2.9): Սա պատկերը չէ քիչ թվով առանձնաշնորհյալների, այլ արյունով գնված շատերի «ամեն ցեղից ու լեզվից, ժողովրդից ու ազգից» (Հայտ. 5.9): Այսօր ցրված ենք երկրագնդի ամբողջ տարածքին, ուր շատերը մեկուսացած են զգում ու չարհարվում են Հիսուսի հանդեպ իրենց ունեցած հավատարմության համար: Սակայն Աստծո խոսքի ոսպնյակի միջից մենք տեսնում ենք լայն նկարահանում մեր հավատակից քույրերի և եղբայրների մասին, որոնք միասին են կանգնում՝ պատվելու Նրան, որ մեզ ազատեց ու դարձրեց իր սեփականությունը:

Եկեք միաբանվենք՝ փառավորելու Նրան, որ մեզ խավարից լույսին բերեց:

Աղոթք - Տե՛ր, մենք՝ Քո ժողովուրդը, միաբան քեզ եմք փառավորում: Ամեն:

Ի՞նչ փառաբանություններ ունես Աստծուն տալու:

Կարդա՛

Ա Պետրոս 2. 1-10

Բայց դուք ընտիր սերունդ եք, քաղավորական քահանայություն... որպեսզի նրա՛ առաքիլությունները քարոզեք, ով ձեզ խավարից դեպի իր զարմանալի լույսը կանչեց: Ա Պետ. 2.9

Ազատ սառչելուց

Զուռան մի ցուրտ օր զավակներս խնդրեցին, որ դուրս գան ու ջերմաստիճանը գրեթե 18-ից ցածր էր կամ 0 Ֆարենհայթ: Մի պահ մտածելուց հետո խնդրեցի, որ հաստ թիկնոց հագնեն, իրարից չբաժանվեն ու ներս գան տասնհինգ րոպե հետո: Սիրով այդ կանոնները ստեղծեցի, որպեսզի զավակներս կարողանան ազատորեն հաճելի ժամանակ ունենալ՝ առանց սառչելու: Մտածում եմ, թե 118-րդ Սաղմոսի հեղինակը նույն բարի նպատակը տեսավ Աստծո մեջ, երբ գրեց երկու հաջորդական համարներ, որոնք կարող են իրար հակասական թվալ. «Քո օրենքը պահեցի ամեն ժամ» և «Ես ընթացա անդորրության մեջ, քանզի քո պատվիրանները փնտրեցի» (Հմ. 44-45): Ինչպե՞ս կարող է պատահել, որ Սաղմոսերգուն ազատությունը կապի հոգևոր օրինապահ կյանքի հետ: Աստծո իմաստուն ցուցումներին հետևելը պիտի օգնի, որ զերծ լինենք այն արարքների հետևանքներից, որոնց համար ապագայում հանցավոր կարող ենք զգալ: Աստված չի ցանկանում մեզ վրա ոստիկանի նման հսկել՝ այսինչ բանը անելու կամ չանելու կանոններ դնելով, այլ Իր տված ցուցումները ցույց են տալիս Իր ունեցած սերը մեր հանդեպ: Մինչ իմ զավակները դրսում չմշկում էին, դիտեցի նրանց սուրալը բլուրն ի վար: Ժպիտ պարզվեց դեմքիս՝ տեսնելով նրանց վարդագույն այտերն ու լսելով խնդուքի բարձր ձայները: Նրանք ազատ էին իմ թելադրած սահմանների մեջ: Աստծո հետ մեր ունեցած հարաբերությունը մեջ ներկա է այս ստիպողական տարակերպությունը, որը մեզ առաջնորդում է Սաղմոսերգուցի հետ ասելու. «Առաջնորդի՛ր ինձ քո պատվիրանների շավիղներով, քանզի հաճելի են դրանք ինձ» (Հմ. 35):

Աղոթք - Սիրելի՛ Հայր, ցանկանում եմ Քեզ պաշտել ամեն օր իմ ընդունելիք որոշումներով: Ամեն:

Հնազանդությունը ազատորեն հոսում է սիրող սրտից:

Կարդա՛

Սաղմոս 118.33-48

Առաջնորդի՛ր ինձ քո պատվիրանների շավիղներով, քանզի հաճելի են դրանք ինձ: Սաղմ. 118.35

Արդարները ազգերի մեջ

Իսրայելի «Յաղ Վաշեմ» Յեղասպանություն թանգարանում Բամուսինս և ես այցելեցինք «Արդարները ազգերի մեջ» պարտեզը, որ նվիրված է այն տղամարդկանց ու կանանց, որոնք իրենց կյանքը վտանգեցին ցեղասպանության օրերին՝ հրեա ժողովրդին ազատելու համար: Մինչ դիտում էինք հուշակոթողը, հանդիպեցինք հուանդացի մի խմբի: Մի կին եկել էր տեսնելու իր տատի ու պապի անունները՝ արձանագրված մեծ քարե-տախտակին: Հետաքրքրված՝ հարցրինք իր ընտանիքի պատմության մասին:

Կնոջ տատն ու պապը՝ Վեր. Փիթեր և Ադրիանա Մյուլլերները, որոնք հակադրող ցանցի անդամ էին, երկու տարեկան հրեա մանչուկ վերցրին ու որպես իրենց ութ երեխաներից կրտսերագույնը՝ խնամեցին ու մեծացրին 1943-1945 թթ.: Հուզված հարցրինք. «Փոքր մանուկը վերապրե՞ց»: Տարեց մի մարդ առաջ գալով ասաց. «Ես եմ այդ մանուկը»: Հիշեցի Հին Կտակարանի Եսթեր թագուհուն: Նա կարող էր խորհել, թե հնարավոր է Ն.Ք. 350 թվականին Արտաշես թագավորի արձակած հրեաներին բնաջնջելու հրամանից փախուստ տալ, որովհետև թաքցրել էր իր ինքնությունը: Սակայն նա համոզված էր, որ նույնիսկ մահվան սպառնալիքի դիմաց չիտակ արարք էր, երբ Մուրթքեն աղերսեց նրան լուռ չմնալ իր հրեական ծագումի մասին, որովհետև նա դրվել էր այդ իշխանական դիրքի վրա «այսպիսի ժամանակի համար» (Եսթ. 4.14):

Հնարավոր է, որ երբեք նման որոշումի առջև չգտնվեցինք: Սակայն հավանաբար պիտի դիմագրավեցք եղած անարդարություն համար խոսելու կամ լուռ մնալու ընտրությունը: Թող Աստված ուժ ու քաջություն տա շիտակն անելու:

Աղոթք - Հայր, շնորհակալ ենք բոլոր լքյալներին և ճնշվածներին Քո ցուցաբերած սիրո համար: Օգնիր, որ կարողանանք խոսել ու գործել նրանց համար, որոնք չեն կարող: Ամեն:

**Շուրջդ կա՞ն մարդիկ, որոնց համար պիտի խոսես:
Աստուծոն հարցրու հարմար ժամանակի մասին:**

Կարդա՛
Եսթեր 4.5-14

Այսպիսի ժամանակի համար: Եսթեր 4.14

Վիճակ նորոգողը

Մինչ շոգեկառքի կայարանում սպասում էի, ժխտական խորհուրդներ միտքս խճողեցին՝ շոգեկառք բարձրանալու համար հերթի սպասող մարդկանց նման, ինչպես ճնշումը նյութական պարտավորությունների, իմ հասցեին արված անազնիվ ակնարկների և մի բան անելու անկարողությունից զգացումը ընտանիքի անդամներից մեկի դեմ գործված անարդարությունից համար: Երբ շոգեկառքը մոտեցավ, ես սոսկալի վիճակի մեջ էի:

Շոգեկառքի մեջ մտածեցի նոթ առնել Աստծո ու իմ ողբը ներկայացնելու: Երբ ավարտեցի իմ գանգատների արձանագրությունը, վերցրի բջջային հեռախոսս ու փառաբանություն երգ լսեցի: Շատ չանցած՝ իմ վատ վիճակն ամբողջովին փոխվեց:

Տեղյակ էջի, որ 94-րդ Սաղմոսի հեղինակի ճշտած միջոցին էի դիմել: Սաղմոսերգուն նախ իր սրտում եղած գանգատները պարպեց՝ ասելով. «Բա՛րձր եղիբ, որ երկիրը դատես, հատուցո՛ւմ տուր ամբարտավաններին: ...Ո՞վ ինձ հետ պիտի ելնի չարամիտների դեմ, կամ ո՞վ ինձ հետ պիտի միաբանի ընդդեմ նրանց, ովքեր անօրենություն են գործում» (Սաղմ. 93.2, 16): Նա ոչինչ չպահեց, երբ խոսեց Աստծո հետ այրիների ու որբերի դեմ գործված անարդարությունների մասին: Հենց որ իր ողբը բարձրացրեց, Սաղմոսը փոխվեց փառաբանության. «Տերն եղավ իմ ապավենը, իմ հույսի օգնական Աստվածը» (Հմ. 22):

Աստված հրավիրում է մեզ՝ մեր ողբը Իրեն բարձրացնելու: Նա կարող է մեր վախը, տխրությունը և անկարողությունը փառաբանության վերածել:

Աղոթք - Տեր, սիրոս պարպում եմ քո առջև: Ա՛ն իմ ցավերն ու բարկությունը և տուր ինձ քո խաղաղությունը: Ամեն:

Փառաբանությունն ունի՝ զորություն թեթևացնելու մեր ծանրագույն բեռները:

Կարդա՛ր
Սաղմոս 93.2, 16-23

Սրտիս ցավերի բազմաճալու ժամին քո մխիթարությունը հրճվեցնում էր իմ հոգին: Սաղմ. 94.19

Երկինքների ճեղքիր

Վերջերս մի զրույցի ժամանակ, երբ մի բարեկամուհի ինձ հայտնեց, թե իր հավատքը կորցրել է, լսեցի մի ծանոթ գանգատ. «Ինչպե՞ս կարող եմ հավատալ Աստծուն, որ կարծես երբեք ոչինչ չի անում»: Այս հարցը հայտնվում է մեզնից շատերի մտքում, երբ լուրերում լսում ենք վայրագության ու չարագործության մասին, ու մեր սրտերը ցավում են: Բարեկամուհուս այս տագնապը հստակ հայտնեց, թե ինքը անմիջականորեն Աստծո կարիքն ունի: Ցանկություն, որ բոլորս էլ ունեցել ենք:

Իսրայելի ժողովուրդը այս բանը շատ լավ գիտեր: Բաբելոնի կայսրությունը ջախջախեց Իսրայելին՝ ճզմելով նրան երկաթյա բռունցքով ու Երուսաղեմը ավերակի վերածելով: Եսայի մարգարեն բառեր արձանագրեց՝ նկարագրելու ժողովրդի մութ կասկածները. «Մ՞ըր է Նա, որ առաջնորդեց նրանց» (Ես. 63:11-15): Ու դեռ հենց այստեղից է նա աղոթք բարձրացնում՝ ասելով. «Եթե բացես երկինքը, քո ասից լեռները կսասանվեն և կհալվեն» (64.1): Իսրայելի ցավն ու վիշտը նրան Աստծուց չհեռացրին, այլ մղեցին մագարեին Աստծուն փնտրելու ու Նրան մոտենալու:

Մեր կասկածներն ու հարցերը տարօրինակ պարզև են տալիս մեզ. նրանք ցույց են տալիս, թե մենք որքա՞ն կորած ենք և թե որքա՞ն կարիք ունենք Աստծուն, որ մեզ մոտենա: Հիմա տեսնում ենք հիանալի պատմություն: Հիսուսով Աստված երկինքը ճեղքեց ու մեզ մոտ եկավ: Քրիստոսը հանձնեց իր կոտորած ու ճեղքված մարմինը, որպեսզի մեզ իր սիրով պատի: Հիսուսով Աստված մեզ շատ մոտ է:

Աղոթք - Տեր Աստված, սիրում եմ ցույց տալ, որ կարող եմ տնօրինել իմ կյանքն ու հասնել բոլոր հարցերի պատասխանների: Սակայն չեմ կարող: Քո կարիքն ունեմ: Ուզում ես երկինքը ճեղքել ու ինձ մոտ գալ: Ամեն:

Ի՞նչ հարցերի ու կասկածների մասին ես ուզում խոսել Աստծո հետ:

Կարդա՛ր
Եսայի 64.1-8

Եթե բացես երկինքը, քո ասից լեռները կսասանվեն...
Ես. 64.1

Լոռ, մամուռ և ձկներ

-Ի՞նչ է եղել ձկներին,- հարցրի ընկերուհուս: Նրա ուսին ծռված՝ նայում էի իր բջջայինի էկրանի պատկերներին, որ նկարել էր իր մանրադիտակով: Նա բացատրեց. «Օ՛, լոռի կամ մամուռի նման է, սակայն ավելի դժվար է տեսնել նրանց: Մի կաթիլ յուղ պետք է կաթեցնես սոսնձակի վրա, կամ նրանք մեռած պիտի լինեն, որպեսզի կարողանաս տեսնել»: Հիացած նստեցի ու դիտեցի, մինչ նա ցույց տվեց իր այդ սքանչելի պատկերները: Չկարողացա դադարել մտածել կյանքի մեջ դրված Աստծո հրաշագործ մանրամասների մասին, որոնք կարելի է միայն մանրադիտակով տեսնել:

Կարդա՛ր
Յոթ. 37.14-24

Ականջ դիր սրան, Յոթ, եկ խրատվիր Տիրոջ զորությանը:
Յոթ 37.14

Աստծո ստեղծագործությունն ու մատների գործերը անսահման են: Հոբի գրքում նրա բարեկամներից մեկը՝ Եղիուսը, սա է մատնանշում Հոբին, երբ նա իր կորցրածների համար տառապում էր: Եղիուսը մարտահրավեր է նետում իր ընկերոջն՝ ասելով. «Ականջ դիր սրան, Հոբ, եկ խրատվիր Տիրոջ գործությանը: Գիտե՞ք, որ Աստված տնօրինել է իր գործերը. լույսն է ստեղծել խավարի մեջ» (Հոբ 37. 14-16): Մենք, որպես մարդ արարածներ, չենք կարող նույնիսկ փոքր-ինչ հասկանալ Աստծո ու իր ստեղծագործության բարդությունը: Նույնիսկ ստեղծագործության այն մասերը որոնք մենք չենք կարող տեսնել, ցույց են տալիս Աստծո փառքն ու գործությունը: Նրա փառքը մեզ պաշարում է: Հոգ չէ, թե ինչ վիճակի մեջ ենք կամ անկարող տեսնել ու հասկանալ, Աստված գործի վրա է: Եկեք փառաբանենք Նրան այսօր, որովհետև «կատարում է մեծ ու անքննելի, փառավոր ու հրաշակերտ գործեր, որոնք թիվ ու համար չունեն» (Հոբ 5.9):

Աղոթք - Տեր, շնորհակալ եմ գործի վրա լինելուդ ու Քո ստեղծագործության մեջ դրած մեր չտեսած մանրամասների համար: Ամեն

Աստված մի՛շտ գործի վրա է:

Որդեգրված

Ուրախանում եմ, երբ մի մարդասեր որբանոց է կառուցում անտուն մանուկների համար: Ցնծում եմ, երբ այդ անձը նույնիսկ ավելին է անում ու այդ մանուկներից մեկին որդեգրում է: Որբերից շատերը ուրախ պիտի լինեն, երբ պարզապես ունենան նման հոգատարներ: Սակայն երբ իմանան, թե երաշխավորը ոչ միայն բավարարվում է պարզապես իրենց օգնելով, այլ ցանկանում է իրենց, ինչպիսի՞ զգացում պիտի ունենան: Եթե Աստծո որդի ես, ծանոթ ես այդ զգացումին, որովհետև քեզ հետ պատահել է դա: Մենք չենք կարող գանգատվել, թե Աստված միայն մեզ սիրում է այն աստիճան, որ Իր Որդուն է ուղարկել աշխարհ, որպեսզի ո՛վ հավատա նրան, «չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա» (Հովհ. 3.16): Դա բավարար պիտի լինի մեզ համար: Սակայն ոչ Աստծո համար: Նա ոչ միայն «Իր Որդուն ուղարկեց, որպեսզի օրենքի տակ եղողներին փրկի» ու վերջ, այլև «որ որդեգրություն ընդունենք» (Գաղ. 4.4-5):

Կարդա՛
Գաղ. 4.1-7

Իր Որդուն ուղարկեց...
որ որդեգրություն ընդունենք: Գաղ. 4.4-5

Պողոս առաքյալը մեզ է վերագրում «որդիներ» լինելը, որովհետև իր օրերին բնական էր, որ որդիները իրենց հոր հարստությունը ժառանգեին: Իր շեշտած կետն այն է, թե հիմա ով հավատա Հիսուսին, այր կամ կին անխտիր, Աստծո «որդի» կլինի՝ հավասար ու ժառանգությունյան ամբողջական իրավունքներով (Հմ. 7): Աստված պարզապես չի ցանկանում միայն քեզ փրկել: Նա քեզ ցանկանում է. Նա քեզ որդեգրել է՝ դարձնելու Իր ընտանիքի անդամը՝ տալով Իր անունը (Հայտ. 3.12), ու հպարտությունք քեզ կոչում է Իր որդին: Դու չես կարող սրանից ավելի սիրվել կամ ավելի կարևոր մեկից: Դու պարզապես Աստծուց օրհնված չե՛ս: Դու Աստծո որդի՛ ես: Հայրդ քեզ սիրում է:

Աղոթք - Հայր, ի՞նչ առանձնաշնորհում է Քեզ Հայր կոչել: Շնորհակալ եմ ինձ փրկելու ու ցանկանալու համար: Ամեն:

Դու փրկված լինելուց ավելին ես: Դու սիրված ես:

Ավելի խորը սեր

Երբ առաջին անգամ հանդիպեցին, Էդվին Սթենթընը հրապարակավ անարգեց Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Աբրահամ Լինքոլնին՝ որակելով նրան «երկայնաբազուկ արարած»: Սակայն նախագահը զնահատեց Սթենթընի կարողությունները և ներեց նրան իր արտահայտություն համար ու նշանակեց խորհրդարանի մեջ կարևոր պաշտոնի ներքին քաղաքացիական պատերազմի օրերին: Սթենթընի սերը Լինքոլնի հանդեպ ավելացավ, ու բարեկամությունը զարգացավ: Սթենթընը ամբողջ գիշերը նստեց Լինքոլնի մահճի մոտ՝ Ֆորդ թատերասրահում նրա հրացանահարությունից հետո ու արցունքոտ աչքերով փսփսաց, երբ Լինքոլնը մահացավ՝ ասելով. «Հիմա նա պատկանում է դարերին»:

Կարդա՛ր Ա Պետրոս 4.7-11

Բայց Աստված մեր նկատմամբ իր սերը հայտնեց. երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ: Հռոմ. 5.8

Պետրոս առաքյալը շեշտեց հաշտության կարևորությունը, երբ գրեց. «Բայց ամենից առաջ իրար նկատմամբ ջերմ սե՛ր ունեցեք, որովհետև սերը ծածկում է մեղքերի շատությունը» (Ա Պետ. 4.8): Պետրոսի այս խոսքերը ինձ մտածել տվեցին, որ նա մտածում էր իր ուրացումի (Ղուկ. 22.54-62) ու խաչի միջոցով Հիսուսի իրեն ու մեզ տրված ներումի մասին: Այն խորը սերը, որ Հիսուսը ցույց տվեց խաչի վրա Իր մահով, մեզ ազատ է արձակում մեր մեղքերից ու Աստծո հետ մեր հաշտության ճամփան է բացում (Կող. 1.19-20): Նրա ներումը մեզ ուժ է տալիս, որպեսզի մենք էլ ուրիշներին ներենք: Երբ ուրիշներին սիրենք, ինչպես Հիսուսը սիրեց, ու ներենք, որովհետև Նա Ինքն է մեզ ներել, Աստված մեզ զորություն կտա, որ անցյալը մոռանանք ու առաջ զնանք Իր հետ ու վայելենք Իր տված շնորհի գեղեցկությունը:

Աղոթք - Սիրո՛ղ Հայր, քանի որ առատորեն ինձ ներել ես, խնդրում եմ օգնիր, որ ես էլ կարողանամ ուրիշներին ներել Քո գթառատ սիրո միջոցով: Ամեն:

Աստծո ներումը քննություն է, որով դատվում եմ:

Օսվալդ Չամբերս:

Նորոգված

2003 թվականին մորեխների մորմոն ծղրիդ տեսակի համաճարապի վնասին: Մորեխները այնքան շատ էին, որ մարդիկ ոչինչ չկարողացան անել: Այս տեսակի մորեխները, որոնք 1848 թվականին հարձակվեցին Յութայի արտերի վրա, կարող են մոտ տասնհինգ կիլոգրամ բույս ուտել իրենց կյանքի կարճ ժամանակամիջոցում՝ հակառակ 5-7 սանտիմետր հասակին:

Նրանց հասցրած վնասի ազդեցությունը քանզի կարող է լինել հողագործների համար, ինչպես նաև ամբողջ նահանգի կամ երկրի տնտեսության վրա: Հին Կտարարանում Հովել մարգարեն նկարագրում է նման միջատների մի հարձակում, որ որպես հետևանք իրենց անհնազանդության՝

պիտի ավերի Հուդայի ամբողջ ազգը: Նա նախազուշակեց մորեխների հարձակում (որ Սուրբ Գրքի մի շարք մեկնաբանների համաձայն՝ փոխաբերություն է օտար ազգի բանակի), որի նմանը չէր եղել նախորդ սերունդների ժամանակ (Հով. 1.2): Մորեխները պիտի ավերեին ամեն ինչ, որ իրենց ճանապարհի վրա էր՝ պատճառ դառնալով սովի ու ժողովրդի աղքատության: Սակայն եթե ժողովուրդը ետ դառնա իր մեղքերից ու խնդրի Աստծո ներումը, Հովելն ասում է, թե Տերը «այն տարիների դիմաց, ինչ որ մորեխը, ջորյակն ու թրթուրը կերան, կհատուցեմ ձեզ իմ մեծ գորքով, որ ուղարկեցի ձեզ վրա» (Հով. 2.25): Մենք էլ դաս կարող ենք քաղել Հուդայից. միջատների նման մեր սխալ գործերը պիտի ավերեն Աստծո՝ մեզ համար ծրագրած պտղատու ու արդյունաբեր կյանքերը: Եթե հրաժարվենք մեր անցյալի սխալ ընտրություններից ու Աստծուն դառնանք, Նա խոստանում է մեր ամոթը վերցնել ու նորոգել մեզ ավելի լիառատ կյանքի համար՝ Իր մեջ:

Աղոթք - Տե՛ր, ներիր մեր բոլոր հանցանքները ու տուր մեզ նոր կյանք: Ամեն:

Աստծո սերը նորոգում է:

Կարդա՛ր Յովել 2.18-27

Եվ այն տարիների դիմաց, ինչ որ մորեխը, ջորյակն ու թրթուրը կերան, կհատուցեմ ձեզ: Յով. 2.25

Ականջները լսելու համար են

Դերասանուհի Դայան Կրուգերին առաջարկվեց ամուսին ու զավակ կորցրած երիտասարդ կնոջ ու մոր դեր: Դայանը նման կորուստ չէր ունեցել իր կյանքում ու չգիտեր, թե պիտի կարողանա՞ր այդ դերը լավ կատարել: Սակայն ընդունեց ու պատրաստվելու համար սկսեց ցավի ու վշտի միջով անցնող մարդկանց նեցուկ լինելու հանդիպումների գնալ:

Երբ խմբի մեջ եղողները իրենց պատմությունները պատմեցին, նա թելադրություններ արեց ու խորհուրդներ տվեց: Մեզինից շատերի նման ուզեց օգտակար լինել: Սակայն կամաց-կամաց սկսեց չխոսել ու պարզապես լսեց: Այդ ժամանակ սկսեց հասկանալ նրանց՝ դժվար ճանապարհի մեջ քայլելու փորձառությունը: Ու սա հնարավոր եղավ, երբ լսեց նրանց ասածները:

Երեմիայի արած ամբաստանությունը ժողովրդի դեմ նրանց «ականջները» չգործածելն էր՝ Աստծո ձայնը լսելու համար: Մարգարեն իր բառերը չձամձմեց, երբ նրանց կոչեց «հիմար և անմիտ ժողովուրդ» (Եր. 5.21): Աստված հարատև գործի վրա է մեր կյանքերի մեջ՝ սիրո, ցուցումների, քաջալերանքի և զգուշության խոսքերով: Մեր Երկնավոր Հոր ցանկությունն է, որ դու և ես սովորենք ու աճենք: Մեզ տրված են հարկ եղած գործիքները՝ դա անելու, ինչպիսին են մեր ականջները: Հարցը սա՛ է. պիտի գործածե՞նք դրանք՝ մեր Հոր սրտին լսելու համար:

Աղոթք - Հա՛յր, հավատում եմ, թե Դու միշտ խոսում ես: Ներիր իմ համառ հակումները, թե ամեն բանի պատասխանն ունեն: Բա՛ց ականջներս, որպեսզի լսեմ: Ամեն:

Մեր ականջները կարող են օգնել մեզ, որ աճենք մեր հավատքի մեջ, եթե լսենք:

Կարդա՛

Երեմիա 5.18-23

Լսեցե՛ք այս բանը, հիմար և անմիտ ժողովուրդ, որ աչքեր ունեք, բայց չեք տեսնում, ականջներ ունեք, բայց չեք լսում: Եր. 5.21

Ամեն ինչ, որ տեսնում եմ

Քրիսթան ձմռան մի ցուրտ օր տեսավ լճի մյուս կողմում գտնվող գեղեցիկ ձյունապատ փարոսը: Երբ իր բլջային հեռախոսը վերցրեց նկարելու, իր ակնոցի ապակիները մշուշոտվեցին: Ոչինչ չտեսնելով՝ նա որոշեց գործիքը ուղղել դեպի փարոսը ու երեք տարբեր անկյուններից նրա նկարները առնել: Հետո նայելով այդ պատկերներին՝ նկատեց, որ ինքնանկարի կոճակն էր սեղմել: Նա խնդալով ասաց. «Կենտրոնացումս ես էի, ե՛ս ու ե՛ս: Ամեն ինչ, որ տեսա, ես էի»: Քրիսթայի պատկերները ինձ մտածել տվեցին նման սխալի մասին: Մենք կարող ենք այնքա՛ն անձնակենտրոն լինել, որ չկարողանանք տեսնել Աստծո ծրագրի մեծ պատկերը:

Կարդա՛ր
Յովհ. 3.22-35

Նա պետք է
մեծանա, իսկ ես
փոքրանամ:
Յովհ. 3.30

Հիսուսի զարմիկը՝ Հովհաննեսը, հստակ գիտեր, թե իր կենտրոնացումը իր անձի վրա էր: Սկզբից լավ իմացավ, որ իր կոչումն ու պարտականությունը մարդկանց Հիսուսին՝ Աստծո Որդուն առաջնորդելն էր: Երբ տեսավ Հիսուսին, որ դեպի իրեն էր գալիս, ասաց. «Ահա՛ Աստծու Գառը» (Հովհ. 1.29), ապա շարունակեց. «...Որ նա հայտնի լինի Իսրայելին, նրա համար ես եկա ջրով մկրտելու» (Հմ. 31): Հետո, երբ իր աշակերտները տեղեկացրին, թե շատերն են Հիսուսին հետևում, նա ասաց. «Դուք ինքներդ իմ մասին վկայում եք, որ ձեզ ասել եմ. «Ես Քրիստոսը չեմ, այլ նրա առջևից եմ ուղարկվել... Նա պետք է մեծանա, իսկ ես փոքրանամ» (3.28, 30):

Թո՛ղ որ մեր կյանքերում կենտրոնական տեղը Հիսուսն ու ամբողջ սրտով Նրան սիրելը լինի:

Աղոթք - Հայր, շատ անգամ ես իմ անձի ու կարիքների վրա եմ կենտրոնացնում: Օգնիր, որ կարողանամ ինձնից դուրս նայել ու Քեզ տեսնել: Ամեն:

**Ինչպե՞ս կարող եմ Հիսուսին սիրել:
Ո՞ւմ է ուզում, որ սիրեմ:**

Սրտի շարժումները

Ըստ Միացյալ Նահանգների վիճակագրության գրասենյակի՝ ամերիկացիները իրենց կյանքի ընթացքում փոխում են բնակության վայրը միջին հաշվով 11-12 անգամ: Ըստ տվյալների՝ վերջերս մեկ տարում 28 միլիոն մարդ է նոր բնակության վայր ընտրել: Իսրայելի՝ քառասուն տարի անապատում գտնվելու ընթացքում Աստծո ներկայության ամպը ամբողջ ազգին առաջնորդեց, որպեսզի հաճախ փոխեր բնակավայրը՝ հույս ունենալով, որ նոր տուն կգտնի: Տեսնում ենք, որ պատմությունը միշտ կրկնվում է. նորից ու նորից Իսրայելի մեծ ընտանիքը ոչ միայն վերցնում է իր ունեցվածքն ու տեղափոխվում, այլև տանում է Վկայության Տապանակի վրանն ու նրա կահավորումը, ուր ամպի Աստվածը հանդիպեց Մովսեսի հետ (տես Ել. 25.22):

Բազմաթիվ տարիներ անց Հիսուսը ավելի ամբողջական իմաստ տվեց Իսրայելի այս հաճախակի տեղափոխության օրերին: Փոխանակ ամպով առաջնորդելու՝ Նա Իր անձով եկավ: Երբ ասաց. «Իմ հետևի՛ց եկեք» (Մատթ. 4.19), սկսեց ցույց տալ, թե ամենակարևոր հասցեի փոփոխությունը պատահում է մեր սրտի ճամփաների մեջ: Առաջնորդելով թե՛ բարեկամներին և թե՛ թշնամիներին հոռմեական խաչի մոտ՝ Նա ցույց տվեց, թե ամպի ու տապանակի Աստվածը ինչե՛ր է անում մեզ փրկելու համար:

Հասցեի փոփոխությունների նման մեր սրտի խորհուրդներն էլ անկայուն են: Սակայն մի օր մեր Հոր տան պատուհաններից մեկի միջից պիտի տեսնենք, որ Հիսուսը մեզ առաջնորդել է ամբողջ ճանապարհին:

Աղոթք - Տե՛ր, գիտես, թե որքան չենք սիրում շարժվել: Սակայն ուզում ենք Քեզ հետևել: Խնդրում ենք օգնիր մեզ այսօր, որ գնանք ուր որ առաջնորդում ես: Ամեն:

Աստծուն հետևելը թվում է անկայուն վիճակում լինել, սակայն աղոթի, որ Աստված հավատքի գորացնի ու վստահություն ներշնչի քեզ:

Կարդա՛ր Թվեր 9.15-23

Երբ ամպը վերանում էր խորանից, իսրայելացիները ճանապարհ էին ընկնում եւ բանակատեղի դնում ամպի կանգ առած տեղում: Թվեր. 9.17

Մերը մեզ փոխում է

Հիսուսին հանդիպելուց առաջ, խորապես վիրավորված՝ մտերիմ հարաբերություններ մշակելը անտեսեցի՝ վախենալով, որ ավելի կարող եմ վիրավորվել: Միայն մայրս մնաց իմ մոտ բարեկամը, մինչև որ ամուսնացա Ալանի հետ: Յոթ տարի հետո գրեթե ամուսնալուծման եզրին հասած՝ Կիրակի մի օր մանկապարտեզ հաճախող մեր փոքրիկ ինսվիերին գրկած՝ եկեղեցու պաշտամունքի դնացի ու վախով դռան մոտ նստեցի՝ օգնություն կարոտով: Բարեբախտաբար եկեղեցուց շատերը մոտեցան ու մեր ընտանիքի համար աղոթեցին ու սովորեցրին, թե ինչպես կարելի էր Աստծո հետ հարաբերություն մշակել աղոթքով ու Աստվածաշնչի ընթերցումով: Այդ օրվա առաջին եկեղեցական պաշտամունքից երկու տարի հետո Ալանը, ինսվիերը և ես մկրտություն խնդրեցինք: Որոշ ժամանակ հետո շաբաթամիջի գրույցի հանդիպման ժամանակ մայրս ասաց. «Դու տարբեր ես: Ավելի շատ պատմիր ինձ Հիսուսի մասին»: Մի քանի ամիս անց ինքն էլ ընդունեց Քրիստոսին՝ որպես իր Տերն ու Փրկիչը: Տեր Հիսուսը կյանքեր է վերափոխում Սողոսի կյանքի նման, որ Քրիստոսի եկեղեցին ամենից ավելի վախ պատճառող հալածողներից էր, մինչև այն օրը, երբ Հիսուսին հանդիպեց (Գործք Առ. 9.1-5): Ուրիշներն օգնեցին Սողոսին, որ ավելին սովորի Հիսուսի մասին (Հմ. 17-19): Նրա վերափոխությունը ավելացրեց Հոգիով զորացած ուսուցման վավերականությունը (Հմ. 20-22):

Կարդա՛ր
Գործք Առ. 9.1-22

Եվ շուտով ժողովարաններում Քրիստոսին քարոզեց, թե՛ «Սա է Աստծու Որդին»:
Գործք Առ. 9.20

Մեր առաջին հանդիպումը Հիսուսի հետ Սողոսի հանդիպումի նման, վերափոխությունը ուժգին ու արագ կարող են չլինել, սակայն մարդիկ պիտի նկատեն, թե ինչպես է Քրիստոսի սերը մեզ փոխել ժամանակի ընթացքում, ու մենք առիթ պիտի ունենանք նրանց պատմելու մեր փորձառություն մասին:

Մեր առաջին հանդիպումը Հիսուսի հետ Սողոսի հանդիպումի նման, վերափոխությունը ուժգին ու արագ կարող են չլինել, սակայն մարդիկ պիտի նկատեն, թե ինչպես է Քրիստոսի սերը մեզ փոխել ժամանակի ընթացքում, ու մենք առիթ պիտի ունենանք նրանց պատմելու մեր փորձառություն մասին:

Աղոթք - Տեր, շնորհակալ եմք, որ մեզ հիշեցնում ես, որ Դու դեռ կյանքեր փոխելու գործի մեջ ես: Ամեն:

Արժե՛ք Քրիստոսի սիրով փոխված կյանքի մասին խոսել:

Պատրաստված բարի գործեր

Երբ անծանոթ մի հսկա մարդ մոտեցավ կնոջս ու ինձ փողոցում քարտասահման ճամփորդության ընթացքում, մենք վախով ետ քաշվեցինք: Մեր պտույտը լավ չէր ընթանում. մենք հաճախ էինք խաբվել, պախարակվել ու թալանվել: Ու հիմա դարձյա՞լ ցնցում պիտի ունենայինք: Սակայն զարմանալի էր. մարդը պարզապես ցանկանում էր ցույց տալ, թե որտեղից կարելի էր իր քաղաքի լավագույն տեսարանը ըմբռնել: Ապա նա մեզ տվեց տուրմի մի կտոր, ժպտաց, թողեց գնաց: Նրա այս փոքր, սակայն ազնիվ արարքը մեր օրը պայծառացրեց ու թե՛ մարդու և թե՛ Աստծո հանդեպ մեզ երախտագիտության հոգի տվեց՝ մեզ ուրախացնելու համար:

Ի՞նչը պատճառ դարձավ, որ այդ օտար մարդը մեզ մոտենա: Արդյո՞ք ամբողջ օրը նա տուրմի կտորով շրջել էր՝ փնտրելով մեկին, որպեսզի ուրախացնի:

Որքա՞ն հիանալի է, որ նման փոքր արարքը կարող է դնել մեծագույն ժպիտը մեր դեմքերին ու հավանաբար մեկին առաջնորդի դեպի Աստված: Աստվածաշունչը շեշտում է բարի գործ անելու կարևորությունը (Հակոբոս 2.17,24): Եթե դա մարտահրավեր էր, մենք ունենք վստահություն, թե Աստված ոչ միայն մեզ կարողություն է տալիս այդ բարի գործերը անելու, այլև նույնիսկ «առաջուց պատրաստեց» (Եփ. 2.10), որ մենք կատարենք: Գուցե Աստված մեզ էլ պատրաստել է մեկին մոտենալու, որ այսօր քաջալերական խոսքերի կարիք ունի, կամ մեզ առիթ է տվել մեկին օգնության ձեռք երկարելու: Մենք պարզապես կարիք ունենք հնազանդություն մեր կոչին ընդառաջելու:

Աղոթք - Տե՛ր, թող հնազանդությամբ Քո սերը կիսեմ ուրիշների հետ, ինչպես Դու ես ինձ սիրել: Ամեն:

Աղոթիր Աստծուն, որպեսզի տեսնես, թե ո՞ւմ է դրել քո ճանապարհին:

Կարդա՛ Եփես. 2.6-10

...Նրա ստեղծագործությունն ենք՝ Քրիստոս Դիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնք Աստված առաջուց պատրաստեց մեզ համար, որպեսզի դրանցով ընթանանք: Եփես. 2.10

Մեզ կանգուն պահող նպատակը

Ամեն բան նպատակ ունի: Աննպատակ բան չի կարող լինել: Վիկտոր Ծրանքըը նացիստների կողմից իր կրած տառապանքների մասին ասում է. «Ոչինչ այս աշխարհի մեջ մեզ չի կարող օգնել, որ կարողանանք տառապանքներին տոկալ, հաղթել և վերապրել, քան այն գիտակցությունը, թե կա մի նպատակ մեր կյանքի մեջ, որի համար արժե ապրել»: Պողոս առաքյալը, այլևս նման տառապանքների փորձառությունը ունենալով, ասում է. «Որովհետև ինձ համար կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ շահ» (Փիլ. 1.21): Նույնանման արտահայտություն ունեցան Վարդանանք Ավարայրի ճակատամարտի նախօրյակին, երբ իրենց սպառնացողին ասացին. «Ձեր սուրը և մեր պարանոցը»: Պողոսի նման մենք էլ պատրաստ լինենք ամեն բանի և ասենք, թե ապրելը մեզ համար Քրիստոսն է, ու մեռնելը՝ շահ, ու որդեգրենք որոշ նպատակ մեր կյանքերի համար: Եթե չունենք, հիմա՛ է ժամանակը ճշտելու այն: Պիտի կրենք ամեն տեսակի նեղություն ու հալածանք, պիտի ունենանք հակառակորդներ, մեզ չսիրողներ, նախանձողներ և մեր Քրիստոնեական հավատքին սպառնացողներ: Սակայն կարևորը այդ նեղ պահերին մեր հավատարմությունն է: Որպես Աստծո ծառաներ՝ հավատարիմ պիտի շարունակենք մեր ընթացքը՝ այն համոզումով, թե մեր հետապնդած նպատակը մեզ համար պիտի ապահովի հավիտենական կյանք: Վարդանանք հետապնդեցին հստակ նպատակ ու եղան անմահ հերոսներ: Հալածանք, տառապանք ու նեղություն անպակաս են: Նման վիճակների մեջ հաստատ մնանք մեր հավատքի մեջ, հուսանք Հիսուսին Վարդանի ու իր ընկերների նման, վասն հայրենիքի ու վասն հավատքի:

Աղոթք - Տե՛ր Աստված, օգնիր մեզ, որ Վարդանի ու իր ընկերների նման կարողանանք ճշտել մեր կյանքի նպատակն ու հավատարմորեն ծառայենք Քեզ մինչև մահ: Ամեն:

Կյանքի նպատակը հաստատ պահելը կարող է նշանակել օգտակար մահ:

Կարդա՛
Փիլիպ. 1.12-26

Որովհետև ինձ համար կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ շահ: Փիլիպ. 1.21

Իմ իրական ինքնությունը գտնել

Միք Ինքփենի գրած «Ոչինչ» խորագրով մանկական գրքում «Ո՞վ եմ ես» հարցը ինքն իրեն տալիս է վերնահարկի փոշոտ անկյունում լքված կտորից շինված հին ու մաշած փափուկ մի խաղալիք կենդանի: Երբ կահույք փոխադրող մարդիկ նրան անվանում են «Ոչինչ», նա մտածում է, թե իր անունը Ոչինչ է:

Ուրիշ կենդանիների հանդիպելով՝ հիշում է, թե ինքը ժամանակին ունեք պոչ, կատվի բեխ և մորթին նախշեր: Ու այս բոլորը հիշում է, երբ հանդիպում է նախշուն մի կատվի, որ օգնում է իր տան ճամփան գտնել ու հիշել, թե ինքն էլ կտավից շինված կատու է՝ Թոբի անունով: Իր տերը սիրով է նորոգում նրան՝ կարելով նոր ականջներ, պոչ, կատվի բեխեր, և նախշեր ավելացնում:

Երբ այս գիրքը կարդում եմ, մտածում եմ իմ ինքնություն մասին: «Ո՞վ եմ ես»: Գրելով հավատացյալներին՝ Հովհաննեսն ասում է, թե Աստված մեզ իր զավակներն է կոչում (Ա Հովհ. 3.1): Մենք ամբողջովին չենք հասկանում այդ ինքնությունը, սակայն երբ տեսնենք Տեր Հիսուսին, նրա պես պիտի լինենք (Հմ. 2): Ճիշտ Թոբի կատվի նման մենք էլ մի օր պիտի նորոգվենք և ունենանք մեզ համար նպատակադրված ինքնություն, որ սակայն ազավաղված է մեղքով: Հիմա մենք այդ ինքնությունը մասամբ ենք հասկանում, սակայն մի օր, երբ Հիսուսին տեսնենք, մենք ամբողջովին պիտի նորոգվենք և մեր ամբողջական ինքնությունը պիտի ունենանք: Մենք նոր ստեղծված պիտի լինենք:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմք մեզ ազատելու ու նորոգելու համար: Ամեն:

**Ո՞ր կարելի է գտնել մեր իրավ ինքնությունը:
Արժե՛ մտածել:**

**Կարդա՛ր
Ա Յովհ. 2.28-3.3**

...բայց գիտեմք, որ երբ նա հայտնվի, նրա նման կլինենք, որովհետև կտեսնենք նրան, ինչպես որ է: Ա Յովհ. 3.2

Ապրել լույսերը բաց

Աշխատանքային մի հանձնարարություն ավարտելուց հետո աշխատակիցս ու ես օրվա ուշ ժամերին ճամփա ելանք տուն վերադառնալու 250 մղոն հեռավորության վրա եղած մեր տեղից: Նկատի առնելով տարիքս՝ տկար մարմնով ու աչքերով դժվար էր ինձ համար գիշերով մեքենա վարելը: Սակայն հակառակ այս իրողության՝ առաջարկեց, որ նախ ես վարեմ: Բռնեցի ղեկը և ուշի ուշով կենտրոնացա աղոտ լույսերով լուսավորված ճանապարհի վրա: Մինչ վարում էի, զգացի, որ ավելի լավ եմ տեսնում, երբ մեր ետևի մեքենաները բացում են իրենց բարձր լույսերը: Սակայն շատ ավելի լավ զգացի, երբ գործակիցս հանձն առավ մեքենան վարել: Այն ժամանակ տեսավ, որ ես միայն մշուշի համար նախատեսված լույսերն էի բացել ու ոչ թե ճիշտ լուսարձակները:

118-րդ Սաղմոսը գլուխգործոցն է նրա, որ շատ լավ հասկացավ, թե Աստծո խոսքը մեզ հարկավոր ամենօրյա լույսն է հայթայթում (Հմ. 105): Ու դեռ որքա՛ն հաճախ ենք մենք մեզ գտնում այդ երեկո ճանապարհին իմ ունեցած անհանգիստ վիճակի նման պարագաներում: Մենք անիմաստ տքնում ենք տեսնելու ու շատ հաճախ ենք շեղվում լավագույն ուղիներից, որովհետև մոռանում ենք Աստծո խոսքի լույսը գործածել: 118-րդ Սաղմոսը մեզ քաջալերում է, որ սեղմենք «լույսի կոճակը»: Ի՞նչ է պատահում, երբ լույսերը բացում ենք: Մաքրության իմաստություն ենք գտնում (Հմ. 9-11). ետզարձի ճամփաների չզիմելով՝ գտնում ենք նոր դրդապատճառ ու քաջալերանք՝ առաջ գնալու համար (Հմ. 101.102): Ու երբ ապրում ենք լույսերը բաց, Սաղմոսերգուհի փառաբանությունը մեր փառաբանությունն է դառնում. «Որքա՛ն սիրեցի օրենքները քո, նրանք գիշեր-ցերեկ իմ խոհերն էին» (Հմ. 97):

Աղոթք - Յա՛յր, խնդրում եմ, լցրո՛ւ սիրտս Քո խոսքով, որպեսզի ունենամ այսօրվա համար հարկավոր լույսը: Ամեն:

Չպիտի խարխափես մուրի մեջ, եթե Աստծո խոսքի լույսի մեջ քայլես:

Կարդա՛

Սաղմ. 118.9-16, 97-105

Իմ ճանապարհները հաջող կլինեն, եթե քո պատվիրանները պահեմ: Սաղմ. 118.5

Յեղիճակութիւն տալ

1960-ական թթ. սկզբում մեծ ու տխուր աչքերով անձ ներկայացնող անսովոր նկարները ժողովրդականութիւնը սկսեցին վայելել: Ոմանք դրանք համարեցին «տգեղ» ու «անճաշակ», սակայն ուրիշները հիացան նրանցով: Երբ արվեստագետի ամուսինը սկսեց կնոջ ստեղծագործութիւնները հրատարակ հանել, զույգը հաջողութիւն գտավ: Սակայն արվեստագետի՝ Մարգրեթ Քրիչի ստորագրութիւնը չերևաց իր գործերի վրա: Ընդհակառակը՝ նրա ամուսինը ներկայացրեց դրանք որպես իր ստեղծագործութիւնները: Մարգրեթը վախով լռեց այս զեղծարարութեան մասին, մինչև որ զույգի ամուսնութիւնը վերջ գտավ քսան տարի անց: Դատական վճռի կարիք եղավ՝ արվեստագետի իսկական ինքնութիւնը փաստելու համար: Այդ մարդու արած խաբեութիւնը ակնհայտ էր, սակայն որպես Հիսուսի հետևողներ՝ մենք էլ հեշտ ենք գտնում հեղինակութիւն մեր ունեցած տաղանդի ու մեր ցուցաբերած առաջնորդութեան կամ ուրիշներին մեր արած բարի գործերի համար: Սակայն այդ հատկութիւնները ունենալը հնարավոր է միայն Աստծո տված շնորհով: Երեմիա 9-ի մեջ գտնում ենք Մարգարեի ողբը ժողովրդի խոնարհ չլինելու և չզղջացող սիրտ ունենալու համար: Այնտեղ Տերն ասում է, որ չպիտի պարծենանք մեր իմաստութեան, կարողութեան ու հարստութեան համար, այլ միայն հասկանանք ու գիտենանք, թե ինքն է Տերը, որ «գատաստան, ողորմութիւն և արդարութիւն է անում» (Հմ. 24): Մեր սրտերը երախտագիտութեամբ են լցվում, երբ տեսնում ենք արվեստագետի իսկական ինքնութիւնը: «Ամեն բարի տուրք ու ամեն կատարյալ պարգև վերեւից է, լույսի Հորից» (Հակ.1.17): Ամբողջ վարկն ու փառաբանութիւնը պատկանում են բարի պարգևներ Տվողին՝ միմիայն Աստծուն:

Կարդա՛ր
Երեմիա 9.23-26

Ինչպես որ գրված է.
«Նա, ով պարծենում է, Տիրոջով թող պարծենա»:
Ա Կորնթ. 1.31

Աղոթք - Սիրելի՛ Յայր, շնորհակալ եմ բոլոր բարի պարգևների համար, որ Դու Քո շնորհով ես մեզ տալիս: Ամեն:

Մենք ստեղծված ենք Աստծուն փառք տալու համար:

Աստծուց տեսնված

Իմ գործածած առաջին ակնոցը բացեց աչքերս՝ հստակ աշխարհ տեսնելու համար: Ես կարճատես եմ. մոտ բաները շատ հստակ ու մանրակրկիտ եմ տեսնում: Սակայն առանց ակնոցիս սենյակի մյուս կողմում գտնվող բաները պղտոր են երևում: Տասներկու տարեկանում, երբ առաջին անգամ ակնոց սկսեցի գործածել, հիացա, երբ շատ պարզ տեսա դասարանի գրատախտակին գրված բառերը ու ծառերի փոքր տերևները, ու ամենից կարևորը, մեծ ժպիտները մարդկանց դեմքերին: Երբ բարեկամներս ժպիտով բարևեցին, ես էլ փոխադարձեցի իմ ժպիտով ու հասկացա, թե տեսնվելն էլ մեծ պարգև է՝ տեսնելու պարգևի նման: Հազարը նկատեց դա, երբ փախուստ տվեց Սաուայի անազնավթյունից: Հազարը ոչ ոք էր իր միջավայրում՝ հղի ու միայնակ, անպատ փախած, առանց հույսի և օգնության: Սակայն Աստծուց տեսնված՝ նա գործություն է ստանում՝ Տիրոջը տեսնելով իր այդ վիճակում: Այլևս անորոշ հայեցակարգ չէր. Աստված իրական էր նրա համար, այնքան իրական, որ նա Աստծուն մի անուն էլ է տալիս. «Լահայրո», որ նշանակում է «տեսիլքիս մեջ երևացած Աստված»: Նա ասում է. «Ես իմ առաջ տեսա նրան, ով երևացել է ինձ» (Մննդ. 16.13): Մենք էլ կարող ենք տեսնել մեր Աստծուն: Երբ լքված, անտեսված ու միայնակ զգաս, վստահ եղիր, որ Աստված քեզ ու քո ապագան տեսնում է: Հետևաբար, թող որ մենք իրեն տեսնենք՝ որպես մեզ հետ միշտ ներկա եղող, մեզ քաջակերող, հույս ներշնչող ու փրկություն և ուրախություն տվող Աստված, հիմա և միշտ: Այսօր փառք տուր Աստծուն՝ տեսնելու պարգևի համար, որով կարող ես տեսնել միակ ճշմարիտ ու ապրող Աստծուն:

Աղոթք - Տե՛ր, ես պարզապես մեկ անձ եմ մեծ աշխարհի մեջ, սակայն շնորհակալ եմ, որ վերևից ես նայում ու ինձ տեսնում, որպեսզի ես էլ կարողանամ Քեզ տեսնել: Ամեն:

Աստված անունս գիտի ու տեսնում է ինձ:

Կարդա՛ր Ծննդոց 16.7-14

Ազարն իր հետ խոսող Տիրոջը դիմելով ասաց. «Դու այն Աստվածն ես, որ ինձ զորավիզ եղավ. և քանզի ասաց, և ես իմ առաջ տեսա նրան, ով երևացել է ինձ»:
Ծննդ. 16.13

Պատերազմը

Երբ երկիրը ցնցող հզորություններով թնդանով ռուսները ընկան, երկտասարդ գինովորը ջերմեռանդ աղոթեց. «Տե՛ր, եթե այս վտանգից ինձ ազատես, մորս փափազի համաձայն պիտի գնամ Սուրբ Գրոց վարժարան»: Աստված լսեց նրա բարձրացրած աղոթքը: Հայրս վայելեց Աստծո պաշտպանությունը ու վերապրեց Համալսարհային երկրորդ պատերազմը, հաճախեց Մուղի Սուրբ Գրոց ճեմարան ու իր ամբողջ կյանքը նվիրեց Աստծո ծառայության: Ուրիշ մի մարտիկ տարբեր տեսակի ճգնաժամի միջով անցավ, որ նրան առաջնորդեց Աստծուն: Սակայն նրա մոտ խնդիրներ ծագեցին, երբ խուսափեց մարտից: Մինչ Դավթի բանակը կռվում էր ամոնացիների դեմ, նա իր պալատում հանգստանում էր և ուրիշի կնոջը նայելով ցանկանում նրան (տե՛ս Բ Թագ. 11): 38-րդ Սաղմոսում Դավիթը նկարագրում է իր ցավալի վերանորոգումն ու զրջումը իր գործած մեղքի հետևանքով: Իր մեջ տազնապարհ ավելի վատթարացավ. որքան շատ մտածեց նրա մասին, այնքան ավելի սաստկացավ իր ցավը: Դավթի կոտրած հոգին պատճառ եղավ այս խոսքն ասելու. «Տե՛ր, ցո՛ւյց տուր ինձ, թե ե՞րբ է իմ վախճանը, և որքան է կյանքիս օրերի թիվը» (Հմ. 5): Նորոգության վրա իր ունեցած կենտրոնացումի մեջ Դավիթը չհուսահատվեց: Նա ուրիշ տեղ չունեի գնալու: Ասաց. «Իսկ արդ, ո՞վ է իմ համբերությունը, եթե ոչ դու, Տե՛ր...» (Հմ. 8): Դավիթը պիտի կարողանար գոյատևել իր այս անձնական պատերազմի մեջ ու իր անձը նվիրել Աստծուն ծառայելու: Կարևոր չէ, թե ինչն է գրվում մեզ աղոթքի կյանքին, կարևորը աղոթքի վրա մեր ունեցած կենտրոնացումն է: Աստված մեր հույսի աղբյուրն է. Նա ուզում է, որ մեր սրտերը բացենք Իր առջև:

Աղոթք - 3այր, Քո մեջ է մեր հույսը: Ներիր մեզ, երբ Քեզնից զատ ուրիշ տեղ եմք փնտրում պատասխանները: Մեզ այսօր ավելի Քեզ մոտեցրու: Ամեն:

Մեր երևակայած լավագույն տեղում կարող եմք լինել, երբ մեր աղոթքով Աստծուն դիմենք:

Կարդա՛ր
Սաղմոս 38.1-7

Իսկ արդ, ո՞վ է իմ համբերությունը, եթե ոչ դու, Տե՛ր, կամ իմ ուժն ու կարողությունը քեզնից չէ՞ միթե: Սաղմ. 39.8

Իրավիճակից դուրս

Երբ ինքնաթիռ մտնելու համար հերթիս էի սպասում, մեկը ուսս թակեց: Երբ ետ դարձա, մի կին ջերմությամբ ողջունեց ինձ ու ասաց. «Էլիսա՛, ինձ հիշո՞ւմ ես: Ես Ջոանն եմ»: Մի պահ մտքումս ինձ ծանոթ տարբեր Ջոաններ եկան, սակայն չհիշեցի իրեն: Հնարավոր է նախկին դրացի էր, անցյալի աշխատակի՞րց: Չէի հիշում: Զգալով պայքարս՝ Ջոանն ասաց. «Էլիսա՛, մենք իրար ճանաչում էինք ավագ դպրոցից»: Հուշեր արթնացան մեջս՝ ուրբաթ երեկոներ, Ֆուտբոլի խաղեր, ոգևորողներ: Հանկարծ պատկերը հստակացավ. հիշեցի նրան:

Հիսուսի մահից հետո Մարիամ Մագդաղենացին առավոտ կանուխ գերեզման գնաց ու տեսավ, որ գերեզմանի բարը վերցված էր, ու Հիսուսի մարմինը չկար (Հովհ. 20.1-2): Նա վազեց Պետրոսին ու Հովհաննեսին կանչելու, որոնք իր հետ եկան ու պարապ գերեզմանը տեսան (Հմ. 3-10): Սակայն Մարիամը գերեզմանի մոտ կանգնել ու լալիս էր (Հմ. 11): Երբ Հիսուսը երևաց նրան, չիմացավ, որ Հիսուսն է (Հմ. 14)՝ կարծելով, թե պարտիզական է (Հմ. 15): Ինչպե՞ս նա չճանաչեց Հիսուսին: Արդյո՞ք Նրա հարուցյալ մարմինը այնքան շատ էր փոխվել, որ անճանաչելի էր: Կամ իր վիշտն ու նեղութի՞ւնն էին նրան կուրացրել: Եվ կամ ինձ նմա՞ն մտածեց, թե Հիսուսը «իրավիճակից դուրս» էր ու կենդանի կանգնած պարտեզում՝ փոխանակ մեռած լինելու. դրա համա՞ր նրան չճանաչեց:

Հնարավոր է, որ մենք էլ չճանաչենք Տեր Հիսուսին, երբ մեզ մոտենա ազդիթի կամ Աստվածաշունչ կարգալու ժամանակ, և կամ էլ պարզապես երբ մեր սրտերի մեջ փսփոսա:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, տո՛ւր մեզ աչքեր՝ Հիսուսին տեսնելու, ինչպես էլ մեզ մոտ գա՛ ծանոթ իրավիճակում կամ անակնկալ՝ անսպասելի կերպով: Ամեն:

Ակնկալիր Հիսուսին տեսնել անակնկալ տեղերում:

Կարդա՛
Յովհ. 20.13-16

...իր հետևի կողմը շուռ եկավ ու Հիսուսին կանգնած տեսավ, բայց չգիտեր, որ Հիսուսն էր:
Յովհ. 20.14

Սիրո մեջ ընկղմվել

1964-ի հունվարի 6-ին վերջապես տասնյոթ տարեկան Ռենդի Գարդները արեց մի բան, որ նպատակով չէր արել տասնմեկ օր, քսանհինգ ըրպե՝ քնեց: Նա ուզում էր Գինեսի գրքում նոր մրցանիչ արձանագրել, թե որքան երկար կարող է մարդ արարածը արթուն մնալ: Անդադար զովացուցիչներ խմելով, բասկետբոլ խաղալով ու տարբեր տեսակի շարժումներ անելով՝ նա կարողացավ արթուն մնալ մեկուկես շաբաթ: Մինչ վերջնական տապալումը դժվարացավ համ զգալու, հոտառության ու լսելու մեջ: Տասնյակ տարիներ հետո Գարդները տառապեց սաստիկ անքնությամբ:

Կարդա՛ր
Սաղմոս 126.1-2

Նա քուն է տալիս իր սիրելիներին:
Սաղմ. 126.2

Մեզնից շատերը պայքարում են հարկավոր գիշերային հանգստի համար: Ոչ Գարդների նման, որ նպատակադրված իրեն քնից զրկեց, մենք էլ կարող ենք անքնությունից տառապել զանազան պատճառներով՝ կարոտ, սրտնեղություն, հոգս և վախ մարդկանց՝ մեզնից ակնկալվածն ու ամեն բան չկարողանալ անելու հանդեպ ու մեր վազվզոցի ճնշող ազդեցությունից: Երբեմն մեզ համար դժվար է մեր ունեցած վախի զգացումներից անջատվել ու հանդարտվել:

Սաղմոսերգուն ասում է. «Եթե Տերը տունը չչինի, իզուր են չարչարվում այն շինողները» (Հմ. 126.1): Մեր ծանրաբեռնվածությունը ու մեր անհանգստությունը անօգուտ են, երբ Աստված մեր կարիքները հոգում է: Բարեբախտաբար, Աստված հայթայթում է մեզ հարկ եղածը: «Նա քուն է տալիս իր սիրելիներին» (Հմ. 2) ու Նրա սերը մեզ բոլորիս է հասնում անխտիր: Նա հրավիրում է մեր մտահոգություններն ու ճնշումները իրեն հանձնել ու իր տված հանգստության ու շնորհի մեջ ընկղմվել:

Աղոթք - Հայր, մտահոգ եմ ու ներքնապես փոթորկված: Կօգնե՞ս իմ Քեզ վստահել իմ անքուն գիշերները, օրերն ու ամբողջ կյանքը: Ամեն:

Աստծուն վստահելը մեր մտահոգությունները փարատում ու մեզ հանգստության է առաջնորդում:

Բարի գործեր

Մայրս աշխատանքից վերադառնալուց հետո ինձ ասաց. - Էսթերա՛, նվեր ունես մեր բարեկամ Հելենից:

Մեր նյութական նեղ վիճակի բերումով շատ բան չունեինք, ուստի նվեր ստանալը երկրորդ Ծնունդ ունենալու նման բան էր: Այս կնոջ միջոցով ես սիրված, հիշված ու արժևորված զգացի Աստծո կողմից: Խնդճ այրի կանայք հավանաբար նույն զգացումները ունեցան, երբ ամեն անգամ Տաբիթան, որ թարգմանվում է Այծեմնիկ, հանդերձներ շինեց ու նվիրեց նրանց: Նա Հիսուսին հավատարիմ աշակերտ էր, մի որբ, որ Հոպպեում էր ապրում ու լավ ճանաչում ուներ իր կատարած բարի գործերի համար: «Նրա կյանքը լի էր բարի գործերով ու ողորմութիւններով» (Գործք Առ. 9.36):

Կարդա՛
Գործք Առ. 9.32-42

Նրա կյանքը լի էր բարի գործերով ու ողորմություններով:

Գործք Առ. 9.36

«Նրա կյանքը լի էր բարի գործերով ու ողորմութիւններով» (Գործք Առ. 9.36): Երբ Պետրոսը գտնվում էր մոտակա մի քաղաքում, Տաբիթան հիվանդացավ ու մեռավ: Երկու հավատացյալներ Պետրոսի ետևից գնացին ու խնդրեցին, որ Հոպպե վերադառնա: Երբ Պետրոսը հասավ, այրի կանայք ցույց տվեցին Տաբիթայի արած բոլոր բարի գործերի ապացույցները. «Յուրջ էին տալիս այն շապիկներն ու զգեստները, որ Այծեմնիկն էր պատրաստում, քանի դեռ իրենց հետ էր» (Հմ. 39): Չգիտեմք, նրանք Պետրոսին խնդրեցի՞ն, սակայն Սուրբ Հոգուց առաջնորդված՝ Պետրոսն աղոթեց, ու Աստված մեռած կնոջը ոտքի հանեց: Աստծո արած բարության իբրև արդյունք՝ «հայտնի դարձավ ամբողջ Հոպպեում, ու շատերը հավատացին Տիրոջը» (Հմ. 42):

Մինչ բարի բաներ ենք անում մեր շուրջիներին, թող նրանք իրենց խորհուրդները Աստծուն տանեն, արժևորված զգան ու Նրա օրհնութիւնը վայելեն:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, օգնիր ինձ, որ Քեզ հետևեմ և բարություն ցույց տամ իմ շուրջը եղողներին, որպեսզի նրանք Քեզ տեսնեն իմ մեջ: Ամեն:

Աստծո բարության արտահայտությունը եղիր. բարություն դեմքիդ, բարություն աչքերիդ մեջ, բարություն ժպիտիդ մեջ: Մայր Թերեզա

Քաջալերանքի մթնոլորտ

Ես քաջալերված եմ զգում, երբ ամեն անգամ մեր տան մոտի մարգասարհ եմ այցելում: Այդ մարդաշատ վայրում չըջապատված եմ մարդկանցով, որոնք ձգտում են իրենց ֆիզիկական առողջութունն ու ուժը բարելավել: Պատերի գրությունները մեզ հիշեցնում են իրար չդատել, այլ մեր խոսքերով ու արարքներով ցույց տալ իրար քաջալերելու մեր ջանքերը:

Որքա՛ն գեղեցիկ պատկեր, թե ինչպես պիտի լինի մեր կյանքի հոգևոր ասպարեզը ևս: Մեզնից նրանք, որոնք ձգտում են հոգեպես «լավ ձևի» մեջ լինել ու հավատքի մեջ աճել, կարող են երբեմն զգալ այնպես, կարծես չեն պատկանում, որովհետև մտածում են, թե հարկ եղած չափով հասուն ու պատրաստ չեն Հիսուսի հետ իրենց քայլերի մեջ, ինչպես ուրիշները:

Պողոսը մեզ տալիս է այս կարճ, սակայն ուղիղ առաջարկը. «Իրար քաջալերեցե՛ք և իրար շինությո՛ւն տվեք» (Ա Թես. 5.11): Ու Հռոմի հավատացյալներին գրում է. «Մեզանից ամեն մեկը թող ընկերոջը հաճելի լինի դեպի բարին՝ շինության համար» (Հռոմ. 15.2): Նկատելով որ մեր Հայրը մեզ հետ սիրով ու շնորհով է վարվում, Նրա շնորհը ցույց տանք ուրիշներին մեր քաջալերական խոսքերով ու արարքներով:

Մինչ իրար ընդունում ենք (հմ. 7), թող մեր հոգևոր աճումը Աստծուն ու Իր Հոգուն վստահենք: Ու երբ ամեն օր փորձում ենք իրեն հետևել, թող քաջալերության մթնոլորտ ստեղծենք Տեր Հիսուսով մեր եղբայրների ու քույրերի համար, մինչ նրանք էլ են իրենց հերթին փորձում աճել իրենց հավատքի մեջ:

Աղոթք - Տեր, օգնիր ինձ, որ ուրիշներին քաջալերեմ: Առաջնորդիր ինձ, որ կարողանամ խթանող խոսքեր ասել, որպեսզի նրանք ավելի Քեզ ու Քո սիրուն մոտենան: Ամեն:

Քաջալերական մի խոսքը կարող է տարբերությունը դառնալ տեղի տալու և առաջ շարժվելու միջև:

Կարդա՛ր
Յոճմ. 15.1-7

Մեզանից ամեն մեկը թող ընկերոջը հաճելի լինի դեպի բարին՝ շինության համար:

Յոճմ. 15.2

Աղոթել ու աճել

Երբ բարեկամիս՝ Դավթի կնոջ մտքի չորացման հիվանդուլթյունը գարգացավ, իր կյանքի մեջ առաջացած փոփոխուլթյունները նրան դառնացրին: Նա կանուխ դադարեց աշխատել, որպեսզի հոգ տանի կնոջը: Մի օր ինձ ասաց. «Շատ բարկացած էի Աստծուց: Սակայն որքան ավելի աղոթեցի այդ հարցի մասին, նա այնքան ավելի իմ սիրտը ցույց տվեց, և թե ինչպես էի ես անձնասեր եղել մեր ամուսնուլթյան գրեթե ամբողջ ընթացքում»: Արցունքներ լցվեցին նրա աչքերը, մինչ այս խոստովանուլթյունն էր անում, ու ասաց. «Ահա տասը տարի կրին հիվանդ է, սակայն Աստված ինձ օգնել է, որպեսզի տարբեր ձևով նայեմ իմ հանգամանքներին: Հիմա ամեն ինչ անում եմ սիրով ու նաև Տեր Հիսուսի համար: Նրան հոգատար լինելը կյանքիս մեծագույն առանձնաչնորհումն է եղել»:

Կարդա՛ր Յովնան 4

Եվ ամենը, ինչ էլ որ անեք, խոսքով կամ գործով, ամեն բան Տեր Յիսուսի անունով արեք՝ նրա միջոցով գոհուլթյուն տալով Աստծուն և Յորը: Կողոս. 3.17

Երբեմն Աստված մեր աղոթքներին պատասխանում է մեր ուզածը չտալով, սակայն մարտահրավեր է նետում մեզ փոխելու: Երբ Հովնան մարգարեն բարկացած էր Աստծու վրա, որովհետև նա խնայեց կործանվելուց Նինվե չար քաղաքը, նա թզենուն հրահանգեց, որ Հովնանի վրա բարձրանա և նրա գլխին հովանի լինի (Հովնան 4.6): Հետո չորացրեց այն: Երբ Հովնանը զանգատվեց, Աստված պատասխանեց ու ասաց. «Իսկապե՞ս խիստ ես տխրել թզենու համար» (Հմ. 7-9): Հովնանը միայն ինքն իր վրա կենտրոնանալով հաստատեց, որ այդպես է: Սակայն Աստված ասաց նրան, որ ուրիշների մասին էլ մտածի: Աստված երբեմն մեր աղոթքներն է գործածում անակնկալ ձևերով, որպեսզի մեզ օգնի, որ սովորենք ու աճենք:

Աղոթք - Տեր Յիսուս, շնորհակալ եմ, որ երբ աղոթում եմ, օգնում ես, որ աճեմ: Օգնիր նաև, որ ուշադիր լինեմ, թե Դու ինչ ես ուզում իմ կյանքից այսօր: Ամեն:

Աստված մեզ աճեցնում է, մինչ իր հետ ժամանակ ենք անցկացնում:

Դարակը դիր ու շարունակիր

Հիշում եմ իմաստուն մի խրատ, որ ձայնասփյուռի հազոր-
 շ դավար բարեկամս մի օր ինձ տվեց: Իր աշխատանքի առա-
 ջին օրերին, երբ նա մաքառեց, թե ինչպես կարելի է ընդունել
 թե՛ քննադատությունը և թե՛ փառաբանությունը միաժամա-
 նակ, զգացի, թե Աստված քաջալերում էր նրան, որ երկուսն էլ
 ծրարի ու դարակը դնի: Իր սրտի մեջ տեղ գտած էությունը
 հետևյալ խորհուրդն էր. սովորիր, ինչ
 որ կարող ես քննադատությունից և
 ընդունիր փառաբանությունը: Հետո
 երկուսն էլ դարակը դիր ու խոնարհա-
 բար շարունակիր Աստծո շնորհով ու
 գորությունքով:

Քննադատությունն ու փառաբանու-
 թյունը մեր մեջ գորավոր զգացումներ են
 հրահրում, ու եթե քննության չենթարկենք, կարող են կա՛մ
 նենգության և կա՛մ էլ բազմապատկված անձնակենտրոնու-
 թյան տանել: Առակաց գրքում կարդում ենք քաջալերանքի ու
 իմաստուն խրատի օգուտներին մասին. «Բարի լուրը պարարում
 է ոսկորները: Խրատ մերժողն ատում է իր հոգին, բայց հանդի-
 մանություն լսողը խոհեմություն պիտի ունենա» (Առ. 15.31-
 32):

Եթե կշտամբվում ենք, թող դրանով բյուրեղանանք: Ու եթե
 օրհնված ենք փառաբանության խոսքերով, թող որ նորոգվենք
 ու երախտագետ հոգով լցվենք: Մինչ խոնարհաբար Աստծո
 հետ քայլում ենք, նա կարող է մեզ օգնել, որ սովորենք թե՛ քն-
 նադատությունից և թե՛ փառաբանությունից, ծրարենք ու դա-
 րակը դնենք և ապա շարունակենք մեր ընթացքը (Հմ. 33):

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ քննադատության ու փառա-
 բանության պարզևի համար: Մինչ խոնարհաբար Քեզ եմ
 հանձնում, թող որ աճեմ ու ձևավորվեմ երկուսից: Ամեն:

**Սովորիր քննադատությունից ու փառաբանությունից,
 ապա ծրարիր ու դարակը դիր:**

Կարդա՛ր
 Առակներ 15.30-33

...հանդիմանություն
 լսողը խոհեմություն
 պիտի ունենա:
 Առ. 15.31

Նամակով ուղարկիր

Շատ չորս տարեկանների նման Ռուբին էլ է սիրում վազել, Երգել ու խաղալ: Սակայն նա սկսեց գանգատվել ծնկների ցավից: Ռուբինի ծնողները նրան բժշկական քննության տարան, ու արդյունքը ցնցող էր: Նա ախտորոշվեց չորրորդ աստիճանի նյարդային քաղցկեղով ու շուտով հիվանդանոց փոխադրվեց:

Ռուբինի՝ հիվանդանոցում մնալը երկար տևեց՝ մինչև Ծնունդի տոնական օրերը: Ռուբինի համար դժվար էր տնից հեռու լինել: Հիվանդապահուհիներից մեկը Ռուբինի սենյակի մոտ նամակատուփ դնելու գաղափարը հղացավ, որպեսզի ընտանիքի անդամները ազդեցություն ու քաջալերական խոսքերով լեցուն նամակներ ուղարկեին: Հետո այս խնդրանքը դիմատետրի վրա դրվեց: Բարեկամների ու նույնիսկ անծանոթների կողմից եկած նամակների ծավալը զարմացրեց շատերին ու հատկապես Ռուբինին: Յուրաքանչյուր նամակի հետ, որոնց թիվը անցավ 100.000-ը, Ռուբին մի քիչ ավելի քաջալերվեց, ու վերջապես ժամանակը հասավ տուն գնալու: Պողոսի նամակը Կողոսայի եկեղեցու անդամներին ճիշտ այդպիսին էր (Կող. 1.2)՝ մի էջի վրա գրանցված բառեր, որոնք հույս տվեցին շարունակական հավատարմության, իմաստության, գործության, հարատևության ու համբերության (հմ. 10-11): Կարո՞ղ ես երևակայել, թե այդ խոսքերը ինչ լավ դեղ եղան Կողոսայի եկեղեցու հավատացյալների համար: Պարզապես գիտենալը, թե մեկը անդադար ազդեցում էր իրենց համար, նրանց գորացրեց, որպեսզի կարողանան հաստատ մնալ Քրիստոսի վրա ունեցած իրենց հավատքի մեջ: Մեր քաջալերական խոսքերը կարող են ազդու կերպով օգնել նրանց, որոնք օգնության կարիք ունեն:

Աղոթք - Հայր, հիշեցրու ինձ մեկի մասին, որ քաջալերանքի կարիք ունի: Ապա օգնիր ինձ, որ Քո կամքի համաձայն նրա համար աղոթեմ: Ամեն:

Քաջալերական նամակ լինենք նրանց համար, որոնք կարիք ունեն:

Կարդա՛ Կողոսացիներ 1.9-12

...մենք էլ այն օրից իվեր, երբ լսեցինք, ձեզ համար չենք դադարում աղոթք անելուց: Կող. 1.9

ԿԵՆՈՒԱՆԻ զՈՒ

Մեծ հորաքույրս հետաքրքրական մի գործ ուներ ծանուցումների ասպարեզում ու հաճախ էր ճամփորդում Չիկագո և Նյու Յորք: Սակայն որոշեց հրաժարվել այդ աշխատանքից իր ծնողների սիրո համար: Նրանք ապրում էին Մինեսոտա նահանգում ու կարիք ունեին հոգատարություն: Նրա երկու եղբայրները սրտաճմլիկ հանգամանքներում իրենց երիտասարդ տարիքում մահացել էին, և ինքը իր ծնողների միակ զավակն էր: Նրանց ծառայելը նրա համար հավատքի արտահայտություն էր:

Պողոս առաքյալը Հռոմի եկեղեցուն իր գրած նամակում սրտագին թախանձեց հավատացյալներին, որ Աստծո համար հաճելի «ապրող զոհ» լինեն (Հռ. 12.1): Նա հուսաց, որ նրանք կկարողանան Հիսուսի զոհաբեր սերը ցույց տալ իրար: Ու նրանցից խնդրեց, որ իրենք իրենց մասին ավելի բարձր կարծիք չունենան (Հմ. 3): Երբ նրանք անհամաձայնություն ու բաժանումի մեջ ընկան, նա կոչ արեց, որ իրենց հպարտությունից հրաժարվեն, որովհետև «չատերս մեկ մարմին ենք Քրիստոսի մեջ, բայց ամեն մեկս միմյանց անդամ ենք» (Հմ. 5): Նա հորդորեց նրանց, որպեսզի զոհաբեր սեր ցույց տան իրար:

Ամեն օր առիթ ունենք ուրիշներին ծառայել: Օրինակ՝ կարող ենք թույլ տալ, որ մեկը մեզնից առաջ անցնի շարքի մեջ, և կամ մեծ հորաքրոջս նման հիվանդին հոգատար լինենք: Եվ կամ մեր փորձառությունից սովորելով՝ ուրիշներին խրատ և ուղղություն տանք: Երբ մեր անձերը ներկայացնենք որպես ապրող զոհեր, Աստծուն կպատվենք:

Աղոթք - Տեր Հիսուս, Դու Քո անձը խոնարհեցրիր ու կյանքդ տվեցիր, որպեսզի ե՛ս ապրեմ: Երբեք չմոռանամ այս ամենից արժեքավոր շնորհի ու սիրո պարգևը: Ամեն:

**Երբ ուրիշներին ծառայենք իր անունով,
Աստծուն հաճելի կլինենք:**

Կարդա՛ր
Յոռմ. 12.1-8

Արդ Աստծու ողորմածությամբ աղաչում եմ ձեզ..., որ ձեր նարմինները ներկայացնեք կենդանի զոհ ... :

Յոռմ. 12.1

Նա մեր ձեռքերն է բռնում

Աղջնակը, որ մի կիրակի օր եկեղեցու սանդուղքներով բարձրանում էր ու իջնում, խելացի, սրամիտ, խանդավառ ու անկախ մի փոքրիկ էր թվում: Հազիվ երկու տարեկան՝ մեկ առ մեկ սանդուղքներից ցած իջավ ու ամբողջացրեց իր առաքելութունը: Նրա ունեցած քաջության մասին խորհելով՝ հիացած ժպտացի: Փոքրիկը էջը վախենում, որովհետև շատ լավ գիտեր, թե նրան հոգացող մոր աչքերը անդադար իր վրա էին, ու նրա սիրո ձեռքերը երկարած՝ պատրաստ օգնելու: Այս պատկերը ցույց է տալիս Տիրոջը իր զավակներին օգնելու պատրաստ լինելը, մինչ նրանք կյանքի մեջ առաջ են գնում բազմաթիվ անորոշություններով:

Կարդա՛
եսայի 41.8-13

...ես եմ քո Աստվածը, ես, որ զորացրի քեզ, օգնեցի քեզ ու պահպանեցի քեզ իմ արդար աջով:
Ես. 41.10

Այսօրվա հատվածը պարունակում է երկու «ձեռքի» ակնարկներ: Զգուշացնելուց հետո իր ժողովրդին չվախենալու կամ անհանգիստ չլինելու, Տերը նրանց ասաց. «Օգնեցի քեզ ու պահպանեցի քեզ իմ արդար աջով» (Ես. 41.10): Բազմաթիվ մտահոգ ու վախով լեցուն զավակներ կանգուն են մնում իրենց ծնողների զորութունով: Այստեղ Աստծո զորութունն է հայտնվում: Երկրորդ «ձեռքի» ակնարկի մեջ դարձյալ Տերն է, որ գործում է իր ժողովրդի ապահովության համար: «Արդարև, ես եմ քո Տեր Աստվածը, որ բռնել եմ քո աջ ձեռքից» (Հմ. 13): Թեև հանգամանքներն ու ժամանակները փոխվել են, սակայն ոչ մեր Տերը: Զպիտի հուսահատվենք (Հմ. 10), որովհետև Տերը դեռ վստահեցնում է մեզ իր աջակցության խոստումով ու այն բառերով, որոնց կարոտ ենք. «Մի՛ վախեցիր» (Հմ. 10, 13):

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ միշտ հսկում ես վրաս: Ամեն:

Երբ Աստծո ձեռքը ձեռքս է բռնում, ես ապահով եմ զգում:

Աստծո պատմության մեջ ապրել

Էռենեստ Հեմինգուեյին հարցնում են, թե կարո՞ղ է գրել ուշադրութիւն գրավող պատմութիւն՝ միայն վեց բառ գործածելով: Նա պատասխանում է.

- Վաճառվում է, երբեք չի գործածվել: Մանկական կոչիկներ:

Հեմինգուեյի պատմութիւնը զորեղ ու ազդու է, որովհետև ներշնչում է ընթերցողին՝ պատմութիւն մանրամասները ամբողջացնելու: Կոչիկները պարզապես պետք է ի՞նչ առողջ մի մանուկի համար: Կամ սրտաճմլիկ մի կորո՞ւստ էր պատահել, և Աստծո սիրո ու մխիթարութիւն է կարոտ: Լավագույն պատմութիւնները միշտ էլ մեր երևակայութիւնն են բորբոքում. հետևաբար զարմանալի է, որ պատմված

մեծագույն պատմութիւնը մեր ստեղծագործութիւն կրակն է վառում: Աստծո պատմութիւնը կենտրոնական ենթահող ունի. ամեն բան Նա ստեղծեց, մենք (մարդկային ցեղը) մեղքի մեջ ընկանք, Հիսուսն աշխարհ եկավ, մեռավ ու հարութիւն առավ մեզ մեր մեղքից ազատելու համար, ու հիմա սպասում ենք Իր վերադարձին ու ամեն բանի վերանորոգման: Գիտենք, թե նախապես ի՞նչ է եղել ու ի՞նչ կա ապագայում, հիմա ինչպե՞ս ենք ապրելու: Եթե Հիսուսը ամբողջ ստեղծագործութիւնն է վերանորոգում ու ազատում չարի ճանկերից, մենք «խավարի գործերը դեն գցենք և լույսի զենքերը հագնենք» (Հռոմ. 13.12): Այս բանը պարունակում է Աստծո զորութիւն մեղքից հրաժարվելով Նրան և իրար սիրելը (Հմ. 8-10): Հատուկ միջոցները, որոնցով Հիսուսի հետ միասին պայքարում ենք չարի դեմ, կախում պիտի ունենան մեր պարզկենդանի ու կարիքներից: Եկեք մեր երևակայութիւնը գործածենք ու մեր շուրջ նայենք: Փնտրենք վիրավորներին ու լացողներին ու Աստծո արդարութիւնը, սերն ու մխիթարութիւնը բաշխենք, ինչպես Ինքն է առաջնորդում:

Աղոթք - Դա՛յր, թող Քո թագավորութիւնը գա ու թող ինձ գա: Ամեն:

Կարդա՛

Յո՞ւմ. 13.8-14

Գիշերն անցել
գնացել է, ու ցերեկը՝
մոտեցել...:

Յո՞ւմ. 13.12

Կատարիք քո դերն Աստծո պատմության մեջ, այնպես, ինչպես Ինքն է առաջնորդում:

Լուռ պահ

Կյանքս հաճախ մոլեգին ու հեքոտ է թվում: Շտապում եմ մեկ ժամադրուկությունից մյուսը, հեռախոսային նամակներին եմ պատասխանում ու անելիքներիս անծայր ցուցակն ստուգում: Մի կիրակի, սպառված լինելով, կքած ընկա մեր տան ետևի բակում գտնվող կախորրանի վրա: Բջջային հեռախոսս ներսում էր, ինչպես նաև դավակներս ու ամուսինս:

Նախ՝ ծրագրեցի մի քանի բույս նստել ու հանգստանալ, սակայն այդ հանդարտ մթնոլորտում սկսեցի նկատել որոշ բաներ, որոնք պատճառ եղան մի քիչ ավելի երկար այնտեղ մնալու: Կարող էի ճոճվող կախորրանի ձայնը և մոտը եղող նարդոսի շուրջ մեղվի բզզյունը ու վերևում սավառնող թռչունների թևերի թափահարումը լսել: Երկինքը պայծառ ու շողշողուն էր, ու ամպերը շարժվում էին քամու

հետ: Տեսնելով Աստծո այդ սքանչելի ստեղծագործությունը՝ հուզվեցի, ու աչքերս արցունքներով լցվեցին: Երբ այդ պահին որոշեցի մի պահ դանդաղել իմ հեքոտ վազքի մեջ, տեսա իմ տեսողության ու լսողության սահմաններում եղող բազմաթիվ հիանալի բաներ ու մղում ունեցա պաշտամունք բարձրացնելու՝ որպես երախտագիտություն Աստծո ստեղծագործ գործության: 103-րդ Սաղմոսի հեղինակը նույնպես խոնարհաբար տեսավ Աստծո ձեռքերի գործերը ու գրեց հետևյալ խոսքը. «Նրա գործերի պտուղներով պիտի երկիրը լցվի» (Հմ. 13): Աճապարանքի մեջ մի լուռ պահ կարող է մեզ հիշեցնել Աստծո ստեղծագործ գործությունը: Նա ստեղծեց բարձր լեռներն ու ծառերի ճյուղերը՝ թռչունների համար, ու «ամեն ինչ իմաստովյալ ստեղծեց» (Հմ. 24):

Աղոթք - Տե՛ր, Քո ստեղծագործությունը հիացնում է ինձ: Օգնիր, որ կարողանամ նկատի առնել Քո գործերն ու Քեզ պաշտել իմ լուռ պահերին: Ամեն:

Մենք շրջապատված ենք Աստծո ստեղծագործ գործությամբ:

Կարդա՛ր Սաղմոս 103.10-24

Որքա՞ն մեծ են գործերը քո, Տե՛ր, ամեն ինչ իմաստովյալ ստեղծեցիր դու, ու աշխարհը լցվեց քո ստեղծածներով:

Սաղմ. 103.24

Ֆիկայի հոգին

Տանս մոտ գտնվող սրճարանը Ֆիկա է կոչվում: Շվեդերենով նշանակում է սուրճով ու անուշեղենով միշտ դադար առնել ընտանիքի, գործակիցների կամ բարեկամների հետ: Ես չվեզ չեմ, սակայն շատ եմ սիրում Ֆիկայի հոգին, որ լավ է նկարագրում Տեր Հիսուսի սովորությունը՝ դադար առնելով ճաշ ուտելը ուրիշների հետ ու հանգստանալը:

Մեկնաբաններն ասում են, թե Հիսուսի ճաշի դադարները պատահական չէին: Աստվածաբան Մարք Գլենվիլը նրանց կոչում է Հին Կտակարանում եղած Իսրայելի խնջույքների ու տոնախմբությունների «հաճելի «երկրորդ մասը»: Սեղանի շուրջ Հիսուսն ապրեց, ինչ որ Աստված էր նախատեսել, որ Իսրայելը լիներ. «Ուրախություն, տոնախմբություն և արդարություն կենտրոն աշխարհի համար»:

5000-ի կերակրումից մինչև Վերջին Ընթրիքը, ինչպես նաև հարությունից հետո երկու աշակերտների հետ Իր ունեցած ընթրիքը, Հիսուսի սեղանի առաքելությունը մեզ հրավիրում է դադարելու մեր մաքառումներից ու Իրեն կառչելու: Անշուշտ մինչև Հիսուսի հետ ընթրիքի նստելը երկու աշակերտները չճանաչեցին ու չտեսան Հիսուսին որպես հարուցյալ Տեր: «Հաց վերցրեց, օրհնեց, կտրեց ու նրանց տվեց: Եվ նրանց աչքերը բացվեցին, ու նրան ճանաչեցին» (Ղուկ. 24.30-31) կենդանի Քրիստոսը:

Վերջերս, երբ բարեկամների հետ նստած Ֆիկա սրճարանում սուրճն ու անուշեղենն էինք մեծ հաճույքով վայելում, սկսեցինք Հիսուսի մասին խոսել: Նա՛ է Կենաց Հացը: Թող որ Իր սեղանին մոտենանք ու Նրան վայելենք:

Աղոթք - Տեր, շնորհակալ եմք, որ մեզ համար ժամանակ ու տեղ ես տրամադրում, որպեսզի Քո սեղանին մոտենանք: Ամեն:

Ժամանակ գտիր Կենաց Հացից ուտելու համար:

Կարդա՛ր
Ղուկաս 24.28-35

Եվ երբ նրանց հետ սեղան նստեց, Հաց վերցրեց, օրհնեց, կտրեց ու նրանց տվեց: Ղուկ. 24.30

Միսալ տեղեկությունով աշխատել

Նյու Յորք մեր վերջին այցելությունը կինս ու ես ցանկացանք քաջաբար պաղ ու ճյուղնոտ մի երեկո տաքսի վարձել ու մեր պանդոկից երեք մղոն հեռու գտնվող կուբայական մի ճաշարան գնալ ընթրելու: Երբ տաքսի ապահովելու համար համակարգչի մեջ գրեցի ճաշարանի հասցեն, զարմացա՝ տեսնելով մեր կարճ ճամփորդություն համար վճարելիք 1547.26 դոլար արժեցող գումարը: Այս անակնկալ ցնցումից հիասթափվելուց հետո նկատեցի, թե հարյուրավոր մղոններ հեռու եղող մեր տան հասցեն էի գրել ճաշարանի հասցեի փոխարեն: Եթե սխալ տեղեկությունով աշխատես, միշտ էլ աղետալի արդյունքների պիտի հասնես: Այս պատճառով Առակացի հեղինակը քաջալերում է մեր «սիրտը խրատ թող ստանա, և ականջները գիտության խոսքեր» - Աստծո իմաստությունը (Առ. 23. 12): Եթե անմիտներից խրատ խնդրենք կամ նրանցից, որոնք ձևացնում են, թե շատ բան գիտեն ու Աստծուն մեջքով են դարձել, դժվարության պիտի մատնվենք: Նրանք արհամարհական խոսքերով, անօգուտ, մոլորեցուցիչ ու խաբեական խրատներով կարող են պատճառ դառնալ, որ Աստծուց չեղվենք (Հմ. 9): Փոխանակ այդ բանն անելու՝ մենք կարող ենք մեր ականջները դարձնել «իմաստության խոսքերի» (Հմ. 12): Մեր սրտերը կարող ենք բանալ ու ստանալ Աստծո ազատարար ցուցումները, որոնք հույսի հստակ խոսքեր են: Երբ լսենք նրանց, որոնք Աստծո ճամփաները գիտեն, կարող են մեզ օգնել, որ ստանանք երկնային իմաստություն: Աստծո իմաստությունը մեզ բնավ չպիտի չեղի, այլ ընդհակառակը՝ միշտ էլ մեզ պիտի քաջալերի և առաջնորդի կյանքի ու բարգավաճման:

Աղոթք - Տե՛ր, խնդրում եմ օգնիր, որ կարողանամ ականջներս Քեզ ու Քո ճշմարտությանը դարձնել ու մի կողմ դնել ամեն տեսակ անմտություն: Ամեն:

Անմիտի խորհուրդները մեզ անել կացության են առաջնորդում, սակայն Աստծո իմաստությունը նոր հորիզոններ է բացում:

Կարդա՛

Առակներ 23.9-12

Սիրտը խրատ թող ստանա, և ականջները գիտության խոսքեր: Առ. 23. 12:

Երեխաների բերանով

Տանելով, թե ինչպես տասը տարեկան Վիոլան ծառի մի ճյուղ որպես բարձրախոս գործածելով կրկնօրինակում էր մի քարոզչի, Միշելը որոշեց Վիոլային առիթ տալ, որ «քարոզի» իրենց ավետարանական այցելության ընթացքում: Վիոլան ընդունեց առաջարկը: Միշել Բերին, որ միսիոներ էր Հարավային Սուդանում, «Սերը երես ունի» խորագրով իր գրքում այս դեպքի մասին գրում է. «Ամբոխը պոռթկաց, երբ լքված փոքրիկ մի աղջնակ հեղինակությունամբ կանգնեց որպես թագավորների թագավորի դուստրը ու մեծ հզորությանմբ խոսեց Աստծո թագավորության ճշմարտության մասին: Այդ մեծ բազմության կեսը առաջ եկավ ու ընդունեց Հիսուսին՝ որպես Տեր և Փրկիչ»:

**Կարդա՛ր
 Մատթեոս 21.14-16**

Մանկահասակ և
 ծծկեր երեխաների բերանից թող օրհնութիւն
 ելնի ընդդէմ քո թշնամիների: Սաղմ. 8.2

Այդ օրը ամբոխը բնավ չէր ակնկալում, որ մի փոքրիկ այդպես կքարոզի: Այս դեպքը հիշեցնում է Ցրդ Սաղմոսի մեջ Սաղմոսերգուհի արձանագրած այս խոսքը. «Մանկահասակ և ծծկեր երեխաների բերանից թող օրհնություն ելնի ընդդեմ քո թշնամիների, Տե՛ր» (Հմ. 3): Տեր Հիսուսն այս խոսքը մեջբերեց Մատթեոս 21.6-ի մեջ, երբ քահանայապետներն ու դպիրները անհանգիստ զգալով՝ քննադատեցին տաճարի մեջ աղաղակող մանուկներին: Այս հատվածը մեջբերելով՝ Հիսուսը ցույց տվեց, թե Աստված լուրջ կերպով նկատի առավ այդ մանուկների փառաբանությունը: Նրանք արեցին այն, ինչ որ այդ օրվա առաջնորդները չէին ուզում անել՝ երկար ժամանակ սպասված Մեսիային փառաբանել: Ինչ որ Վիոլան ու տաճարի մեջ եղող մանուկները ցույց տվեցին, փաստ էր, որ Աստված կարող է նույնիսկ մի մանուկի գործածել Իր փառքի համար: Նրանց կամեցող սրտերից փառաբանության աղբյուրներ են հոսում:

Աղոթք - Տե՛ր, օգնիր ինձ, որ մանուկի կամեցող սրտով Քեզ փառաբանեմ: Ամեն:

Աստված քո փառաբանությանն է արժանի, ուստի փառավորիր Նրան:

Լավ լուր

Օրաթերթի մեջ հրատարակված հոդվածը թեև կարճ էր, սակայն սիրտ էր ջերմացնում: Ընտանեկան հաստատ կապեր հաստատելու հոգևոր ծրագրի մասնակցելուց հետո մի խումբ բանտարկյալների իրենց ընտանիքներին այցելելու բացառիկ հնարավորություն է տրվում: Նրանցից ոմանք տարիներ շարունակ չէին տեսել իրենց զավակներին: Փոխանակ ապակյա պատուհանից խոսելու՝ նրանք հիմա պիտի կարողանային դիպչել ու իրենց սիրելիների ձեռքերը բռնել: Այդ բացառիկ հանդիպումի ընթացքում արցունքներ հոսեցին, ընտանիքի անդամները իրար մոտեցան, ու նրանց վերքերը սկսեցին բուժվել: Ընթերցողներից շատերի համար սա պարզապես մի պատմություն կարող է լինել: Սակայն այս ընտանիքների համար ողջագուրվելն ու իրար դիպչելը կյանք փոխող փորձառություն եղավ, ու ոմանց համար էլ ներումի ու հաշտության գործընթաց սկսվեց: Իր Որդու միջոցով հնարավոր դարձած Աստծո ներումը մեր մեղքերի ու հաշտության առաջարկը Քրիստոնեական հավատքի փաստ լինելուց շատ ավելին են: Հոդվածի հաշտության լուրը մեզ հիշեցնում է, որ Հիսուսի արած գոհողությունը լավ լուր էր ոչ միայն աշխարհին, այլ քեզ և ինձ համար: Երբ մեր գործած սխալի համար ճշում զգանք, վստահ լինենք, թե տակավին կարող ենք Աստծուն կառչել: Այն ժամանակ Նրա անվերջ ողորմությունը դառնում է անձնական լուր, ու Տեր Հիսուսի խաչի վրա մեր տեղում մեռնելու համար մենք կարող ենք «ձյունից ճերմակ» լվացված ու մաքրված Հորը գալ (Սաղմ. 50.9): Նման ժամանակների մեջ երբ մտածենք, թե արժանի չենք Նրա շնորհին, մենք կարող ենք կառչել միակ բանին, որ Աստծո սերն ու կարեկցությունն է (Հմ. 2):

Կարդա՛ր
Սաղմոս 50.1-7

Ողորմի՛ր ինձ, Աստված, քո մեծ ողորմությամբ:
Սաղմ. 50.3

Աղոթք - Հայր, ներիր ինձ, եթե Քո սերն ու ողորմությունը սովորական բան եմ նկատել: Շնորհակալ եմ այս սքանչելի պարգևի ու առանձնաշնորհումի համար: Ամեն:

Ներումը պարզապես լավ լուր չէ, այլ անձնական սքանչելի լուր:

Ո՛չ մի համեմատություն

«Մի օր այս բոլորը դիմատետրի վրա պիտի դնեմ, և ոչ միայն լավ բաները»: Ընկերուհուս՝ Սուրի ճաշի ժամանակ կատակով իր ամուսնուն արած այս ակնարկը բարձրաձայն խնդալու պատճառ եղավ, սակայն միաժամանակ մտածել տվեց ինձ: Սոցիալական Հաղորդակացությունը կարող է լավ բան լինել, որովհետև մեզ մշտական շփման մեջ է դնում մոտենալու հետո եղող մեր բարեկամների հետ ու առիթ տալիս միասին աղոթելու:

Սակայն եթե ուշադիր չլինենք, դա նաև կարող է ստեղծել անախորժ երևույթներ ու կյանքի ոչ իրատես պատկերներ: Երբ ցանցի վրա երևացածների մեծ մասը միայն «լավ բաների» ուշադրություն գրավող մասերն են, մեր խորհուրդները կարող են շեղվել՝ խորհելով, թե ուրիշները խնդիրներ չունեն իրենց կյանքերի մեջ, իսկ մե՞նք որտեղ ենք սխալվել: Մեր կյանքերը ուրիշների կյանքի հետ բաղդատելը անհաճոյություն վստահ ապացույց է: Երբ Հիսուսի աշակերտները իրենք իրենց իրար հետ բաղդատեցին (տե՛ս Ղուկ. 9.46, 22.24), անմիջապես Հիսուսը զգուշացրեց նրանց ու չբաջալերեց, որ այդպես մտածեն: Իր հարությունից հետո Հիսուսը Պետրոսին ասաց, թե ինչպես պիտի չարչարվի իր հավատքի համար: Պետրոսն էլ դառնալով Հովհաննեսին՝ հարցրեց. «Տե՛ր, բայց սա՞ ինչ է լինելու»: Հիսուսը պատասխանեց. «Եթե ես կամենում եմ, որ դա մնա, մինչև ես գամ, քե՞զ ինչ. դու իմ հետեի՛ց արի» (Հովհ. 21.21-22):

Հիսուսը ցույց տվեց Պետրոսի լավագույն դարմանը վատառողջ համեմատության ժամանակ: Երբ մեր մտքերը կենտրոնացած են Աստծո ու Նրա բոլոր արածների վրա, մեր անձնակենտրոն մտածումները մոռանում ենք ու փափագում իրեն հետևել: **Աղոթք** - Տե՛ր, օգնիր, որ կարողանանք հասարակական հաղորդակցությունը Քեզ պատվելու համար գործածել ու հեռու մնալ վատառողջ համեմատությունների անելուց: Ամեն:

Համեմատությունը ուրախության ավագակն է:

Թեոդոր Ռուզվելտ

Կարդա՛

Յովհ. 21.17-25

Յեզաբարո մարդը սրտի բժիշկ է, հոգս անող սիրտը՝ ոսկորների փտություն: Առ. 14.30

Գանձ փնտրել

«Պահված գանձ»: Թվում է՝ մանկական պատմությունների գրքից առնված խոսք է: Սակայն արտառոց ու տարօրինակ միլիոնատեր Ֆորեսթ Ֆենը հայտնում է, թե ապառաժյա լեռների վրա մի տեղ երկու միլիոն դոլար արժեցող ոսկու ու գոհարների տուփ է պահել: Շատերը գնացել են այդ գանձը փնտրելու, ու չորս հոգի էլ իրենց կյանքն են զոհել այդ հարստությունը գտնելու համար:

Առակաց գրքի հեղինակը մեզ պատճառ է տալիս մի պահ կանգնելու և մտածելու. արժե՞ նման որոնում որևէ գանձի համար: Առակաց 4-ի մեջ մի հայր, գրելով իր երկու որդիներին լավ կյանքով ապրելու մասին, գտնում է, որ իմաստությունը գլխավոր բանն է, որ արժե ամեն գնով ունենալ (Հմ. 7): Նա ասում է. «Իմաստությունը պիտի բարձրացնի քեզ, փառքի պսակով կպահպանի, սովորեցնի ընթանալ ուղիղ շավիղներով, որպեսզի ընթացքդ չխափանվի» (Հմ. 8-9, 11-12): Հարյուրավոր տարիներ անց Հակոբոսը շեշտում է իմաստության կարևորությունը. «Բայց վերին իմաստությունը նախ և առաջ սուրբ է, հետո՝ խաղաղարար, հեզ, հլու, ողորմությամբ և բարի պտուղներով լի, անկողմնակալ, անկեղծ» (Հակ. 3.17): Երբ իմաստություն խնդրենք, պիտի տեսնենք, թե ամեն տեսակի բաներ պիտի աճեն մեր կյանքերի մեջ:

Իմաստություն փնտրելը վերջ ի վերջո Աստծուն փնտրել է, որ ամեն իմաստության եւ հասկացողության աղբյուրն է: Ու երկնքից եկող իմաստությունը մեր երևակայած ցանկացած պահված գանձից շատ ավելին արժե:

Աղոթք - Հայր, սիրտս բաց, որ իմաստություն փափագի, ու ոտքերս մարզիր, որ Քո ճամփաների մեջ քայլեմ: Ամեն:

Աստծուց իմաստություն խնդրիր, որ քո օրերը բարի լինեն:

Կարդա՛ր Առակներ 4.5-19

Իմաստությունն ավելի քանկ արժե, քան ոսկու և արծաթի գանձերը:
Առ. 3.14

Նպատակ կա՞ ցավի մեջ

Երբ Սիու Ֆենը իմացավ, որ երիկամների անհանգստությունը պատճառով դարմանումի կարիք ունի իր կյանքի մնացյալ օրերին, սկզբում տեղի տվեց: Սիուն՝ ամուրի ու թոշակառու, երկար տարիներ Տեր Հիսուսին հավատացող մարդ, մտածեց, որ իր կյանքը երկարելը անիմաստ է: Սակայն բարեկամները համոզեցին նրան, որ բժշկվի ու Աստծո օգնությունը վստահի: Երկու տարի հետո տեսավ, որ այդ փորձառությունը իր օգտակարությունը ունեցավ, երբ նրան եկեղեցուց մի բարեկամ այցելեց, որ տկարանալու հիվանդություն ուներ: Կինը նույնպես միայնակ էր զգում, որովհետև իրապես քչերն էին հասկանում իր վիճակն ու տառապանքը: Սակայն Սիուն հասկանում էր Ֆիզիկական ու հոգեկան ցավի իմաստը և կարող էր հիվանդ կնոջ հետ մոտիկ անձնական կապ ստեղծել: Իր ունեցած անցյալի փորձառությունը կարողություն տվեց Սիուին, որ այդ կնոջ հետ քայլի ու տանրան այն մխիթարությունը, որ ուրիշները չպիտի կարողանային: Սիուն ասաց. «Հիմա

Կարդա՛

Բ Կորնթ. 1.3-7

Որ մեր բոլոր նեղությունների ժամանակ մխիթարում է մեզ, որպեսզի մենք էլ կարողանանք մխիթարել նրանց, ովքեր ամեն տեսակ նեղության մեջ են, այն մխիթարությամբ, որով մենք մխիթարվում ենք Աստծուց: Բ Կորնթ. 1.4

հասկանում եմ, թե Աստված ինչպես է կարողանում ինձ գործածել»:

Դժվար է հասկանալ, թե ինչու են մենք տառապում: Սակայն Աստված կարող է մեր տառապանքները գործածել անակնկալ կերպերով: Երբ մեր փորձություններում Իրեն ենք դիմում՝ սիրո և մխիթարության համար, Նա մեզ զորացնում է, որ կարողանանք ուրիշներին օգնել: Մեզնից չի ակնկալվում մեր ցավերն ու տառապանքը ուրանալ, սակայն կարող ենք Աստծո կարողությունը վստահել, որ ամեն բան բարու գործակից դարձնի:

Աղոթք - Տեր, օգնիր ինձ, որ շարունակեմ Քեզ վստահել իմ տառապանքների մեջ՝ գիտենալով, թե կարող եմ Քո մխիթարությունով լցվել և ուրիշների հետ կիսել: Ամեն:

Հավատա ու վստահիր Աստծուն, ու Նա քեզ պիտի գործածի ուրիշներին մխիթարելու:

Ծիշտ այնտեղ՝ մեզ հետ

Մի կին ամբողջովին կենտրոնացել էր նպարեղենի խանութի վերին դարակի վրայի մակարոնի ապակե տուփերի վրա: Ես էլ իր կողքին նույն միջանցքում կանգնած, մի քանի վայրկյան դարակին նայելով՝ փորձում էի որոշում կայացնել: Ինձ այնպես թվաց, թե նա մոլորված էր: Ես դժվարությունն չունեի բարձր դարակներին հասնելու, որովհետև բավական բարձրահասակ էի: Սակայն նա բարձրահասակ

չէր, ուստի առաջարկեցի օգնել իրեն: Զարմացած ու սոսկումով նա ասաց. «Աստված իմ, նույնիսկ չնկատեցի, թե կողքիս ես կանգնած: Այո՛, խնդրեմ, օգնիր ինձ»: Հիսուսի աշակերտները մտածեցին, թե օրվա այդ ուշ ժամերին, այդ հեռու վայրում, անոթի ժողովրդի հարցը

իրենք կարո՞ղ են լուծել և ասացին. «Այս տեղն անապատ է, ժամանակն էլ անցել է. ժողովրդին արձակի՛ր, որ գյուղերը գնան, իրենց համար ուտելիք առնեն» (Մատթ. 14.15): Ու երբ Հիսուսը մարտահրավեր նետեց, որ իրենք անոթի ժողովրդին հոգատար լինեն, պատասխանեցին. «Այստեղ բան չունենք, միայն...» (Հմ. 17): Նրանք միայն տեսան այն, ինչ որ չկար՝ հակառակ այն իրողության, որ ոչ միայն հաց ու ձուկ օրհնող ու բազմապատկող Հիսուսն էր իրենց կողքին, այլև Կենաց Հացը:

Մենք կարող ենք ընկղմվել ու փաթաթվել մեր մարտահրավերների մեջ՝ փորձելով ելք գտնել նրանց համար մեր սահմանափակ տեսողությունք, ու չտեսնել մեր կողքին կանգնած Հարուցյալ Քրիստոսին: Այնտեղ՝ հեռու ու ամայի բլրից մինչև խանութի միջանցքները և ամեն տեղ, Ինքն է՝ էմմանուել Աստվածը, ճիշտ այնտեղ՝ մեզ հետ, միշտ ներկա մեզ օգնելու համար:

Աղոթք - Հայր, օգնիր մեզ, որ գիտակցենք, թե Հիսուսը միշտ մեզ հետ է ու պատրաստ՝ մեզ նոր տեսլական տալու մեր դիմագրաված մարտահրավերների մեջ: Ամեն:

Ուր որ ենք, ու ինչ որ է մեր մարտահրավերը, էմմանուելը ճիշտ այնտեղ է՝ մեզ հետ:

Կարդա՛ր
Մատթեոս 14.13-21

Մենք այստեղ բան չունենք, միայն հինգ հաց և երկու ձուկ: Մատթ. 14.17

Երբ չընտրվես

Ընկերոջս դիմատետրը հայտնեց, որ նա մի ծրագիր էր հավարտել: Բարեկամները ջերմորեն շնորհավորեցին նրան, սակայն նրա գրառումը դաշունահարեց ու խորապես վիրավորեց ինձ: Ծրագիրը իմն էր, սակայն ես անտեսված էի ու չգիտեի ինչո՞ւ:

Խեղճ Հովսեփն անտեսվեց Աստծու կողմից, երբ վիճակն իրեն չընկավ: Հովսեփը Հուդային փոխարինելու համար նշանակված երկու թեկնածուներից մեկն էր: Աշակերտները աղոթեցին. «Դու, Տե՛ր, բոլորի սիրտն իմացող, հայտնի՛ր, թե այս երկուսից ո՞ւմ ընտրեցիր» (Գործք 1.24): Աստված ընտրեց Մատթիային ու Իր որոշումը հայտնեց աշակերտներին և այնտեղ հավաքված հարյուր քսան հոգուն, երբ «վիճակը Մատթիային ընկավ» (Հմ. 26): Մինչ աշակերտները շնորհավորում էին Մատթիային, մտածում էի, թե Հովսեփն ինչպե՞ս ընդունեց իր մերժումը: Արդյո՞ք աչքից ընկած ու խղճալի զգալով՝ իրեն հեռացրեց մյուսներից: Կամ էլ ընդհակառակը՝ Նա Աստծուն վստահե՞ց և ուրախությունը աջակցություն ցուցաբերե՞ց:

Հովսեփը դրանից հետո հիշված չէ Աստվածաշնչում, հետևաբար չգիտենք, թե ինչպես նա հակազդեց: Սակայն ավելի կարևոր է, թե մե՛նք ինչպես պիտի հակազդենք, երբ նման մերժումի մեջ լինենք: Թող որ մի՛շտ հիշենք, թե Հիսուսի թագավորությունը ավելի կարևոր է, քան մեր հաջողությունը, և հաճույքով ծառայենք՝ ինչ տեսակի պարտականություն էլ Նա հանձնի մեզ:

Աղոթք - Հայր, կարևոր չէ՛ ինչպես եւ ուր, քանի դեռ կարողանում եմ Քեզ ծառայել: Խնդրում եմ ինձ զորացրու, որպեսզի իմ բաժինը կատարեմ ու Քեզ փառավորեմ: Ամեն:

Երբ չես ընտրվում կամ դուրս ես նետվում, մի՛ նեղանա, որովհետև Աստված հատուկ ծրագիր ունի քեզ համար Իր դաշտի մեջ:

Կարդա՛
Գործք Առ. 1.15-26

Եվ նրանց մեջ վիճակ գցեցին. վիճակը Մատթիային ընկավ:
Գործք Առ. 1.26

Դրամարկության շահ

1995-ին Միացյալ Նահանգների մեջ բաժնետոմսերի վրա դրամարկուղները ստացան լավագույն դրական արդյունքը՝ միջին հաշվով շուրջ 37.6 տոկոս մեկ դոլարի դիմաց: 2008-ին դրամարկուղները գրեթե նույն չափով տուժեցին՝ 37.0 տոկոս յուրաքանչյուր դոլարի դիմաց: Այդ տարիների միջակայքում նրանք ունեցան զանազան արդյունքներ ու վախով մտածեցին՝ թե ինչ պիտի լինի իրենց դրամարկուծը ընթացիկ տարում: Հիսուսը վստահեցրեց իրեն հետևողներին, թե անհավատալի օրհնություններ պիտի ունենան, եթե իրենց կյանքերը շահարկվեն՝ Իր միջոցով: Աշակերտները «ամեն ինչ թողեցին և նրա հետևից եկան»։ Թողեցին իրենց տունը, ընտանիքները, գործերը և դիրքը՝ իրենց կյանքերը որպես կանխավճար կամ ավանդ դնելու համար (Մարկ. 10.28): Սակայն նրանք մտահոգվեցին, որ իրենց ամեն ինչը հանձնելը դրական արդյունք չպիտի ունենար, երբ տեսան հարուստ մի մարդու, որ պայքարում էր իր երկրային ունեցվածքի ճանկերում: Սակայն Հիսուսը պատասխանեց՝ ասելով, թե նա, որ իր համար պատրաստ է զոհողություն անել, «հարյուրապատիկ պիտի չստանա տներ, իսկ հանդերձյալ աշխարհում էլ՝ հավիտենական կյանք» (Հմ. 30): Դա շատ ավելի լավ արդյունք է, քան ցանկացած բաժնետոմսի վրա եղած դրամարկում: Մենք չպիտի մտահոգվենք Աստծո մոտ արված հոգևոր շահարկումով՝ «տոկոսի սակագնի» համար, որովհետև մեր ստանալիք շահը որոշակի վստահություն է: Դրամի պարագայում մեր նպատակն է մեր նյութական շահը առավելագույնի հասցնել: Աստծո պարագայում ինչ որ ետ ենք վերցնում, չի չափվում դրամով, այլ չափվում է նրան ճանաչելու ուրախությունով՝ հիմա և հավիտյան:

Կարդա՛ր
Մարկոս 10.17-31

Ահա մենք ամեն ինչ
թողեցինք ու քո
հետևից եկանք:
Մարկոս 10.28

Աղոթք - Հայր, օգնիր մեզ, որ պատրաստ լինենք մեր ունեցածը՝ ժամանակը, տաղանդներն ու զանձերը Քեզ տալու և վայելելու Քո տված ցնծությունը: Ամեն:

Աստծո համար ապրելը լավագույն դրամարկումն է

Աղմուկից փախչել

Մի քանի տարի առաջ քոլեջի տնօրենուհին առաջարկեց աշակերտներին, որ իրեն միանան ու մի երեկո բոլոր էլեկտրոնային սարքերը, հատկապես բջջային հեռախոսներն անջատեն: Թեև աշակերտները համաձայնեցին, սակայն դժգոհ էին հեռախոսները թողնելու և քոլեջի մատուռում հավաքվելու մտքից: Հաջորդ ժամի ընթացքում նրանք լուռ նստեցին մեղմ երաժշտությունը դեկցվող աղոթքի պաշտամունքի: Հետո մասնակիցներից մեկը նկարագրեց այդ փորձառությունը հետևյալ բառերով. «Աքանջելի առիթ էր հանդարտվելու, տեղ, ուր կարելի էր անջատել բոլոր ավելորդ աղմուկները»: Երբեմն դյուրին է փախուստ տալ «ավելորդ աղմուկից»: Մեր ներքին ու արտաքին աշխարհի աղմուկները կարող են խլացուցիչ լինել, սակայն երբ պատրաստ ենք ամեն բան անջատել, պիտի հասկանանք Սաղմոսերգուռի հիշեցումը, թե անհրաժեշտ է հանդարտ մնալ՝ Աստծո ներկայությունը զգալու համար (Սաղմ. 45.10): Թագավորաց 19-ում տեսնում ենք, որ երբ Եղիա մարգարեն Տիրոջը փնտրեց, Նրան չգտավ սաստիկ հովի, երկրաշարժի ու կրակի մեջ (Հմ. 9-13): Այլ դրա փոխարեն նա Աստծո մեղմ փսփսուքը լսեց (Հմ. 12):

«Ավելորդ աղմուկը» երաշխավորված է հատկապես տոնախմբությունների ժամանակ: Երբ ընտանիքներն ու բարեկամները հավաքվում են, բնական են բարձրաձայն, ոգևորված խոսակցությունը, առատ ճաշը, աղմկոտ ծիծաղն ու ջերմ սիրո արտահայտությունները: Սակայն երբ լուռ մեր սրտերը բանանք, պիտի տեսնենք, թե այդ պահը ամենից քաղցրն է: Եղիայի նման մեզ համար էլ հնարավոր է Աստծուն հանդիպել այդ հանդարտության մեջ, ու եթե լռենք, մենք էլ պիտի լսենք Նրա մեղմ փսփսուքը:

Աղոթք - Տե՛ր, օգնիր մեզ, որ մենք մեզ աղմկոտ աշխարհից անջատենք ու լռության մեջ Քեզ մոտենանք և փորձենք լսել Քո մեղմ ու անուշ ձայնը: Ամեն:

Հանդարտության մեջ հավանաբար պիտի կարողանանք լսել Աստծո մեղմ ձայնը:

Կարդա՛ր
Գ Թագ. 19.9-13

Կրակից հետո մեղմ
օդի ձայն կլինի:
Գ Թագ. 19.12

Ազնիվ, սակայն հզոր

Համաշխարհային երկրորդ պատերազմի սոսկալի օրերին, երբ թշնամին առաջանալով գրավեց Հոլանդիայի հողամասերը, Աննա Ֆրանկը և իր ընտանիքը վտանգից փախուստ տալու համար թաքնվեցին գաղտնի ապաստարանի մեջ: Նրանք երկու տարի թաքնված մնալուց հետո գտնվեցին և տարվեցին համակենտրոնացման ճամբար: Աննան իր հռչակավոր «Երիտասարդ աղջկա օրագիրը» խորագրով գրքում գրեց. «Մեր փախուստի երկար վազքի մեջ ամենասուր զենքը ազնիվ ու հեզ հոգին է»:

Ազնվությունը կարող է բարդ հարց լինել, երբ իսկական կյանքի հետ գործ ունենա: Եսայի 40-ի մեջ տեսնում ենք

Աստծո պատկերը, որ ցույց է տալիս Նրան թե՛ ազնիվ ու թե՛ հզոր: 11-րդ համարում կարդում ենք. «Հովվի նման հովվելու է իր հոտերը, իր բազկով հավաքելու է գառներին, կրելու է նրանց իր ծոցում»: Սակայն այդ համարը հաջորդում է այս խոսքին. «Ահավասիկ ձեր Աստվածը. ահա Տերը, որ գալիս է զորությունք և իր բազկի իշխանությունք» (Հմ. 10): Զորությունով լեցուն, սակայն ազնիվ, երբ խոցելիի պաշտպանություն համար է:

Մտածիր Հիսուսի մասին, որ տաճարի մեջ պարանից խարազան շինելով՝ տապալեց լուծայափոխների սեղանները, սակայն ազնվությունք վարվեց մանուկների հետ: Ազդու խոսքեր գործածեց՝ դատապարտելու համար փարիսեցիներին (Մատթ. 23), բայց ներեց կնոջը, որ իր ողորմությանն էր կարոտ (Հովհ. 8.1-11):

Մինչ ծառայում ենք Աստծուն, մեր մեծագույն զորությունն է ցույց տալ ազնիվ մի սիրտ նրանց, որոնք կարիք ունեն:

Աղոթք - Տե՛ր, խնդրում ենք օգնիր մեզ, որ կարողանանք արդարություն և ողորմություն խթանել: Տուր մեզ Հոգին, որ կարողանանք թե՛ ազնիվ ու թե՛ հզոր լինել: Ամեն:

Ազնվությունը օգնում է մեզ, որ մեր տեսակետը պարզենք՝ առանց թշնամի շահելու:

Կարդա՛
Եսայի 40.10-11

Ձեր հեզությունը
թող բոլոր մարդ-
կանց հայտնի լինի:
Փիլիպ. 4.5

Օտարականներին ընդունել

Երբ բարեկամներս Եվրոպայի աղքատ երկրներից մեկի՝ Մոլդովայի մեջ էին ապրում, մի օր հագուստ և ուտելիք տարան իրենց եկեղեցուց աղքատ մի զույգի, որ, հակառակ իր չքավորության, մի քանի անտեր երեխաների խնամք էր սիրով ստանձնել: Այդ զույգը բարեկամներիս պատվեց քաղցր թեյով: Ու երբ զանազան տեսակի պտուղներով և կանաչիով նրանք թողեցին այդ տունը, հիացած էին իրենց վայելած հյուրասիրության ու ջերմ ընդունելության համար: Այս հավատացյալները իսկապես մարմնավորում են Աստծո տված հյուրասեր լինելու պատվերը: Նա հանձնարարեց իր ժողովրդին, որ «երկնչի Տեր Աստծուց, ընթանա Նրա ցույց տված ճանապարհներով, սիրի նրան ու պաշտի իր Տեր Աստծուն իր ամբողջ սրտով, իր ամբողջ էությունը» (Բ Օր. 10.12): Իսրայելի ժողովուրդը ինչպե՞ս պիտի կարողանար անել այս բանը: Այս հարցի պատասխանը գալիս է մի քանի համար հետո: «Դուք էլ սիրեցե՛ք պանդխտին, որովհետև դուք էլ պանդուխտ էիք Եգիպտացիների երկրում» (Հմ. 19): Օտարականներին ընդունելով՝ նրանք պիտի կարողանային Աստծուն ծառայել ու պատվել. սեր ու կարեկցություն ցույց տալով՝ Աստծո հանդեպ իրենց ունեցած վստահությունը պիտի ցույց տային: Մեր պարագաները կարող են տարբեր լինել մոլդովացիներից ու իսրայելցիներից, սակայն մենք էլ կարող ենք Աստծո հանդեպ մեր սերը ցույց տալ՝ ուրիշներին ընդունելով: Մեր տները բանալով կամ ողջունելով նրանց, որոնց հանդիպում ենք, մենք կարող ենք Աստծո հոգատարությունն ու հյուրընկալությունը ցույց տալ միայնակ ու ցավի մեջ գտնվողներին:

Աղոթք - Շնորհակալ եմ, Տե՛ր, որ մեզ պատվիրում ես օտարներին հյուրասիրել ու ցույց տալ Քո սերը: Օգնիր մեզ, որ Քո սերն արտահայտենք բոլորին: Ամեն:

Հավատացյալները Աստծուն սեր են ցույց տալիս հյուրասիրության պարզևով:

Կարդա՛

Բ Օրենք 10.12-19

Դուք էլ սիրեցե՛ք պանդխտին, որովհետև դուք էլ պանդուխտ էիք Եգիպտացիների երկրում: Բ Օր. 10.19

Մեծագույն փրկության առաքելությունը

1952-ի փետրվարի 18-ին մեծ փոթորիկը երկուսի կիսեց Փեն-Ղեյլթոն բեռնատար նավը Մասաչուսեթսի ծովափից մոտ տասը մղոն հեռու: Քառասունից ավելի նավաստիներ արգելափակվեցին նավի ընկղմվող ետնամասի մեջ՝ կատաղի հովի ու վայրագ ալիքների մեջտեղում:

Երբ աղետի լուրը հասավ Մասաչուսեթսի Չաթհեմ ծովափի պահակախմբի կայանը, Բոթսմեյն բարեկամ անունով հայտնի փրկարարների առաջին կարգի սպա Բրընի Ուեբբերն ընկերներին առավ ազատարար մի նավակի վրա՝ կորուսյալ նավի անձնակազմին ազատելու անհնարին թվացող առաքելության համար: Բրընին կարողացավ կորած համարվող նավաստիներից երեսուներկու հոգու ազատել: Նրանց քաջ արարքը համարվեց Միացյալ Նահագնների ծովափի պահակախմբի պատմության մեջ մեծագույն փրկարար առաքելությունը և նյութ դարձավ 2016-ի «Լավագոյն ժամերը» անունով շարժապատկերի համար:

Ղուկաս 19.10-ի մեջ Հիսուսը հայտարարեց իր փրկության առաքելությունը՝ ասելով. «Մարդու Որդին եկել է, որ կորածին փնտրի ու փրկի»: Խաչն ու հարությունը եղան գերագույն արտահայտությունը այս փրկության, երբ Հիսուսը մեր մեղքերը իր վրա առավ ու վերանորոգելով Հորը բերեց բոլոր նրանց, որոնք իրեն վստահեցին: 2000 տարի մարդիկ ընդունել են առատ ու հավիտենական կյանք ունենալու Հիսուսի այս առաջարկը:

Որպես Տեր Հիսուսի հետևորդներ՝ մենք առանձնաշնորհում ունենք Սուրբ Հոգու օգնությամբ միանալու մեր Փրկչի մեծագույն փրկության առաքելության:

Աղոթք - Հայր, թող որ տեսնեն աշխարհը այնպես, ինչպես Դու ես տեսնում, ու միանան Քո փրկության առաքելությանը: Օգնիր ինձ, որպեսզի Հիսուսի պատգամը հասցնեմ իմ շուրջիներին: Ամեն:

Տիրոջ փրկության ծրագրին մասնակից եղիր:

Կարդա՛ր
Ղուկաս 19.1-10

Որովհետև Մարդու Որդին եկել է, որ կորածին փնտրի ու փրկի: Ղուկ. 19.10

Ձնջված

Անգլիացի երկրաչափ Էդուարդ Նեյրոնը հնարեց ուստինը, երբ փորձում էր կողինձի (հացի չոր կողմը) մի կտոր վերցնել՝ սրբագրելու թղթի վրա իր սխալ գրածը: 1770 թվականին թղթի բծերը ջնջելու համար կողինձ էին գործածում: Երբ սխալմամբ բուսական ձգախեթի մի կտոր վերցրեց, տեսավ, որ ուստինը իր սխալը ջնջեց՝ պարզապես թղթի վրա փշրանքներ թողնելով, որոնք կարելի էր հեշտորեն մի կողմ դնել: Մեր պարագայում էլ ամենավատ սխալներն ու հանցանքները կարելի է ջնջել: Տերը՝ Կենաց Հացը, կարող է դրանք մաքրել իր կյանքով՝ խոստանալով երբեք չհիշել: Եսային ասում է. «Ե՛ս եմ, ե՛ս եմ այն նույնը, որ ջնջում եմ իմ հանդեպ կատարած քո անօրենությունները և քո մեղքերն այլևս չեմ հիշելու» (Ես. 43.25):

Սա թվում է ուշագրավ սրբագրություն, որին արժանի չենք: Շատերի համար դժվար է հավատալ, որ մեր անցյալի մեղքերը ներվում ու ջնջվում են «առավոտվա ամպի կամ մշուշի պես»: Աստված, որ ամեն բան գիտի, հեշտ է մոռանում դրանք:

Ճիշտ դա է անում Աստված, երբ մենք ընդունում ենք Հիսուսին որպես մեր Տերն ու Փրկիչը: Մեր մեղքերը ներելով ու «դրանք չհիշելով»՝ մեր երկնավոր Հայրը մեզ ազատում է, որ կարողանանք առաջ գնալ: Անցյալի սխալներով չենք դեգերում. մենք ազատ կլինենք ու կմաքրվենք մեղքի բեկորներից ծառայելու համար, հիմա ու հավիտյան:

Այո՛, հետևանքները կարող են մնալ: Սակայն Աստված մեր մեղքը ջնջում է ու հրավիրում իրեն դառնալ՝ մեր մաքուր նոր կյանքի համար: Ջնջվելուց ավելի լավ բան չկա:

Աղոթք - Տե՛ր, ջնջիր իմ հանցանքները. սրբիր անցյալս ու տուր ինձ նոր կյանք: Օգնիր, որ Քո ներումի իրականությունը հասկանամ ու դրա մեջ ապրեմ ուրախությամբ: Ամեն:

Եթե կան բաներ, որոնք չես կարող մոռանալ, խնդիր Աստծուց, որ ջնջի դրանք:

Կարդա՛

Ես. 43.26, 44.21-23

Ահավասիկ ջնջեցի քո անօրենությունները ինչպես ամպ և քո մեղքերը՝ ինչպես մեզ: Ես. 44.22

Ուշացումներ ակնկալիր

Երթևեկությունը դանդաղում էր, ու արդեն ուշացել էի հաջորդ ժամադրությունից: Շատերին ծանոթ «կատա՞կ ես անում» արտահայտությունը արեցի, երբ տեսա ճամփի եզրին դրված ցուցանակը, որ ասում էր. «Ուշացումներ ակնկալիր»: Խնդացի: Ես ակնկալում եմ, որ ամեն բան ծրագրածիս համաձայն ընթանա, սակայն չեմ ակնկալում հանդիպել ճամփաների շինարարության: Հոգևոր մակարդակի վրա մեզնից քչերն են ծրագրում ապագան՝ ճգնաժամի պարագաները նկատի ունենալով, որոնք մեզ դանդաղեցնում են կամ ստիպում, որ մեր կյանքի ընթացքը փոխենք: Սակայն երբ մտածեմ, կարող եմ հիշել, թե շատ անգամներ են պարագաները ինձ ստիպել, որ իմ ծրագրերը փոխեմ մեծ կամ փոքր չափով: Սողոմոնը բնավ չտեսավ մի ցուցանակ, որ ասում է. «Ուշացումներ ակնկալիր»: Սակայն Առակաց 16-ի մեջ նա հակադրում է մեր ծրագրերը Աստծո նախախնամական առաջնորդության հետ: Առաջին համարն ասում է. «Ինչ որ մարդ դրել է սրտում՝ վերաբերում է իրեն, բայց Տիրոջից է նրա լեզվի պատասխանը»: Սողոմոնն այս նույն միտքը վերահաստատում է Գրք համարի մեջ, ուր ավելացնում է. «Մարդու սիրտը պիտի խորհի իրավունքի մասին, որպեսզի Աստված էլ ուղղի նրա ընթացքը»: Ինչպե՞ս չեմ հասկանում այս հոգևոր ճշմարտությունը: Իմ ծրագրերը ես եմ մշակում մոռանալով Աստծուն հարցնել, թե Ինքն ինչ ծրագիր ունի ինձ համար: Հուսախաբ եմ լինում, երբ ընդհատումները խանգարում են ինձ: Սակայն փոխանակ մտահոգվելու՝ կարող եմք պարզապես Աստծո առաջնորդության վստահել քայլ առ քայլ, մինչ աղոթքով Իրեն եմք խնդրում և Իր առաջնորդությանն սպասում:

Աղոթք - Տե՛ր, երբ անակնկալ ուշացումներ ու փոփոխություններ պատահեն ու մտահոգության առաջնորդեն, օգնիր, որ Քեզ վստահեմ: Ամեն:

**Մտահոգությունը վստահության հետ փոխիր:
Աստված քո ճամփան պիտի առաջնորդի:**

Կարդա՛ր
Առակներ 16.1-3, 9

Մարդու սիրտը պիտի խորհի իրավունքի մասին, որպեսզի Աստված էլ ուղղի նրա ընթացքը: Առ. 16.9

Ընտրությանը թափառական

Քիթ Ուսամանը՝ «Բարի գործեր» ընկերակցության գործադիր տնօրենը, որոշել է մի քանի օր թափառական լինել 1989-ից ի վեր, որպեսզի կարողանա աճել սիրո ու կարեկցության մեջ: Քիթն ասում է. «Ես գնում եմ փողոցներում ապրելու, որպեսզի կարողանամ հայեցողությունս ու հասկացողությունս ավելացնել նրանց մասին, որոնք բնակվելու տուն չունեն»: Մտածում եմ, թե Քիթի՝ թափառականների հետ նույնանալը և նրանց նման ապրելը կարող է մի փոքր պատկեր լինել այն բանի, ինչ որ Հիսուսը մեզ համար արեց: Աստված՝ տիեզերքի Ստեղծիչը, ընտրեց մանուկի նման խոցելի դարձնելը Իրեն ու մարդու պես ապրելը՝ մեր բոլորի մարդկային փորձառությունը ունենալու և վերջապես մեռնելու մարդկանց ձեռքով, որպեսզի մենք Աստծո հետ հարաբերության փորձառությունը ունենանք: Եբրայեցիների գրքի հեղինակը հաստատում է, թե «Ինքն էլ (Հիսուսը) միևնույն կերպով մասնակից եղավ նրանց, որպեսզի իր մահով խափանի մահվան իշխանությունն ունեցողին, այսինքն՝ սատանային» (2.14): Տեր Հիսուսը հրեշտակներից մի քիչ ներքև եղավ, հակառակ որ նրանց Ստեղծիչն էր (Հմ. 9): Նա մարդեղացավ ու մեռավ, հակառակ որ անմահ էր: Ու մեզ համար չարչարվեց, հակառակ որ Ամենակարող Աստվածն էր: Ինչո՞ւ այս բոլորն արեց: Որպեսզի մեզ օգնի, երբ փորձության ենթարկվենք, ու մեզ Աստծո հետ հաշտեցնի (Հմ. 17-18): Թող Նրա սիրո փորձառությունը ունենանք՝ գիտենալով, որ Նա հասկանում է մեր մարդ լինելը ու արդեն տվել է մեր մեղքերից մաքրվելու հնարավորությունը:

Կարդա՛ր
Եբր. 2.9-18

Որովհետև ինքը, որ չարչարվեց ու փորձվեց, կարող է փորձվողներին էլ օգնել: Եբր. 2.18

Աղոթք - Տեր Զիսուս, չունեմ բառեր՝ բացատրելու ու հասկանալու, թե ի՞նչ արժեքավ Քեզ մեր նման լինելը: Շնորհակալ եմ Քո մեծ զոհողության համար, որպեսզի ես ապրեմ: Ամեն:

Զիսուսին արի այսօր: Այսօր Զիսուսի մոտ արի: Նա եկավ մեզ նման լինելու:

Կյանք՝ համեմատությունից դուրս

Հեռուստատեսային մի ծրագրում երիտասարդները ներկայացան որպես ավագ դպրոցի աշակերտներ՝ ավելի լավ հասկանալու պատանիների կյանքը: Նրանք հայտնաբերեցին, որ սոցիալական մեղրիան հիմնական դեր է խաղում նրանց ինքնագնահատականի մեջ: Մասնակցողներից մեկը նկատեց. «Աշակերտների ինքնագնահատականը կապու ունի հազորդակցություն հետ և կախում ունի նկարների համար նրանց ստացած հավանումներից»:

Ուրիշներից ընդունված լինելու այս կարիքը կարող է մղել պատանիներին ծայրահեղ ու արտակարգ վարվելակերպի համացանցում: Գնահատված լինելը միշտ էլ եղել է մարդկային փափազը: Ծննդոց 29-ի մեջ հասկանալի է, թե ինչու է Լիան իր ամուսնու՝ Հակոբի սերն ափնկալում: Այս ցանկությունը արտացոլված է առաջին երեք որդիների անունների մեջ, որոնք բոլորն էլ փաստում են իր միայնությունը (Հմ. 31-34): Սակայն դժբախտաբար որևէ նշում չկա, որ Հակոբը պատասխանել է նրա ընդունված լինելու ցանկությանը: Չորրորդ որդու ծնունդով Լիան Աստծուն դարձավ ամուսնու փոխարեն ու որդուն կոչեց Հուդա, որ նշանակում է «գոհություն» (Հմ. 35): Թվում է, թե Լիան վերջապես գտավ իր կարևորությունը Աստծո մեջ: Նա Աստծո փրկության ծրագրի մաս կազմեց. Հուդան Դավիթ Թագավորի, ապա Հիսուսի նախահայրը եղավ: Մենք մեր կարևորությունը կարող ենք գտնել զանազան բաների մեջ, սակայն միայն Տեր Հիսուսի մեջ կարող ենք գտնել Աստծո զավակները՝ Քրիստոսի ժառանգակիցները լինելու մեր ինքնությունը:

Աղոթք - Երկնավոր Հայր, օգնիր, որ իմ արժեքը Քո մեջ գտնեմ ու ոչ ուրիշ բանի: Միայն Քո մեջ կարող եմ գտնել իմ իսկական ինքնությունը, որ ամեն համեմատությունից դուրս է: Ամեն:

Հիսուսի հանդեպ մեր ունեցած հավատքը կարող է բանալ մեր ինքնության դուռը:

**Կարդա՛ր
Ծննդոց 29.31-35**

Նա մի անգամ էլ հղիացավ, ծնեց որդի և ասաց. «Այս անգամ էլ պիտի գոհանամ Տիրոջից»:
Ծննդ. 29.35

Հարատևիր

Առևտրական ընկերակցությունում աշխատանքս առիթ ընծայեց հանդիպելու ու աշխատելու տաղանդավոր ու բարձր գիտական հեղինակություն ունեցող մարդկանց հետ: Մակայն քաղաքից դուրս գտնվող մի վերակացուի հսկողության տակ եղող ծրագիրը բացառություն էր: Հակառակ մեր խմբի առաջընթացին՝ տնօրենը կոպտորեն քննադատեց մեր աշխատանքը ու պահանջեց ավելին յուրաքանչյուր շաբաթ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ: Այս խտապահանջությունը ինձ հուսահատեցրեց ու վախեցրեց: Ու եղան օրեր, երբ ուզեցի հրաժարվել աշխատանքից: Հնարավոր է, որ Մովսեսն էլ հրաժարվելու ցանկություն ունեցավ, երբ դիմագրավեց Փարավոնին շոշափելի խավարի հարվածի ժամանակ: Աստված արդեն ութ սոսկալի աղետներով զարկել էր Եգիպտոսին, ու Փարավոնը պոռթկաց ու ասաց. «Հեռացի՛ր ինձնից, զգո՛ւշ եղիր, այլևս չհամարձակվես իմ աչքին երևալ, որովհետև այն օրը, որ երևաս ինձ, կսպանվես» (Ել. 10.28):

Հակառակ այս սպառնալիքին՝ Աստված գործածեց Մովսեսին՝ Իսրայելի ժողովրդին ազատելու Փարավոնի ձեռքից: «Հավատով նա թողեց Եգիպտոսը՝ թագավորի բարկությունից չվախենալով, որովհետև համբերեց, որպես թե տեսնում էր Անտեսանելուն» (Եբ. 11.27): Մովսեսը հաղթեց Փարավոնին՝ հավատարով, որ Աստված Իր փրկության խոստումը պիտի պահի (Ել. 3.17): Այսօր մենք կարող են ասպավինել այն խոստումին, թե Աստված մեզ հետ է բոլոր պարագաներում ու Իր Սուրբ Հոգով աջակցում է մեզ: Նա մեզ օգնում է, որ դեմ կանգնենք ահարկու բոլոր ճնշումներին՝ մեզ պարզեցնելով գերբնական ուժ, խոհեմություն և սեր (Բ Տիմ. 1.7):

Աղոթք - Տե՛ր, օգնիր, որ կարողանամ Քեզ դառնալ, երբ նեղության մեջ եմ: Պաշտպանիր ինձ ու զորացրու, որ կարողանամ Քեզ վստահել բոլոր պարագաներում: Ամեն:

Երբ նեղության ու ցավի մեջ ես, Աստծուն վստահիր, որ կարողանաս հարատևել:

Կարդա՛

Ելք 10.21-29

Հավատով նա թողեց Եգիպտոսը՝ թագավորի բարկությունից չվախենալով: Եբր. 11.27

Խորհրդանշից ավելին

Քսանհինգ տարվա վաղեմության նոր մրցանիչ արձանագրելու եզրին էր Այովայի համալսարանի նշանավոր բասկետբոլիստ Ջորդան Բոհանենը, երբ դիտմամբ չկարողացավ գնդակը կողովի մեջ նետել: Ինչո՞ւ: Քանի որ 1993-ին այովացի Քրիս Սթրիթը մրցանիչը կտրած երեսուներորս «ազատ գոլերը» խփելուց մի քանի օր անց մահացել էր ավտովթարից: Բոհանենը նախընտրեց Սթրիթի հիշատակը պատվել՝ նոր մրցանիչ չարձանագրելով: Նա նախընտրեց ավելի կարևոր բաների հանդեպ շահագրգռություն ցույց տալ այդ առաջընթացի փոխարեն: Մենք նույնանման արժեքներ ենք տեսնում երիտասարդ Դավթի մարտական կյանքի մեջ: Քարանձավի մեջ թաքնված՝ իր մարտիկների հետ նա ցանկացավ իր հայրենի քաղաքի՝ Բեթղեհեմի դուան ջրհորից ջուր խմել, սակայն սարսափելի փղշտացիները զբաղվել էին քաղաքը (Բ Թագ. 23.14-15): Երեք մարտիկներ քաջաբար «ճեղքեցին այլազգիների բանակը, ջուր հանեցին Բեթղեհեմի դարպասի մոտ գնվող ջրհորից ու եկան Դավթի մոտ»: Սակայն նա չուզեց խմել, այլ այն թափելով՝ Աստծուն նվիրեց ու ասաց. «Քա՛վ լիցի ինձ, ո՛վ Տեր, որ այդ բանն անեմ: Մի՞թե ես կխմեմ իրենց կյանքը վտանգող մարդկանց արյունը» (Հմ. 16-17):

Աշխարհի մեջ, ուր հաճախ վարձատրվում են նրանք, որոնք բռնազրավում են ինչ որ կարող են, ինչպե՞ս կարելի է սիրո ու գոհողության հզոր արարքներ թույլ տալ: Նման գործերը շատ ավելին են, քան պարզապես խորհրդանիշ լինելը:

Աղոթք - Հայր, սիրտս քննիր ու վերադասավորիր իմ նախապատվությունները, որպեսզի արժևորեմ իմ և ուրիշների կարիքները: Ամեն:

Մեր սիրո արարքները ցուցանում են Աստծո սերը:

Կարդա՛ր Բ Թագ. 23.13-17

Ոչ մի բան թող չլինի հակառակությանը և ոչ էլ սնապարծությանը, այլ խոնարհությանը մեկը մյուսին թող իր անձից ավելի լավ համարի: Փիլիպ. 2.3

Քաջաբար կանգնել

Մինչ բազմաթիվ գերմանացի եկեղեցական առաջնորդներ տեղի տալով Հիտլերին հանձնվեցին, աստվածաբան և հովիվ Մարթին Նիմոլըրը եղավ քաջ անձերից մեկը, որ դեմ կանգնեց նացիստների չար բռնություն: Մի պատմություն կարդացի, որ նկարագրում է, թե ինչպես 1970-ականներին մի խումբ տարեց գերմանացիներ մի մեծ պանդոկի առջև կանգնեցին որպես երիտասարդներ, որոնք շտապում էին պայուսակները տեղավորել: Մեկը հարցրեց, թե ովքեր էին: «Գերմանացի հովիվներն են», եղավ պատասխանը: «Իսկ ո՞վ է երիտասարդ մարդը»: «Մարթին Նիմոլըրն է. հիմա նա ութսուն տարեկան է: Սակայն նա կանգնեց, որովհետև չէր վախենում»:

Նիմոլըրը կարող էր վախի դեմ կանգնել, որովհետև նա Աստծո շնորհով ուներ գերմարդկային վախի դեմ պայքարելու հատկություն: Իրականում նա ժամանակին ուներ հակասեմական տեսակետներ: Սակայն ապաշխարեց, ու Աստված էլ նրան վերանորոգեց ու օգնեց, որ կարողանա խոսել ու ճշմարտությունը մարմնավորել:

Մովսեսն էլ քաջալերեց իսրայելցիներին, որպեսզի չվախենան ու Աստծուն հետևեն: Ու երբ նրանք սկսեցին վախենալ, երբ իմացան, որ շուտով Մովսեսն իրենցից պիտի առնվի, իրենց առաջնորդը խրախուսական ու չվհատվելու խոսքեր ասաց նրանց. «Մի՛ երկնչիր ու մի՛ վախեցիր..., քանի որ քո Տեր Աստվածն ինքը պիտի գնա ձեր առջևից» (Բ Օր. 31. 6): Զարհուրելու կարիք չկար, որովհետև Աստված իրենց հետ էր:

Ինչ տեսակ խավար էլ պատի քեզ, ու ահաբեկչություն լինի, Աստված քեզ հետ է: Աստծո ողորմությունով քո վախերը դիմագրավիր: Աստված «չի լքելու և չի անտեսելու քեզ» (Հմ. 6, 8):

Աղոթք - Յայր, շնորհակալ եմ ինձ չլքելու Քո տված խոստումի համար, օգնիր, որ կարողանամ ամբողջովին Քեզ ապավինել: Ամեն:

Անվախ ապրել չի նշանակում վախեր չունենալ, այլ դրանց չհանձնվել:

Կարդա՛

Բ Օրենք 31.1-8

Քաջ եղիր ու գորացիր... Մի՛ երկնչիր, մի՛ վախեցիր:

Բ Օր. 31.6-8

Ուրախություն դժվար տեղերում

Ամեն անգամ որ ընկերուհիս չի կարողանում պատասխանել հեռաձայնիս, լսում եմ հաղորդագրություն թողնելու իր հրավերը, որ ավարտում է ուրախությամբ հետևյալ հաճելի բառերով. «Լավ օր եմ մաղթում»: Երբ մտածում եմ իր այս խոսքի մասին, անդրադառնում եմ, որ մեր կարողության սահմաններում չէ ամեն օր լավ օր ունենալը, որովհետև մի շարք հանգամանքներ իսկապես կործանարար են: Սակայն այդ վիճակները ավելի մոտիկից ստուգելը կարող է գեղեցիկ ու փրկարար բան հայտնել իմ օրվա մեջ, հակառակ այն իրողության, թե լավ կամ վատ կլինի օրվա ընթացքը: Ամբակում մարզարեն դյուրին պարագաներում չէր: Աստված ցույց տվեց նրան գալիք օրերը, երբ ժողովրդի համար էական եղող բերքն ու անասունները պիտի պակասեին (3.17): Լավատեսությունից շատ ավելին էր պետք այդ տառապալից օրերի մեջ դիմանալու համար, երբ ժողովուրդը ծանր աղքատության պիտի մատնվեր: Այդ վիճակի մեջ Ամբակում մարզարեն սիրտ վրդովեցնող, շրթունք դողդողացնող ու ոտքեր թփրտացնող վախի սոսկալի փորձառությունը ունեցավ (Հմ. 16): Սակայն հակառակ այդ բոլորին՝ Ամբակումն ասաց, թե «պիտի ուրախանա Տիրոջով» (Հմ. 18): Աստծո մեջ իր ունեցած հույսը հռչակեց այն Աստվածը, որ դժվար տեղերում քայլելու ուժն է պարգևում (Հմ. 19): Երբեմն մենք էլ խոր ցավի ու նեղության միջով ենք անցնում: Սակայն հոգ չէ, թե ինչ ենք կորցրել կամ ցանկացել, սակայն չենք ունեցել. կարող ենք Ամբակումի նման ուրախանալ սիրող Աստծո հետ մեր ունեցած հարաբերության համար: Նա, որ «փառավորում է սգավորներին» (Նս. 61. 3), մեր ուրախության գերազույն պատճառն է:

Աղոթք - Տե՛ր, Դու ես պատճառը իմ ուրախության՝ այսօր ու կյանքիս բոլոր օրերին: Հոգ չէ թե ի՞նչ վիճակի մեջ եմ, օգնիր, որ ուրախություն ունենամ՝ Քեզնով: Ամեն:

Դժվարության ու տառապանքի ժամանակ Հիսուսը քեզ ուրախություն կարող է տալ:

Կարդա՛ր Ամբակում 3.16-19

Ես պիտի ուրախանամ Տիրոջով, ուրախանամ իմ փրկիչ Աստուծով:
Ամբ. 3.18

Նշանակված Մոմմա

Նրա անունը շատ երկար էր, սակայն նրա տարիներն ավելի երկար էին: Մադըլյայն Հերրիեթ Օրր Ջեքսոն Ուելլյամսը 101 տարի ապրեց և ունեցավ երկու ամուսին երկուսն էլ՝ ավետարանիչ: Մադըլյայնը տատս էր, ու մենք նրան գիտեինք որպես Մոմմա: Քույրերս, եղբայրներս ու ես նրան շատ լավ էինք ճանաչում. մենք նրա տան մեջ բնակվեցինք, մինչև այն օրը, երբ իր երկրորդ ամուսնուց բաժանվելով՝ մեզնից մոտ հիսուն մղոն հեռու փոխադրվեց: Տատս աստվածավախ կին էր: Հոգևոր երգեր էր երգում, դաշնամուր նվագում, աղոթք ու Սաղմոս ասում: Քույրերս, եղբայրներս ու ես նրա հավատքից շատ բան ենք սովորել:

Բ Տիմոթեոսի 1.3-7-ի համաձայն՝ Տիմոթեոսի տատը՝ Լոդիան, ու մայրը՝ Եվնիկեն, մեծ ազդեցություն էին ունեցել Տիմոթեոսի կյանքի վրա: Նրանց ապրած կյանքն ու ուսուցումը խոր արմատներ ունեին Աստծո Սուրբ Խոսքի բարեբեր հողի մեջ (Հմ. 5, Բ Տիմ. 3.14-16), և ի վերջո նրանց հավատքը ծաղկեց երիտասարդ Տիմոթեոսի սրտի մեջ: Աստծո Խոսքի վրա հիմնված նրա հոգևոր զարգացումը միայն Աստծո հետ իր հարաբերություն համար հիմնական չէր, այլ կենսական էր Տիրոջ համար իր մատուցած ծառայության համար (1.6-7): Ներկայումս, ինչպես նաև Տիմոթեոսի օրերին, Աստված հավատարիմ մարդկանց է գործածում՝ պատրաստելու ապագայի սերունդներ: Տերը կարող է մեր աղոթքները, խոսքերը, գործերն ու մանավանդ ծառայությունները ազդու կերպով գործածել, մինչև ապրում ենք, ու նաև մեր գնալուց հետո: Աղոթքս է, որ Մոմմայի ավանդը մեզնով չկանգնի ու չավարտվի, այլ շարունակվի ու անցնի սերնդեսերունդ:

Աղոթք - Երկնավոր Հայր, գործածիր մեր կյանքը որպես ավանդ Քո փառքի և ուրիշների հարստացման համար: Ամեն: Ինչպե՞ս ես գործածում քո աղոթքը, խոսքերը, գործերն ու ծառայությունը՝ Հիսուսով ուրիշների աճման պատճառ դառնալու համար:

Կարդա՛

Բ Տիմոթոս 1.3-7

Բայց դու հաստատուն մնա այն բաների մեջ, որ սովորեցիր ու հավատացիր՝ իմանալով, թե ումից սովորեցիր:

Բ Տիմ. 3.14

Ողբից պաշտամունք

2013-ին Կիմը սկսեց պայքարել կրծքի քաղցկեղի դեմ: Դեղերով շրջապատված չորս օրերը ամբողջացնելուց հետո բժիշկների ախտաճանաչումը ցույց տվեց, որ նա թոքերի մեծացման հիվանդություն ունի ու սահմանեց 3-5 տարվա կյանք: Նա ցավ զգաց ու առաջին տարին ջերմ աղոթքներ բարձրացրեց առ Աստված՝ փորձելով իր զգացումները ներկայացնել: 2015-ին, երբ Կիմին հանդիպեցի, նա իր վիճակը հանձնել էր Աստծուն ու ցոլացնում էր վարակիչ ուրախություն և խաղաղություն: Թեև մի շարք օրեր դեռ դժվարին էին նրա համար, սակայն Աստված նրա սիրտը շարունակում է փոխել հույսով լեցուն փառաբանության գեղեցիկ վկայության: Թեև Նրա բժշկությունը չպիտի լինի այնպիսին, ինչպիսին մենք ենք ցանկանում ու հույս փայփայում, սակայն կարող ենք վստահություն մեզ քայլել (Սաղմ. 29.1-3): Հոգ չէ թե ինչքան արցունքներով են լվացված մեր ճամփաները, մենք ունենք անթիվ պատճառներ Նրան փառավորելու (Հմ. 4): Մենք կարող ենք Տիրոջով ուրախանալ, մինչ նա մեզ վստահ հավատք է ապահովում (Հմ. 5-7): Կարող ենք Նրան աղբյուր սել (Հմ. 8-10) ու փառք տալ այն հույսի համար, որ տվել է ողբացող ուրիշ շատ պաշտողների: Միայն Աստված կարող է վերափոխել մեր հուսահատ կոծը կենսունակ ուրախության, որ հանգամանքներից է կախված (Հմ. 11-12): Մինչ մեր ողորմած Աստվածը մեզ մխիթարում է, Նա նաև խաղաղություն է պատում ու զորացնում մեզ, որպեսզի կարողանանք սեր ու կարեկցություն ցույց տալ: Տերը կարող է և փոխում է մեր կոծը պաշտամունքի, որ կարող է առաջնորդել վստահության, փառաբանության ու նույնիսկ ուրախ պարի:

Աղոթք-Յայր, մեզ Քեզ մոտիկ պահիր, մինչ վստահ եմք, թե մեր կոծը պարի կարող ես փոխել: Ամեն:

Ամեն բան Աստծուն հանձնիր, ու Նա քեզ պիտի ուրախացնի:

Կարդա՛ր Սաղմոս 29

Սուգ դարձրեց ուրախություն, հանեց քուրձն իմ և խնդություն հագցրեց ինձ: Սաղմ. 29.11

Ստեղծված՝ քեզ համար

Տատս տաղանդավոր դերձակ էր, որ զանազան մրցանակներ էր չափել Թեքսասի մեջ: Հաճախ է նա ինձ նվիրել իր ձեռքով կարված նվերներ: Երբ տանս մեջ գտնված որևէ հատուկ ձեռքով պատրաստված բան եմ ծաղում, տեսնում եմ իր ստորագրությունով պիտակ, որ ասում է. «Պատրաստված հատուկ քեզ համար: Մոռենա»:

Յուրաքանչյուր գեղեցիկ ասեղնագործ բառի հետ զգում եմ տառիս սերը իմ հանդեպ և ստանում հզոր հայտարարություն նրա ունեցած հավատքի ու թողած ազդեցության մասին իմ կյանքում: Պողոսը գրեց Եփեսոսի հավատացյալներին այս աշխարհում իրենց նպատակի մասին՝ ներկայացնելով նրանց որպես «նրա ստեղծագործությունը՝ Հիսուսու Քրիստոսով հաստատված բարի գործերի համար» (2.10): Այստեղ «ստեղծագործություն» բառը նշանակում է արվեստի գործ կամ գլուխգործոց: Պողոսը շարունակում է նկարագրել՝ ասելով, թե մենք Աստծո ստեղծած ձեռագործն ենք ու կարող ենք պատճառ դառնալ բարի գործերի կամ կարող ենք լինել Տեր Հիսուսի հետ մեր ունեցած վերանորոգված հարաբերության արտահայտություն իր փառքի համար: Մենք երբեք չենք կարող փրկվել մեր արած բարեգործությունների համար, սակայն երբ Աստված իր ձեռքերով է մեզ կերտում՝ իր նպատակի համար, նա կարող է մեզ գործածել, որպեսզի կարողանանք ուրիշներին իր մեծ սիրուն մոտեցնել: Աստված, իր մատներով մեր օրերի մանրամասները ձևավորելով, իր սերն ու նպատակն է դրոշմում մեր սրտերի մեջ, որպեսզի իր ներկայության փորձառությունը վայելելով՝ իր ձեռագործը ուրիշներին ներկայացնեք:

Կարդա՛ Եփես. 2.4-10

Որովհետև նրա ստեղծագործությունն ենք՝ Քրիստոս Յիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնք Աստված առաջուց պատրաստեց մեզ համար, որպեսզի դրանցով ընթացանք: Եփես. 2.10

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ ինձ Քո ձեռքերով շինեցիր: Օգնիր, որ կարողանամ Քեզ ցույց տալ աշխարհին: Ամեն:

Ի՞նչ բարի գործի համար է Աստված քեզ ստեղծել:
Ո՞ւմ կարող ես ցույց տալ Նրա սերը:

Սխալների բեռը կրել

2018-ի հունվարի 30-ին, իր դատապարտումից գրեթե երեսուցուց տարի հետո, Մալքոլմ Ալեքսանդրը բանտից ազատ արձակվեց: Սերնդաբանական միջուկային թթվի (DNA) քննական ապացույցը պատճառ եղավ, որ նրա դեմ եղած մեղադրանքը վերացվի: Բազմաթիվ դատական նիստերի ընթացքում, որոնք ողբերգականորեն անարդար էին, նա միշտ փորձեց հայտարարել իր անմեղ լինելը: Անկարող պաշտպանի թափթփված ապացույցները և կասկածելի քննական ռազմավարությունը անմեղ մարդուն բանտարկեցին չուրջ չորս տասնամյակ: Ու երբ Ալեքսանդրը վերջապես ազատ արձակվեց, անսահման շնորհ ցույց տվեց ու ասաց. «Ձեռն կարող բարկանալ: Բավարար ժամանակ չկա բարկանալու»:

Կարդա՛

Ա Պետրոս 3.8-14

Չարի դիմաց չար չհատուցեք:
Ա Պետ. 3.9

Ալեքսանդրի այս բառերը շնորհի ապացույց են: Եթե անարդարությունը մեր կյանքից երեսուցուց տարի կողոպտած ու մեր վարկը քանդած լինի, բնականաբար մենք պիտի ուզենք բարկանալ ու զայրանալ: Թեև Ալեքսանդրը սիրտ մաշող դժվարին տարիներ անցկացրեց բանտում՝ իր վրա նետված սխալների պատճառով, սակայն չուզեց բարկանալով վրեժխնդիր լինել: Փոխանակ վրեժխնդիր լինելու ջանք թափելու՝ նա ցույց տվեց այն, ինչ որ Պետրոսը թելադրեց. «Չարի դիմաց չար չհատուցեք կամ բամբասանքի դիմաց՝ բամբասանք» (Ա Պետ. 3.9):

Աստուծո խոսքը մի քայլ էլ այն կողմ է գնում: Փոխանակ վրեժխնդիր լինելու՝ Պետրոս առաքյալը մեզ ասում է, թե ընդհակառակը՝ պիտի օրհնենք (Հմ. 9): Խաչի վրա Հիսուսը մեր սխալների բեռը կրեց, որպեսզի մենք շնորհ ստանանք և ուրիշներին փոխանցենք. նույնիսկ նրանց, որոնք սխալներ են արել մեր դեմ:

Աղոթք - Հայր, դժվար է չուզել ցավեցնել նրանց, որոնք ինձ ցավեցնում են: Սակայն օգնիր ինձ, որ կարողանամ Քրիստոսին ու սերը ցույց տալ: Ամեն:

Ինչպե՞ս ողորմություն ցուցաբերենք նրանց հանդեպ, ովքեր մեզ նեղություն են տվել: Ի՞նչ է նշանակում նրանց «օրհնելը»:

Ամպերով ծածկված

2016-ի նոյեմբերին հազվագյուտ լիալուսին երևաց, երբ իր շրջանի ժամանակ այն հասավ աշխարհի ամենամոտ կետին ավելի քան վաթսուն տարիների ընդմիջումից հետո: Հետևաբար, այն սովորականից ավելի մեծ ու փայլուն երևաց: Սակայն ինձ համար այդ օրը երկինքը քողարկված էր ամպերով: Թեև բարեկամներին ուղարկած այդ բացառիկ հրաշքի նկարները տեսա, սակայն երբ նայեցի վեր, վստահ էի, թե լուսինը թաքնված էր ամպերի ետևում:

Պողոս առաքյալը շատ նեղություններ կրեց, սակայն հավատաց, որ չերևացող բաները պիտի մնան հավիտյան: Նա ասաց, թե ինչպես է իր «այժմյան թեթև նեղությունը» հասնում «հավիտենական փառքի» (Բ Կորնթ. 4.17): Ուստի նա կարող էր իր աչքերը ուղղել ոչ թե «երևացող բաներին, այլ աներեկույթներին», որովհետև այն, ինչ որ անտեսանելի է, հավիտենական է (Հմ. 18): Պողոսը փափագում էր, որ կորնթացիների ու մեր հավատքը աճի. չնայած որ տառապում ենք, մենք էլ պետք է Աստծուն վստահենք: Կարող է պատահել, որ Նրան չտեսնենք, սակայն կարող ենք հավատալ, թե Նա օրեցօր մեզ նորոգում է (Հմ. 16):

Մտածեցի, թե Աստված անտեսանելի է, սակայն հավիտենական, երբ այդ օրն ամպերին նայեցի՝ գիտենալով, որ թեպետ ամբողջական լուսինը թաքնված է ամպերի ետևում, սակայն այնտեղ է: Ու հուսացի, որ հաջորդ անգամ երբ փորձության ենթարկվեմ, թե Աստված ինձնից հեռու է, պիտի կարողանամ աչքերս ուղղել այն բանին, որ անտեսանելի է:

Աղոթք - Տե՛ր, երբեմն զգում եմ, թե Դու ինձնից հեռու ես: Օգնիր, որ հավատամ այն ճշմարտությանը, որ Դու միշտ մոտ ես, քո ներկայությունը զգամ կամ ոչ: Ամեն:

Ինչպե՞ս Զիսուսի վրա դրած քո հույսը քեզ պիտի օգնի կյանքի դժվարություններին դիմագրավել:

Կարդա՛ր
Բ Կորնթ. 4.16-18

Քանի որ այս երևացող բաներին չենք նայում, այլ աներևութներին: Բ Կորնթ. 4.18

Յոգով երգել

Քսաներորդ դարի սկզբում, Ուեյլզի վերածննդի օրերին Սուրբ Գրքի ուսուցիչ և հեղինակ Մեմբլ Մորգանը նկարագրեց իր տեսածը: Նա հավատաց, թե Աստծո Հոգու ներկայությունը պիտի շարժվեր «հոգևոր երգերի կոհակներին» վրա: Մորգանը գրեց, թե ինքը տեսել է պաշտամունքների և հավաքների ժամանակ մարդկանց իրար միացնող երաժշտության ազդեցությունը, որ նաև քաջալերեց կամավոր աղոթքները, խոստովանությունն ու ինքնամատույց երգեցողությունը: Եթե մեկը տարվելով իր զգացումներով երկար աղոթեր և կամ խոսեր այնպիսի ձևով, որ չէր արձագանքում ուրիշների աղոթքին, մեկը սկսում էր մեղմ ձայնով երգել: Շուտով միանում էին ուրիշները, ու երգերի ձայնը բարձրանում էր, մինչև որ մյուս ձայները խեղդեր: Մորգանի նկարագրած երգով վերանորոգումը ունի իր պատմությունը Աստծո Խոսքի մեջ, ուր երաժշտությունը կարևոր դեր է խաղում: Երաժշտությունը գործածվում էր հաղթանակները (Ել. 15.1-21), պաշտամունքով տաճարի նավակատիքը տոնելու համար (Բ. Մնաց. 5.12-14) ու մաս էր ռազմավարության (20.21-23): Սուրբ Գրքի կենտրոնում գտնում ենք Սաղմոսների Գիրքը (Սաղմ. 1-150): Ու Պողոս առաքյալի՝ Եփեսոսին գրած նամակի մեջ կարդում ենք Հոգով եղած այս կյանքի նկարագրությունը. «Ձեր մեջ սաղմոսներով, օրհնություններով ու հոգևոր երգերով խոսեցեք» (Եփ. 5.18-19): Բախումների, վեճերի, պաշտամունքի և կյանքի ամեն պարագաներում մեր հավատքի երաժշտությունը կարող է մեզ օգնել՝ գտնելու մեկ ձայն: Հին ու նոր երգերով մենք նորոգվում ենք դարձյալ ու դարձյալ. ո՛չ զորությունով, ո՛չ էլ ուժով, սակայն Հոգով ու մեր Աստծո երգերով:

Աղոթք - Տեր, շնորհակալ եմ հոգևոր երգեր երգելու սքանչելի պատեհության համար: Օգնիր, որ երաժշտությունը քաջալերի մեզ՝ զարգացնելու մեր հարաբերությունը Քեզ հետ: Ամեն:

Յոգին երգ ունի նրանց համար, որոնք լսում են:

Կարդա՛
Բ Մնաց. 5.7-14

Յոգով լցվեցեք:
Ձեր մեջ սաղմոսներով, օրհնություններով ու հոգևոր երգերով խոսեցեք:
Եփես. 5.18-19

Օրհնությունը կգա

Բարեկամուհուս ու իր փոքրիկների հետ ճեմելու գնացի: Մինչ նա երեխային մեքենա էր նստեցնում, ակնարկեց, որ իր արած քայլերը պարապի էին մատնվում, որովհետև իր թևերը չչարժելու համար դաստակի վրայի քայլեր հաշվող փոքր էլեկտրոնային գործիքը իր քայլերը չէր հաշվում: Նրան հիշեցրի, թե հակառակ այդ իրողության՝ նրա քայլերը օգնում էին իր ֆիզիկական առողջությանը: Նա ծիծաղեց ու ասաց. «Այո՛: Սակայն ուզում եմ այդ էլեկտրոնային ոսկի աստղը ունենալ»:

Հասկանում եմ, թե նա ինչ է զգում: Երբ որոշ նպատակով գործ ես անում ու անմիջական արդյունքը չես տեսնում, չես քաջալերվում: Սակայն վարձատրությունը միշտ էլ անմիջական կամ

անմիջապես տեսանելի չի լինում: Այդ պարագայում դյուրին է մտածել, թե մեր արած լավ բաները անօգուտ են, նույնիսկ բարեկամին օգնելը կամ օտարականի հանդեպ ազնիվ վարմունքը: Սակայն Պողոսը բացատրում է Գաղատիայի եկեղեցուն, թե «մարդ ինչ որ սերմանի, այն էլ կհնձի» (Գաղ. 6:7): Բայց մենք պետք է «բարին գործելուց չձանձրանանք, որովհետև իր ժամանակին կհնձենք, եթե չթուլանանք» (Հմ. 9): Բարիք անելը փրկությունն ստանալու ձև չէ, ու հատվածը չի նշում, թե հունձքը հիմա՞ պիտի լինի, թե՞ երկնքում, սակայն կարող ենք վստահ լինել, թե անպայման «հունձքի օրհնություն» պիտի լինի: Բարիք գործելը դյուրին չէ, հատկապես երբ չենք տեսնում կամ չգիտենք ինչ պիտի լինի «հունձքը»: Սակայն բարեկամուհուս նման, որ դեռ ստացավ քայլելու ֆիզիկական օգուտները, արժե, որ շարունակենք մեր բարի գործերը, որովհետև օրհնությունը կգա:

Աղոթք - Տե՛ր, երբ տկարանամ, խնդրում եմ տուր ինձ պատրաստականությունը Քեզ վստահելու ու ապավինելու: Օգնիր, որ շարունակեմ անել իմ բարի գործերը: Ամեն:

Ամեն վարձատրություն վայրկեցական չէ:

Կարդա՛ր
Գաղ. 6.7-10

Բարին գործելուց չձանձրանա՛նք, որովհետև իր ժամանակին կհնձենք, եթե չթուլանանք: Գաղ. 6.9

Համբերություն

Մանկական աշխարհում ծանոթ Ուիլնի թուխ մարդակերպար արջն ասում է. «Եթե մարդը, որի հետ խոսում ես, թվում է՝ քեզ չի լսում, համբերիր: Պարզապես կարող է ականջի մեջ ազվամազ ունենալ»:

Տարիների ընթացքում սկսեցի համոզվել այս խոսքի մեջ: Երբ մեկը քեզ չի լսում, նույնիսկ եթե քո տված խորհուրդները իր օգտին են, կարող է պատահել, որ նրա շփոթությունն պատճառը պարզապես ականջի մեջ եղած արգելքն է: Կամ էլ ուրիշ արգելք կարող է լինել: Ոմանց համար դժվար կլինի լսել, որովհետև հուսահատ են ու կոտրած հոգի ունեն: Մովսեսն ասում է, թե իր ժողովրդի հետ խոսեց, սակայն նրանք չլսեցին, որովհետև նրանց հոգին վհատված ու կյանքը դժվարին էր (Ել. 6:9):

Հուսահատությունը բառը եբրայերենում նշանակում է «չնչի պակաս»: Նրանց հուսահատությունը եզրիպտոսի մեջ իրենց կրած դառն ստրկության արդյունքն էր: Այդ պարագայում Իսրայելի դժգոհությունը Մովսեսի ցուցումները լսելու, կոչ եղավ հասկացողության ու կարեկցության և ոչ թե պարսավումի կամ խճճածանքի: Ի՞նչ պիտի անենք, երբ մարդիկ մեզ չեն լսում: Ուիլնի թուխ արջի խոսքերը իբրև սրբություն կարելի է ընդունել, որովհետև իմաստուն են. «Համբերատար եղիր»: Աստված ասում է. «Սերը երկայնամիտ է՝ քաղցր է» (Ա. Կորնթ. 13:4), պատրաստ է սպասելու: Աստված դեռ անելիք ունի նրանց համար ու նրանց տառապանքների միջով է ուզում գործել, հավանաբար իրեն հարմար ժամանակի մեջ, մեր սիրով ու աղոթքներով: Նա պիտի բանա նրանց ականջները, որ լսեն: Միայն համբերիր:

Աղոթք - Տե՛ր, օգնիր, երբ մարդիկ ինձ չեն լսում: Տո՛ւր ինձ համբերություն, որ կարողանամ շարունակել սիրով նրանց մոտենալ: Ամեն:

Համբերի՛ր: Աստված դեռ անելիքներ ունի մեզ համար ու մեր միջոցով:

Կարդա՛ր
Ելք 6.1-9

Բայց նրանք չլսեցին Մովսեսին վիստություն և տաժանակիր աշխատանքի պատճառով:
Ելք 6.9

Չորս հիշել

Երբ հորս եմ ուզում հիշել, լավագույնս պատկերը դրսում՝ մեր տան ետնաբակում աշխատելն է մուրճով, կանաչեղենների փոքր հողամասում կամ էլ ներքնահարկի իր աշխատանոցում, ուր նա ունեւր հետաքրքրական գործիքների հավաքածու: Իր ձեռքերը միշտ զբաղված ու գործի վրա էին: Երբեմն նա շինում էր թուջնաբույն, տախտակամած, երբեմն տան կողպեքներն էր նորոգում, ուրիշ անգամ գոհարեղենից ու գունավոր հախճապակուց նուրբ գործեր ստեղծում:

Հորս հիշելը ինձ մղում է մտածել երկնավոր Հորս ու Ստեղծիչիս մասին, որ միշտ զբաղված է ու գործի վրա: Սկզբից «երկրի հիմքերն էի գցում, դրա չափը... երբ աստղերի բոլոր հրեշտակները մեծաձայն օրհնեցին» (Հոբ 38.4-5, 7): Ամեն բան, որ Նա ստեղծեց, արվեստի գործ ու գլուխգործոց էր: Նա ուրվագծեց հիանալիորեն գեղեցիկ մի աշխարհ ու ասաց. «Շատ լավ է» (Ծննդ. 1.31):

Այս սքանչելի ու գեղեցիկ աշխարհը քեզ ու ինձ էլ իր մեջ է պարունակում: Աստված մեզ բոլորիս ձևավորեց մեր բարդ մանրամասնություններով (Սաղմ. 138.13-16) ու մեզ վստահեց ու դրեց մեր մեջ աշխատելու նպատակն ու փափագը, որ պարունակում է հոգատար լինելը աշխարհին ու նրա մեջ ապրող արարածների վրա իշխելը (Ծննդ. 1.26-28, 2.15): Հոգ չէ թե ինչ տեսակի գործ ենք անում, մեր աշխատանքի վայրում կամ հաճույքի համար, Աստված մեզ զորացնում է ու տալիս այն, ինչի կարիքն ունենք, որպեսզի ամբողջ սրտով Նրան փառաբանենք:

Ամեն ինչ, որ անում ենք, թո՛ղ անենք Նրան հաճեցնելու համար:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմք, որ մեզ պետք եղածն ես շնորհում՝ անելու այն գործը, որ խնդրել ես մեզնից: Ամեն:

Աստված գործում է քո կյանքի մեջ: Դու էլ պատրաստ եղիր քեզ բոլոր վստահած պարտականությունները կատարելու:

Կարդա՛ր
Չոբ 38.1-11

Ինչ էլ որ անեք, սրտանց արեք, ինչպես Տիրոջը, և ոչ թե մարդկանց:
Կող. 3.23

Աստծով շրջապատված

Չբազմաթիվ մի օգակայանում երիտասարդ մի մայր միայնակ պայքարեց: Նրա փոքր երեխան մանկական գայրույթի մեջ էր. ճշում էր, ոտքերը գետին խփում ու մերժում օդանավ բարձրանալ: Ճնշված ու ծննդաբերության մոտ եղող այս երիտասարդ հղի մայրը ի վերջո տեղի տվեց ու գետին ընկավ, երեսը ծածկեց ու սկսեց հեծկտալ: Հանկարծ վեց-յոթ ճամփորդ կանայք, բուլորն էլ օտար, շրջանակ կազմեցին երիտասարդ մոր ու մանկան շուրջ և սկսեցին իրենց ունեցած խորտիկները և ջուր տալ, հոգատար թևերը դրեցին նրանց վրա ու նույնիսկ սկսեցին մանկական երգեր երգել: Նրանց սիրո շրջանակը՝ հանդարտեցրեց մորն ու երեխային, որոնք բարձրացան օդանավ: Կանայք վերադարձան իրենց աթոռներին՝ սպասման սրահ, առանց իրար հետ խոսելու, թե ի՛նչ արեցին, սակայն գիտենալով, թե իրենց կարեկցությունը քաջելերեց երիտասարդ մորը, որ հենց դրա կարիքն ուներ:

Այս պատկերը գեղեցիկ է նկարագրում մի ճամբարություն 124-րդ Սաղմոսից: «Ինչպես որ նա շրջապատված է լեռներով», ասում է երկրորդ համարը, «այնպես Տերն իր ժողովրդի շուրջն է»: Այս պատկերը մեզ հիշեցնում է, թե անհանգիստ երուսաղեմը որքա՛ն կարիք ուներ պաշտպանություն՝ իրեն շրջապատող լեռներով, որոնց մեջ են Զիթենյաց, Սիոնի ու Մորիայի լեռները: Նույն ձևով Աստված Իր ժողովրդին է շրջապատում. նրանց քաջալերում է ու նրանց հոգիներին է հսկում՝ «հիմա ու հավիտյան»: Հետևաբար, դժվար օրերին վե՛ր նայիր «ու աչքերդ դեպի լեռները բարձրացրու» (Սաղմ 121.1): Աստված հզոր կերպով, հաստատ հույսով ու հավիտենական սիրով քեզ օգնելուն է սպասում:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, երբ դժվար օրեր դիմագրավենք, պաշարիր մեր հոգիները Քո մխիթարական սիրով: Ամեն:

Աստված Իր բազուկներն է տարածում մեր շուրջ՝ մեզ պաշտպանելու համար:

Կարդա՛ր
Սաղմոս 124.1-5

Ինչպես որ նա շրջապատված է լեռներով, այնպես Տերն իր ժողովրդի շուրջն է՝ այսուևիտև մինչև հավիտյան:

Սաղմ. 124.2

Պայծառ լույսեր

2015-ի ամռանը եկեղեցու խմբով Քենիայի Նայրոբի քաղաքի կեղտոտ փողոցներից Մաթարում մեր տեսածից հիասթափվեցինք: Այցելեցինք մի դպրոց՝ կեղտոտ հատակով, ժանգոտած մետաղյա պատերով ու փայտե նստարաններով: Սակայն չափազանց համեստ միջավայրի այս պատկերի առջև մի անձ մեր ուշադրությունը գրավեց:

Նրա անունը Բրիլիանթ էր, որ նշանակում է փայլուն: Որևէ ուրիշ անուն հարմար չպիտի լիներ ուրախություն ու վճռականություն ունեցող այս նախակրթարանի ուսուցչին ու իր պատշաճ առաքելությունը: Գունավոր հագուստներն ու ուրախությունը, որով սովորեցնում էր ու քաջալերում մանուկներին, մեզ ցնցեցին:

Շուրջը տարածվող նրա պայծառ լույսը նման է Փիլիպպեի Քրիստոնյաների՝ աշխարհում որևէ տեղ ուղարկվելուն, երբ Պողոսը նրանց գրեց առաջին դարում: Աշխարհի հոգևոր կարիքների պատկերի առջև Տեր Հիսուսին հավատացողները պիտի փայլեն «որպես աշխարհում լույս տվողներ» (Փիլ. 2:15): Մեր պարտականությունը չի փոխվել: Պայծառ լույսեր են պետք ամեն տեղ: Որքա՛ն քաջալերական է գիտենալը, թե Նրա միջոցով «...Աստված է որ մեր մեջ ներգործում է. կամենալն էլ, անելն էլ իր հաճություն պես» (Հմ. 13), և հավատացյալները կարող են շողջողալ այնպիսի ձևերով, որ հարմար է Հիսուսի նկարագրին: Նա դեռ մեզ ասում է. «Դուք աշխարհի լույսն եք... Ձեր լույսը մարդկանց առաջ թող լուսավորի, որ ձեր բարի գործերը տեսնեն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է» (Մատթ. 5:14-16):

Աղոթք - Տե՛ր, օգնիր, որ կարողանամ Քո լույսը իմ շուրջը ցուլացնելով Քո ուրախությունը հասցնել նրանց, որոնք կարոտ են դրան: Ամեն:

Լուսավորիր քո շուրջը Հիսուսի լույսը ցուլացնելով:

Կարդա՛ր
Փիլիպ. 2.12-18

Դուք եք աշխարհի
լույսը: Մատթ. 5.14

Ստեղծող ու պահպանող

Աշխատելով խոշորացույցով ու մագքաշով՝ շվեյցարացի ժամագործ Ֆիլիպը մանրակրկիտ բացատրեց ինձ, թե ինչպես է քանդում, մաքրում ու վերակազմում մասնագիտացված մեքենական ժամացույցների մանր կտորները: Նայելով բոլոր այդ բարդ կտորներին՝ Ֆիլիպը ցույց տվեց ինձ ժամացույցի կարևոր մասերը: Հիմնական ցայտուկը ժամացույցի այն կարևոր մասն է, որ շարժում է բոլոր անիվները, որպեսզի ժամացույցը ժամանակը ճիշտ ցույց տա: Առանց նրա նույնիսկ լավագույն ժամացույցը չպիտի կարողանա գործել: Նոր Կտակարանի եբրայեցիների նամակից մի գեղեցիկ հատվածում հեղինակը պերճախոսություններ փառավորում է Հիսուսին, որի միջոցով Աստված երկինքն ու երկիրը ստեղծեց:

Կարդա՛ Եբրայեցիներ 1.1-4

Որ նրա փառքի լույսը լինելով... և իր զորության խոսքով ամեն բան կրում է: Եբ. 1.3

Մասնագիտացված ժամացույցի բարդության պես մեր տիեզերքի յուրաքանչյուր մանրամասն ստեղծված է Տեր Հիսուսի միջոցով (Եբ. 1.2): Արեգակնային համակարգի վիթխարիությունից մինչև մեր մատնահետքերը ամեն բան Նա ստեղծեց: Սակայն Արարչից ավելի Հիսուսը ժամացույցի հիմնական ցայտուկի նման կարևոր է արարչագործության ու ծաղկումի համար: Նրա ներկայությունը շարունակաբար «իր գործության խոսքով ամեն բան կրում է» (Հմ. 3)՝ պահելով ամեն բան, որ Նա է ստեղծել՝ միասին գործելու իր հիանալի ամբողջ բարդության մեջ: Մինչ դու առիթ ունես ստեղծագործության գեղեցկությունը վայելելու, հիշիր, թե «ամեն բան Նրանով է հաստատուն» (Կող. 1.17): Թող որ Հիսուսի կենտրոնական դերի ճանաչումը, տիեզերքը թե՛ ստեղծելու և թե՛ պահպանելու համար, տա մեզ ուրախ սիրտ ու փառաբանության հոգի, մինչ արժևորում ենք Նրա շարունակական նախատեսությունը մեզ համար:

Աղոթք - Տեր, շնորհակալ ենք Քո բոլոր ստեղծածների համար: Շնորհակալ ենք նաև բոլոր այն ձևերի համար, որոնցով հոգում ես ու պահում Քո ստեղծագործությունը: Ամեն:

**Աստված ստեղծեց ամբողջ տիեզերքը:
Փառք տուր Նրան ամեն բանի համար:**

Մեծագույն նվերը

Տարիների ընթացքում ընկերուհիս՝ Բարբարան, ինձ անհաշիվ քաջալերական քարտեր ու խոհուն նվերներ է տվել: Երբ նրան հայտնեցի, թե ընդունել եմ Հիսուսին որպես իմ Տեր ու Փրկիչ, ինձ հանձնեց իր տված բոլոր նվերներից մեծագույնը՝ իմ առաջին Աստվածաշունչը: Նա ասաց. «Դու կարող ես Աստծուն ավելի մոտ լինել ու հոգեպես աճել՝ Իր հետ հանդիպելով ամեն օր, կարդալով Աստվածաշունչը, աղոթելով, Իրեն վստահելով և հնազանդվելով»: Կյանքս փոխվեց, երբ Բարբարան ինձ հրավիրեց, որ ավելի լավ ճանաչեմ Աստծուն: Բարբարան ինձ հիշեցնում է Փիլիպոս առաքյալին: Հիսուսի՝ Փիլիպոսին Իրեն հետևելու հրավիրելուց հետո (Հովհ. 1.43) առաքյալը իր ընկերոջը՝ Նաթանայելին ասաց, որ Հիսուսը Նա է, «ուժ մասին Մովսեսն օրհնքում գրեց, ու մարգարեներն էլ» (Հմ. 45): Երբ Նաթանայելը կասկածեց, Փիլիպոսը չվիճեց նրա հետ ու չքննադատեց, ոչ էլ հուսահատվեց ու հեռացավ: Նա պարզապես հրավիրեց Նաթանայելին, որ Հիսուսին հանդիպի երես առ երես ու ասաց. «Ե՛կ և տե՛ս» (Հմ. 46): Կարող եմ երեւակայել Փիլիպոսի ուրախությունը, երբ Նաթանայելը հայտարարեց, թե Հիսուսը «Աստծո Որդին է» և «Իսրայելի թագավորը» (Հմ. 49): Ի՜նչ մեծ օրհնություն, որ իր բարեկամը դուրս չպիտի մնար տեսնելու «ավելի մեծ բաներ» ու լինե՞ր Տեր Հիսուսի վկաներից մեկը (Հմ. 50-51): Սուրբ Հոգին նախաձեռնում է մեր մտերմիկ հարաբերությունը Աստծո հետ ու ապա թողնում է, որ մենք հավատքով շարունակենք մեր կապը: Նա մեզ կարողություն է պարգևում, որ Նրան անձնապես ճանաչենք և ուրիշների հրավիրենք, որ Նրան հանդիպեն Իր Հոգու ու Խոսքի միջոցով: Հիսուսին ավելի լավ ճանաչելու հրավերը մեծ պարգև է՝ ստանալու և ուրիշներին տալու:

Աղոթք - Տեր, շնորհակալ եմ, որ ինձ ընդունել ու Քո զավակն ես դարձրել: Օգնիր, որ ես էլ ուրիշների հրավիրեմ, որ Քեզ գան: Ամեն:

Տեր Հիսուսին ճանաչելը մեծագույն պարգև է:

Կարդա՛ր
Յովհաննես 1. 43-51

...գտանք Յովսեփի
որդի Հիսուսին՝
Նազարեթից:
Յովհ. 1.45

Նյութերի ցանկ

Ազոթք	2,27, փետր. 7,13,18
Անարդարություն.....	Հուն. 27, մարտի 22
Անձկություն.....	Հուն. 28, փետր. 15
Առանձնություն.....	Փետր. 12
Առաջնորդություն.....	Մարտի 19
Աստվածաշունչ.....	Հուն. 26, փետր. 10, 26, մարտի 2
Աստծու հետ հաղորդակցություն.....	Փետր. 25
Աստծու հոգածությունը.....	Փետր. 22, մարտի 4,23
Աստծու սերը.....	Հուն. 11,17, փետր. 12, մարտի 14,21,28
Աստծուն սպասել.....	Մարտի 7
Աստծուն վստահել..	Հուն.14,20, փետր.5,15, մարտի 11,15,17
Ավետարանչություն.....	Մարտի 19,29,31
Դրախտ.....	Փետր. 9, մարտի 25
Եկեղեցի/Միություն.....	Հուն. 13
Երջանկություն.....	Հուն. 1, մարտի 18
Ինքնապատկեր.....	Մարտի 14
Ծառայություն.....	Հուն. 1,5,12,16, փետր. 21, մարտի 25
Կասկած.....	Հուն. 29
Կյանքի պայքարներ.....	Հուն.18,25, մարտի 18,23
Համբերություն.....	Մարտի 26
Հանգստություն.....	Փետր. 24, մարտի 7
Հավատք.....	Փետր. 14
Հարաբերություններ.....	Փետր. 28
Հեզություն.....	Փետր. 11,19, մարտի 16
Հիվանդություն դիմադրել.....	Հուն. 15, փետր.18, մարտի 3,20
Հնազանդություն.....	Հուն. 7,23,26, փետր. 3
Հոգ տանել ստեղծագործության.....	Մարտի 27
Հոգևոր աճում.....	Փետր. 3,17, մարտի 31
Հոգու կերպարանափոխությունը.....	Հուն. 4,5, փետր.6,9, մարտի 16
Հոգու պտուղը.....	Մարտի 8
Հույս.....	Հուն. 14,15,29

Հուսահատութիւն.....	Մարտի 15
Մահ.....	Փետր. 8
Մատակարարութիւնն և տալ.....	Հուն. 24
Մեղք.....	Փետր. 2, մարտի 11
Մեքերի թողութիւն.....	Հուն. 3, փետր. 2,28
Մտահոգութիւն.....	Հուն. 8, մարտի 12
Մրցակցութիւն.....	Մարտի 5
Նախանձ.....	Մարտի 1,5
Ներել ուրիշներին.....	Փետր. 1,28, մարտի 22
Շնորհակալութիւն.....	Մարտի 1
Ուրիշ հավատացյալների հետ ապրել.....	Հուն. 13
Պաշտամունք.....	Հուն. 18,21,28, փետր. 27, մարտի 20,24
Սեր Աստծու հանդեպ.....	Փետր. 4
Սեր ուրիշների հանդեպ.....	Հուն. 10, փետր. 16,23, մարտի 19,16,21
Սեր և ամուսնութիւն.....	Հուն. 19
Ստեղծագործութիւն...Հուն. 21,30, փետր. 24, մարտի 27,30	
Սուրբ Հոգի.....	Մարտի 22
Վախ.....	Մարտի 17
Վարդանանց.....	Փետր. 8
Տանջանք.....	Մարտի 3
Տոներ.....	Մարտի 7
Ցեղապաշտութիւն.....	Հուն. 10
Փառաբանութիւն.....	Հուն. 25
Փրկութիւն.....	Հուն.31, փետր.6, մարտի 10,13
Քաջալերութիւն.....	Փետր. 7, 17, 20, մարտի 3
Քրիստոս՝ Փրկիչ.....	Հուն. 9, փետր. 4, մարտի 30
Քրիստոսի ծնունդը.....	Հուն. 6
Քրիստոսի համար ապրել.....	Հուն. 7, մարտի 6
Քրիստոսի հարութիւնը.....	Փետր. 14
Քրիստոսի նման ապրել.....	Հուն. 4,22,23, փետր. 10,23, մարտի 29

Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս
գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անուննե-
րը գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ
հասցեով՝

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռախոս՝ (010) 54-35-76, (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7^ա

Հեռ. (374) 94 52 75, 95 02 95

Անուն, ազգանուն

Հասցե.....

.....

Հեռախոս.....

Նշումների համար

Նշումների համար



Գրքույկը ստանալու համար դիմել Ամերիկայի Հայ
Ավետարանչական ընկերակցության Հայաստանի
մասնաճյուղ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am

Էլկայք՝ www.amaa.am